Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Vmh V
363

1999 ՄՄ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց

ԱՐԱՐԵԱԼ

ԹՈՎՄԱ. Վ. ԱՐԴԱՊԵՏԻ ՄԵԾՈՐԵՑԻՈՅ

Ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ

Կարապետ Վարդապետ Տահնազարեան՝ վիրապետ որդոյ Էջմիածնի եւ Սեղբաւ Տեառց Լազարեանց կայսերական ճեմարանին որ ի Մոսկվայ։

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅՈՑ Հ. ՍԱՆԱՆՑԻՆ

Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ Կ. Վ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Սահ
3b3

L. 8360

Г. 363

ԹՈՎՄԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԵԾՈՐԵՑԻ

ԵՒ ՊԱՏՄԱԳԻՐՔԻՐ։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

ՅԵԼՍ ԺԴ դարուն ծաղկեցան ի մեծն Հայս, մանաւանդ, շուրջ զծովակաւն Վանայ այլ եւ այլ կուսաստանք ուր ժողովեալ հոգեւոր եւ գրական վանականաց կրթէին զանձինս յաստուածութիւնս հոգեւոր եւ ի մտաւոր։ Մի ի սրբազանաց աստի էր վանքն Մեծոցայ ի սահմանս Արճէշ քաղաքի նուիրեալ սուրբ կուսին Աստուածածնի։ Թովմա էր յԱղիովիտ գաւառէ եւ ի Գաչբերունեաց գեղջէ, որ միաբանեալ Մեծոցայ վանից՝ ձեռնադրեցաւ վարդապետ. եւ երեւելի հանդիսացաւ յուսումնասիրութեան եւ ի մշակութեան Աւետարանին և գործակից եղեւ փոխադրութեան հայրապետական աթոռոյն մերոյ ի Սսայ ի Սուրբ Էջմիածին։ Գտաւ ի ժողովն Վաղարշապատու յամի 1441 ուր Կիրակոս Վիրապեցի ընտրեցաւ Կաթողիկոս նորոգեալ աթոռոյն։ Սատ դարձրի եւ թել պատմութեան տառապանաց Հայաստանի, զոր սկսեալ էր արձանագրել հեղինակ մեր ի յիսներորդ ամի կենաց իւրոց. որ եւ եօթն ամօք

ցկնի հանգեաւ ինքնին ի Քրիստոս՝ յոյսն հաւատացելոց, այսինքն է ի 1448 ամի Տեառն ։

Թովմա թէեւ կարդայ զգիրս իւր պատմութիւն Լանկ-Թամուրայ. այլ առ համեմատութեամբ զրելոյն ի Շերեֆ-Էդդինայ այլազգւոյ, կարի համառօտ է իւրն ։ Վասն զի այլազգի պատմագիրն զրեայ մանրամասնաբար զծաղմանէ բռնաւորին Լանկ-Թամուրայ, զսոսկալի կոտորածոյ նորա ի Պարսս, ի Հնդիկս, ի Բաղդատ, ի Դամասկոս, ի Ռուսիա, ի փոքրն Ասիա, ի Հայաստան, ի Վիրս, ի Թուրքաստան, և յերկիրս Ղպչաղայ առ Վոլգայիւ և Դոնիւ. իսկ Թովմա զայն ամենայն հարեւանցի յիշեալ՝ ընդարձակագոյնս խօսի զաւերմանց, զգերութեանց, զսպանութեանց վիրապին այնմիկ յաշխարհի մերում, զորովք զանց արարեալ էին մեծաւ մասամբ օտար զրիչք. յայս տակս կարեւոր է յոյժ մատենիկս առ ուսումն տոհմային պատմութեան մերոյ ։

Տպագրութիւն մատենիս եղեւ երկուց օրինակաց համեմատութեամբ, յորոց զմին զգուշաւոր ինամօք օրինակեալ էի ես ինքնին ի մատենադարանի Սրբոյ Էջմիածնի, զմիւսն ես ինձ կայսերական դրատունն Գաղղիոյ զոր ստացեալ էր ինքնին յՈւխտէն պատուեալ Հարց Մխիթարեանց Վենետիկոյ արարեալ համեմատութեամբ չորից օրինակաց ։ Տարբերութիւնքն, իբրեւ դրչութիւն, դոյզն իմն էին ընդ եր-

կուս օրինակս. այլ Թովմա, իբրեւ պատմագիր, տարաձայնի ոչ սակաւ ի վէպս իւր, յայլազգի պատմագրաց, յորոց զկարեւորսն նշանակեցի ի ծանօթութիւնս ի վերջ կուսէ գրոցս։

Թովմա Մեծոբեցի որ ի 400 ամաց հետէ պահիւր ի խորշս գրատանց, ծանօթացաւ Եւրոպիոյ զառաջինն ի ձեռն Պարոն Ղեվի (զոր չեղեւ ինձ տեսանել երբէք)։ Ես եւս ընծայեմ արդ ի լոյս զբնագիրն նորին ունելով ի մոի, եթէ Տէր յաջողեսցէ, թարգմանել զայն ի բարբառ գաղղիական։

Զերկայն խորագիրն «պատմութիւն համառօտաբար վասն արեւելեան թագաւորացն՝ ազգն եւ չար գաղանին Լանկ-թամուրայ եւ այլոցն, զոր արարեալ է քաջ վարժապետն Թովմա վարդապետն» համառօտեցի «ի պատմութիւն Լանկ-թամուրայ եւ յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծոբեցւոյ»։ Զայլազգի բառս վարեալ յայս մատեան բացատրեցի հայկականօքն։

Կարապետ Վ. Եահնաղարեան։

1 Յունիսի 1860։

Պարիս։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՆԿ-ԹԱՄՈՒՐԱՑ(1)

ԵՒ ՅԱՋՈՐԴԱՑ ԻՒՐՈՑ

Պա՛տ է գիտել ուսումնասիրաց և բանասիրաց անձանց զի ժամանակն բաժանի յերեք՝ յանցեալն, ի ներկայն և յապառնին։ Եւ վարդապետաց եկեղեցւոյ պիտոյ է վասն երիցն գիտելոյ. վասն անցեալն պատմել, վասն ներկային խօսիլ, վասն ապագային խմանալ և զգուշացուցանել։ Ամենապէս և մեզ պա՛տ է սակաւ մի համառօտաբար վասն ներկայիս, զոր ի մերում ժամանակիս եղեւ, պատմել, զոր չար թագաւորքն անհաւատք Արեւելից կորուստ բերին Հայկազեան տոհմս ի վերջին ժամանակիս, և ամենայն օտարացեղ ազգաց յուցանել։

Արդ՝ այր մի Թամուր-ղանկ անուն, դաւանութեամբ և օրինօք պղծոյն Մահմետի՝ նեռին կարապետի, յայտնեալ երեւեցաւ ի յարեւելս և ի Սմըրղանդ քաղաքի, անողորմ, անզութ, անագորոյն, լցեալ ամենայն չարութեամբ, պղծութեամբ և հնարիւք բանարկուին սատանայի։ Զոր ոմանք ի Սարդա-

փու (2) ասեն գոլ զնա, որ ի գաւառն Կոդովիտ՝ մերձ ի լեառն Մասիս ուր տապանն է Նոյի և մերձ ի յԱրտատ գաւառ : Որ գնացեալ ի Թաւրէզ. և Ղանտրէյին (3) յղեալ զնա առ ի քէշիկս (պահակ) պահել զթշնամիս ի ճանապարհին Խորասանու : Եւ նորա եկեալ անտի գնաց ի Խորասան. և անտի անցեալ զգետն Ջահուն. և ընթացեալ ի Սմրղանդ քաղաքն Արեւելից. և տեսեալ անտերունչ զաշխարհն ամենայն, եղեւ աւազակապետ և գլուխ մարդասպանից : Եւ ժողովեցան առ նա ոգիք հինգ հարիւր հնգետասան (4) աւելի կամ պակաս՝ չար և նման ինքեան : Եւ երթեալ դաղտագողի ի յանդաստան քաղաքին եւ յափշտակեալ զերամակ նոցին՝ առեալ գնացին : Եւ իշխանք քաղաքին եկեալ զհետ նոցա պատերազմել. եւ նոցա յետս դարձեալ պատերազմեցան. հարին զնոսա և սպանին. և մտեալ ի քաղաքն՝ առին զտէրութիւն քաղաքին , եւ զկին նորա Խանում անուն տիկին նորին. և սակաւ սակաւ զօրացեալ՝ էառ զԲուխարայ քաղաք . եւ անցեալ յայնկոյս Ջահուն գետոյն և մտեալ յերկիրն Խորասանու՝ առնոյր զբազում քաղաքս նոցա և կոտորէր սրով զամենեսին : Եւ ահ և երկիւղ անկեալ ի վերայ նոցա՝ ետուն զաշխարհն ի ձեռս նորին :

Եւ նա զոմանս խաբէր սուտ կաշառօք, ոմանց երդնոյր, զոմանս որդեդիրս առնոյր, ոմանց զդլս-

տերս իւր ի կնութիւն տայր, և դատերօքն սպանանէր զիւեսայն։ Որ և (էառ) զՀրէ քաղաքն Թագաւորանիստ. եւ զդուստր իւր իշխանի նոցա, եւ կացեալ զաւուրս ինչ առ նա՝ սպան զայր իւր սրով. և յղեաց առ հայրն դալ առնուլ զքաղաքն. և նորա գնացեալ էառ և արար քաղաք Թագաւորական։

Իսկ իշխան ոմն Շահ-Մանսուր (5) անուն ընդդէմ կացեալ նմա աւելի քան զութն ամ. և ոչ տայր ի նա զՇիրազ, զՔիրման և զՍպահան։ Եւ պիղծն Թամուր խաղաղութիւն արարեալ ընդ նմա, եւ հնարիւք յետս դարձեալ ընդ Սրեւելս. և Շահ-Մանսուրն դեսպան և աղերս առաքեալ նմա բաղում յոյժ։ Եւ նորա տեսեալ զեկեալ դեսպանն՝ սուտ հիւանդ անկեալ, եւ բերել զառն մի, և զենին զնա, և էարբ զարիւն դառինն։ Եւ հրամայեաց կոչել զդեսպանն ի մէջ բազմութեանն, և ասոյց զդէմս երպարանաց իւրոց իբրեւ զմեռելոտի։ Եւ եւ բերել զանօթ պղնձի և դարձոյց յետս զարիւն դառին առաջի ամենայն բազմութեանն։ Եւ եկեալ դեսպանին տեսեալ՝ յոյժ ուրախ լինէր ի միտս իւր, եւ ասէ. այսօր և վաղիւն սատակի։ Եւ ի գիշերին այնմիկ եղեալ ի ձի (6). և հասեալ առ Շահ-Մանսուր իշխանն և [illegible] աշխարհին եւ աւետիս ուրախութեան. և արայիշ մեծ արարին այսինքն է հանդէս։ Եւ ամենայն մարդիկ աշխարհին, որ կային ի նեղու-

թեան, ի քաղց, ի ծարաւ և ի վտանգ տագնապին՝ եկեալ ցրուեցան յիւրաքանչիւր բնակութիւնս ուստի եկեալ էին ։

Իսկ Հարամնարն Թամուր պատրաստեաց զզօրս իւր. և զերից և զչորից աւուրց երթեալ ճանապարհն ի միում աւուր՝ եկեալ հասանէր ի դուռն քաղաքին ։ Եւ ի պատերազմ եկեալ ի վերայ նոցա՝ ի սակաւ աւուրս կոտորեցին եւ յաստուած բերին զամուրս նոցին ։ Իսկ արին Թահ-Մանուր պատպնդեալ ապատպիններաց զզօրս իւր 800 (7) ոգի ։ Յանկարծակի բացեալ զդուռն քաղաքին, և մտեալ ի մէջ անթիւ և անհամար զնդին մինչ զի հասին ի նոյն տեղին, ուստի Թամուր ժողովեալ էր զամենայն գունդ Սրեաց հեծելին ։ Եւ վերացուցեալ զսուրն իւր ի վերայ գլխոյ սատանայի զաւակին. և զօրացն ապարտիսկ արարեալ՝ ոչ կարացին ազատանել զպիղծ վիշապն անդնդային ։ Սակայն շրջապատեալ զօրացն նորին՝ զամենեսեան առ հասարակ կոտորեցին պրոլ. և այսպէս առին զամենայն աշխարհն Խորասանու՝ զԲահլ քաղաք, զԽորասան, զՇիրազ, զԲիրման, զԱսպահան, զՆիշապուհ, զԿուրան, ըստ Մակուրան, զԹուս, զԹանջան, զԹամղան, զՄազանդարան, զՈՒ, զՂազուին [illegible] հասին մինչ ի Սուլթանիա ի սահման Աստրպատականին Թաւրիզ։ Եւ Եղիլ անուն Սուլթանից իշխանին գնաց-

եալ ընդ առաջ նորա զանձուք և թագաւորական աղերսիւք՝ հաշտութիւն արար ընդ նմա։

Եւ զանն Թաւրիզու սուլթան Ահմատն եղեալ զնայ փախստական ճանապարհաւն Ռշտունեաց Ոստանու, առաջնորդութեամբ ամիրային Մարայ Եղբնայ ի Բարիլան քաղաք, որ այժմ Պաղտատ կոչի, առ աղգականս և զօրս իւր. զի ի նոյն ժամանակին և նոցա տիրէին։ Իսկ Եղիկն ասայեալ առաջնորդեալ Թամուրին ի Թաւրէզ քաղաք՝ ետ ի ձեռս նորին։ Եւ զաղտագողի խորհուրդ արարեալ ընդ զօրս իւր կամէր ապանանել զնանին և զկարն (8) Թամուր ի բաղանիս քաղաքին։ Եւ մի ոմն իմացեալ զխորհուրդն՝ ծածուկ եկեալ առ նա ասէ զդառնենդութեան Եղիկ ազային։ Եւ նորա զիտացեալ՝ յղեալ կոչէաց զնա. և հուր ետ վառել. և Եղին կենդանոյն ի պղնձի ան եւ եփեցին առաջի նորա եւ ամենայն բազմութեանն. և այնպէս կորուսին զնա։

Դարձեալ և այս գիտելիք. զի նախ քան զդալ Թամուրին ի յաշխարհս մեր, ի 835 թուականին թագաւորն հիւսիսոյ Թոխթամիշ անուն՝ տէրն Ռուսաց և Սզախի, որ նստէր ի Սարայ մերձ ի Ղրիմն, առաքեաց զեսպան առ զանն Թաւրիզու սուլթան Ահմատ անուն՝ որդի Օսխին, վասն սիրոյ և խաղաղութեան. իսկ նա չար և պիղծ գործովք խայտառակեաց զնա։ Եւ զեսպանն գնացեալ առ նա՝

պատառեալ զօձին իւր առաջի նորա : Եւ նա բարկութեամբ լցեալ առ ինքն կոչեաց զիշխան մի
19/. ճանիրէկ անուն, և ետ բաղում զօրս ի ձեռս նորա : Եւ նա զրամբն Սլանայ եւ Դարբանդի եկեալ ի վերայ նորա : Եւ նա խոյս ետ ի նմանէ և եկն յՈստան. և անտի գնացեալ ի Պաղատատ : Եւ զօրքն հիւսիսոյ պաշարեցին զԹաւրէզ, և աւուրս եօթն պատերազմեալ առին զԹաւրէզ. զբազումս սպանին, զբազումս կողոպտեցին և յաւարի առին զամենայն զաւառս նորին : Եւ անտի չուեալ ի Նախճուան քաղաք և յամենայն երկիրն Սիւնեաց՝ երկոտասան զաւառս աւերեցին. զբազումս սպանին և գերեցին : Եւ էին յաւուրս ձմերայնոյ : Իսկ ի հրամանէն Աստուծոյ յանկարծակի ձիւն սաստիկ եկն ի վերայ նոցա յաւուր Յայտնութեան Տեառն մերոյ. եւ բազումք զերծան ի գերութենէ նոցին : Եւ զբազումս ման աւարին ի բաց ընկեցեալ՝ գնային յաշխարհն իւրեանց նոյն ճանապարհաւն, ուստի եկեալ էին անասնաբարոյ ազգն Թաթարաց որ Տղրոզան (9) կոչէին՝ խաղաղութիւն արարեալ երկրին Շամախւոյ վասն դի բացին զդուռն Սլանայ խաղաղութեամբ ընդդէմ նոցին :

Իսկ ի սոյն ժամանակի էր երջանիկ և երանելի վարդապետն Հայոց Յովհաննէս՝ մականուն Կախի՛ կախեալ ի սէրն Աստուծոյ՝ դոլով ի գաւառէն Որոտ-

նոյ ի գեղջէն Վաղանդնու՝ որդի մեծի իշխանին Իվանի, որ էր ի զարմէ առաջին իշխանացն Սիւնեաց, յորմէ Վասակն էր, զոր չարախօսեցին առաջի Պարսից թագաւորին Յազկերտի թէ՝ զհօրեղբայրն մեր Վաղինակ ապստամբէ, յոյժ խնամուն և զիտնական հին և նոր Կտակարանաց, լուծիչ Սատանայի նրբից և արտաքնոց, յաշակերտաց մեծին Եսայեայ և Տիրատրոյ վարդապետաց մերոյ։ Որ (10) ժողովեաց առ ինքն զբազում աշակերտս յաւանդաց գաւառաց և լուսազարդեալ պայծառացոյց զազգս Հայոց վարդապետօք և քահանայիւք, գեղեցիկ կարգաւորութեամբ եւ ուղղափառ դաւանութեամբ։ Անուանդ տիւ և գիշեր մտքառելով ընդդէմ քրիստոնէից աղթարմային գաւառին Երնջակու։ Եւ ի սոյն աւուրս հանդէաւ ի Քրիստոս, և խաւարումն եղեւ աշխարհիս Հայոց։ Եւ բարձեալ աշակերտաց իւրոց՝ տարեալ եղին յԵրնջակայ վանան մերձ աւրբ ճգնաւորին Սաղաքիա՝ աշակերտին իւրոյ, որ էր նա ի ծովահայեաց քաղաքէն Ղրիմայ՝ յոյժ մեծատան որդի։ Եւ թողեալ էր զժառանգութիւնն և եկեալ առ մեծ վարդապետն Յովհաննէս։ Եւ առեալ ի նմանէ զվարդապետական իշխանութիւն՝ եկն ի Ղախճուան գաւառ, շինեաց զվանորայս Հայոց և բազում հակառակութիւնս կրեաց յաղթարմայից սուտ քրիստոնէից. եւ

մահ մարդուր քրիստոնէից ազգի, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի, և աղօթք նոցա ի վերայ աշխարհի : Եւ մաղթանօք տրա Տէր Աստուած ամենայն ազգիս մեր ողորմեսցի : Եւ մահ տրա երեք ամաւ յետոյ է քան զճգնաւորին Մաղաքիայ :

Եւ յաջորդեաց յաթոռ տրա քրիստոսածաւալ ազգիւրն և անմուտ արեգակն՝ երկրորդ լուսաւորիչն Գրիգորիոս վարդապետն Տաթեւայի հաւանութեամբ և կամօք մեծ վարդապետին Սարգսի տուրբ ուխտին Խառաբատայ և համշիրակ եղբարց իւրոց Յակոբայ Սաղմոսավանիցն Աբրահամեան գաւառին և Գէորգայ Երզնկայեցոյ և ամենայն աշակերտաց գնդին՝ Յովհաննէս վարդապետին Մեծոբայ, Յակոբայ եւ Մխիթարայ Ռշտունեաց : Այսքան առ այս :

Դարձեալ դարձյուր յառաջիկայ պատմութիւնս ալիզ թագաւորին Աբեւելից : Յ836 թուականին մեր առեալ էր զաշխարհն Խորասանու ութամեայ պատերազմաւ. և անտի չուեալ եկն էառ զԳանձակ շահաստանի քաղաքն Թաւրէզ : Եւ անտի չուեալ եկն յերկիրն Սիւնեաց ի վերայ գղեկին Երնջակու. եւ ապա ի վերայ երկրին Ճակատուց՝ էառ զքաղաքն տուրբ Մարի ի հիմանց տապալեալ զամուրն մեր զոր էր ամրափակեալ պատուական ազգին Բագրատունեաց. եւ դերեայ զքաղաքն եւ զամենայն շըր-

363

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. КУВА. ВИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-ԱՅԲ-ՍՍՌ

մահ մաքուր քրիստոնէից ազգի, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի, և աղօթք նոցա ի վերայ աշխարհի : Եւ մաղթանօք տրա Տէր Աստուած ամենայն ազգիս մեր ողորմեսցի : Եւ մահ տրա երեք ամաւ յետոյ է քան զճգնաւորին Սաղաքիայ :

Եւ յաջորդեաց յաթոռ տրա քրիստոսածնաւալ ազգիւրն և անմեռ արեգակն՝ երկրորդ լուսաւորիչն Գրիգորիոս վարդապետն Տաթեւայի հաւանութեամբ և կամօք մեծ վարդապետին Սարգսի տեղեակ ուխտին Խառաբատայ և համշիրակ եղբարց իւրոց Յակոբայ Սաղմոսավանիցն Աբրահամեան գաւառին և Գէորգայ Երզնկայեցոյ և ամենայն աշակերտաց գնդին՝ Յովհաննէս վարդապետին Մեծոբայ, Յակոբայ եւ Մխիթարայ Ռշտունեայ : Այսքան առ այս :

Դարձեալ դարձցուք յառաջիկայ պատմութիւնս ոլոր թագաւորին Աբեւելից : Յ836 թուականին մեր առեալ էր զաշխարհն Խորասանու ութամեայ պատերազմաւ. և անտի չուեալ եկն էառ զԳանձակ շահաստանի քաղաքն Թաւրէզ : Եւ անտի չուեալ եկն յերկիրն Սիւնեաց ի վերայ գղեկին Երնջակու. եւ ապա ի վերայ երկրին Ճակատուց՝ էառ զքաղաքն տեղի Մարի ի հիմանց տապալեալ զամուրն մեր զոր էր ամրակեալ պատուական ազգին Բագրատունեաց. եւ գերեաց զքաղաքն եւ զամենայն շըր-

363

ՊԵՏ. ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. КУБА. ВНЕБАНОТЕКА
ՀԱՍՏ-ԱՅՐ.ՊՈՍ

Չակայ գեղջրայն : Իսկ բարեպաշտ տանուտէր մի Մարտիրոս անուն՝ յոյժ զօրեղ զօրական, ողորմած և աղքատասէր ի գեղջէն Կողբայ, եկեալ ի լեառն Բարդոզ, որ կոչի յայլոց ազգաց Թակալթու, յոյժ արի և քաջ մանկամբք գեղջն ապրեցոյց զամենայն հաւատացեալսն մեծաւ պատերազմաւ և սրատալինդ զօրութեամբ օգնութեամբ հզօրին Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ : Եւ թէպէտ բազում անգամ պատերազմեալ՝ ոչ կարացին առնուլ ըզ լեառն զայն : Որ յետոյ այրն այն նահատակեցաւ ի պիղծ Թուրքմանէն Սահաթ անուն, հեղձուցեալ ի Ջուրն Սրազու անտես ի մարդկանէ : Ի սոյն ժամանակի կորեաւ տուրբ նշանն Գեոարգեայ որ էր ի միայտէն կենաց տուեալ պարգեւ տուրբ Լուսաւորչին Գրիգորի ձեռամբ որոյն Սեղբեստրոսի : Զի երկու կրօնաւորք ի տուրբ ուխտէն Կաղզվանայ տուրբ հօրն Վարդիկ տարեալ պահեցին դաղտնի : Եւ Զաղաթայն ի վերայ հատեալ՝ զերկոսեանն այլ ապանին. եւ այլ ոչ ոք գիտայ զտեղին : Եւ զի բազում անգամ յետոյ որոնեալ զտեղին եպիսկոպոսք նոցին՝ ոչ կարացին գտանել. եւ սուգ մեծ եղեւ ամենայն Հայոց :

Եւ անտի չուեալ եկին յերկիրն Սրարատեան եւ Կարբու և յերկիրն Կոտայից. և խաչարեալ (պաշարեալ) զամուրն Բջնոյ՝ էառ զնա և ապան զեպիսկո-

պրս աշխարհին զՏէր Վանական, որ էր այր խոնա-
տուն և զիտնական, ողորմած և զթած ամենայն
աղքատաց։ Եւ զայլ ամենայն բազմութիւն հաւա-
տացելոց չարչարէին տանջանօք, սովով, արով,
գերութեամբ, անտանելի չարչարանօք և անպո-
րոյն բարուք անմարդաձայն արարին զամենայնս
զաւառն Հայոց։ Եւ բազում նահատակութեան
հաին և պատկոց արժանացան, զորս Հանդիսարքին
Քրիստոսի Աստուծոյ մերոյ միայն է գիտելի, որ
պատկէ զնոսա յաւուրն հատուցման արդարոցն զըն-
դից. ամէն։

Եւ առեալ զառ և զաւար և զգերին անթիւ, զոր
ոչ ոք կարէ ճառել զաղէտս և զպառնութիւն մերոյ
ազգին։ Եւ ընթացեալ բազում զօրօք ի Փայտա-
կարան Տիզիս քաղաք՝ էառ զնա և գերեաց անթիւ
և անհամար։ Եւ կարծիք է թէ ապանեալն յոլով էր
քան թէ ապրեալն. որ և անդ պատահեալ վարդապետն
Ստեփաննոս, որ մականուն Փիր, մաղապուրծ եղեալ
ի սպանմանէ։ Իսկ թագաւորն Վրաց Բագարատ
անուն յազգէ Հրէից, որք գերեցան յաւուրս թագա-
ւորացն Բաբելացւոց, և բերեալ յազգս մեր՝ ի ձեռն
Լուսաւորչին ի Քրիստոս հաւատացին և թողեցան
ընդ իշխանս մեր։ Եւ թագաւորք եղեն յետ ցեղին
Արշակունեաց Անուն և ամենայն Հայոց։ Եւ
նեղութենէ անօրինաց փախուցեալ ի տունն Վրաց՝

եղեն ուրայոյզք ճշմարտութեան եւ հաւատով քաղ-
կեդոնիկք ։

Եկն սա բազում ընծայիւք ի հնազանդութիւն
ալիզ թագաւորին. և նա լցեալ չարութեամբ սա-
տանայի ուրայոյց զնա, եւ առեալ զնոյց ի Ղարա-
բաղ՝ ի ձմերոյն առաջին թագաւորայ մերոյ ։ Իսկ
թագաւորն Վրաց, լցեալ խնամութեամբ Հոգւոյն
սրբոյ՝ խաբեայ զնա և ասէ «տո՛ւր ինձ զօրս բազում
զի երթայց ի տուն Վրաց, առեայ զաշխարհն ամե-
նայն և դարձուցից ի կրօնս ձեր զի ութն լեզու է
ազգն. զամենեսեան ի հնազանդութիւն և յօրէնս քո
բերիցս» ։ Որ են այսոքիկ Դրալ, Օսէդ, Իմերէլ Մէկ-
րէլ Ափխազ, Սօնք, Վրացի, Մեսխ (11)։ Եւ նա
ուրախացեալ խրախեաց (12) զնա բազում պատուով
եւ եառ ի նա զօրս բազումս ։ Եւ նա յարուցեալ ան-
թիւ զօրօք՝ եկն ի տունն Վրաց ։

Իսկ Բագարատն այն յղեայ դաղտաբար առ
որդիսն իւր Գորգի, Կոստանտին և Դաւիթ զալ
ծածուկ ընդ առաջ նորա օգնել ծնողին զի կարասցէ
փախչիլ ի ձեռաց նորա ։ Եւ իւր առեալ զզօրս Զա-
զրամթային բերեալ ի նեղսադոյն և ի կածան տեղիս.
և որդիք թագաւորին առեալ զճանապարհ ընթա-
ցիցն՝ սուր հանեալ կոտորեցին զբազումս ի նոցանէ
աւելի քան զ12,000, որպէս ասեն. և առեալ զհայրն
իւրեանց զնային ի բնակութիւնս իւրեանց ։ Իսկ

զկոչ բռնաւորն Թամար ի զարնանային եղանակին առեալ զլօրս իւր՝ զաղտուցար եկն ի վերայ Թուրքմանին Ղարայ Մահմատին։ Եւ նորա զիտացեալ՝ փախեաւ ի նմանէ։ Եւ նա արագընթաց արշաւմամբ, իրրև զայծեամն զրաղում՝ աւուրց ճանապարհն ի տակաւ աւուրս (հատեալ)՝ եհաս ի վերայ նորա ի գաւառն Ճորոպէրոյ։ Եւ նա յետս դարձեալ՝ մոլի դարձեցաւ. զի հարեալ վանեցին զկոչ բռնաւորն, եւ ըզ գլխաւորն զօրայ նորա Լօրմաղան անուն ապանին և այլ բազում զօրս ընդ նմա։

Եւ նա յետս դարձեալ եկն յերկիրն Տարօնոյ Մուշ կոչեցեալ. իսկ երկիրն Բաջքերունեաց Սրճէշ եւ Սղոմիա, տունն Խորխոռունեաց հնագոյն եւ քաղաքն Մանազկերտ, Հարքնիս խոյս տուեալ ի Զաղթայէն եկեալ հասին յերկիրն Պաղունեաց ի գաւառն Տարօնոյ՝ ի քնարան տէրն Կարապետին Յովհաննու և Սթանդինեայ ի մեծահանդէս մայրաքաղաքն ի վանան Գլակայ Սուրբ Զենոբայ վարդապետին։ Եւ դրոհ տուեալ խումբ առեալ եկեալ ամենայն բազմութիւն Քրիստոնէից յերկրաստադութիւն տէրն տեղեացն Կարապետին Յովհաննու և Սթանդինեայ հայրապետին և տէրն ճգնաւորացն Անտոնի եւ Կրոնիդեայ և եօթն խոտաճարակացն։ Եւ վարդապետ ոմն Սահականոս և

եպիսկոպոս ոմն անուն Ներսէս ի գաւառէն Արճշոյ, ի սուրբ ուխտէն Մեծոցայ, և ճգնաւոր վարդապետն Յակոբ, և Աբգար եպիսկոպոս սուրբ ուխտին վառեալ յորդորեցին զամենեսին ի սէրն Աստուծոյ և ի պատիւ սուրբ Կարապետին խոստովանիլ զմեզ իւրեանց և հաղորդիլ փրկական մարմնոյ և արեան Տեառն, և տօն մեծ կատարել, և ողորմութեամբ և ընծայիւք պատարագօք զբազմութիւն կրօնաւորաց սուրբ ուխտին վերիթարել։

Իսկ եպիսկոպոսն Տէր Աբգար և վարդապետն Յակոբ աւելի սիրով ընկալան զուխտաւորսն մեր. և աղօթս արարեալ բազում աւուրս բարեխօսութեամբ սրբոյն Յովհաննու և ամենայն սրբոց օգնական լինել նոցա և ազատել ի գերութենէ չար բռնաւորին։ Իսկ զօրք Թուրքմանին կողոպտեցին զամենայն քրիստոնեայս մեր հրամանաւ Յուսիոյ բռնաւորին. և զմնացեալն ի յընչից և զամենայն բազմութիւնն եւոն յերուշխի յամիրայն Խութայ չէին Տարագ անուն։ Եւ նա տեսեալ բռնութեամբ անցոյց ի գետն Եփրատ, և բերեալ մերձ ի գիւղն Հասդեղ։ Եւ քրիստոնէիցն ապաստանեալ ոչ կամէին ելանել ի լեառն Խութայ եւ Սասնոյ. այլ նոցա տեսեալ կամէին դնալ յաշխարհն իւրեանց։ Իսկ նա բռնութեամբ և հարկանելով՝ ի խնամոյ ողորմութեանն Աստուծոյ եհան զմեզ զառ ի վերս լերինն Խութայ։ Եւ

նոյն օր հասին զօրք Զաղաթային ի վերայ մեր։ Իսկ ողորմածն Աստուած, որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ, և զաղօթս նոցա լսէ՝ բարեխօսութեամբ սուրբ Կարապետին և ամենայն սրբոց եհաս մեզ ի յօգնականութիւն. զի Թուրքմանն Փիր Հասան անուն որոշեալ ի Ղարայ Մահմատէն այն, որ յետ ժամանակի ապան գնա և զորդին Բայրամ անուն, ի լեռնէն ի վայր իջանէին, և մեք ի լեառն ելանէաք։

Եւ նոյնժամայն յանկարծակի գոյժ դառնութեան և բօթ մահաբեր եկն եհաս առ մեզ եթէ՝ զօրք Թուրքմանին էառ զվերջ Հիլանբուրանին։ Ասա էր տեսանել զաղէտս տարակուսանաց ամենայն զընդին. զի հայրն զորդին ուրացաւ, և որդին՝ զհայրն. մայր՝ զդուստրն, և դուստր՝ զմայրն. եղբայր՝ զեղբայրն, և սիրելին՝ զսիրելին. և դոչումն աղաղակի նոցա ելանէր յերկինս։ Որ և ես ի ներս կայի։ Եւ սկսան ըստ աղաչել զԱստուած բարեխօս կարգալով զսուրբ Կարապետն Յովհաննէս և զսուրբ Աստաբեալն հրեշտակապետն ուխտին Ղազարու, և զսուրբ նշանն Յակոբայ Տեառնեղբօրն որ կայր ի վանքին։ Եւ եհաս մարմանք նոցա առաջի Աստուծոյ. վասն զի Թուրքմանն Փիր Հասան կամէր ելանել ի ժողովարան (13) և գնալ ի լեառն Մարաթու։ Յանկարծակի եկեալ դիպեցան զօրայն Զաղաթային. և նոցա ապաւինեալ յԱստուած և ի

սուրբ ուխտարանն Ղազարու՝ բերեալ էին մի դէմ յանդիման պատարագ մատուցին յանուն սուրբ Աստաբէլոյն, որ կայ անդ ի մատանց սուրբ Աւետարանչին Ղուկասու եւ Անդրէի առաքելոյն : Եւ երկու աչ առաքելոյն Պետրոսի եւ Պօղոսի, զորս Սեղբեստրոս հայրապետն եւ թագաւորն Կոստանտիանոս եռուն Ղուսաւորչին. անդ կայ ամիսոսեալ: Եւ այս աւանդութիւն առ մեզ հասեալ կայ թէ ի Ղազարու վանքն եղաւ :

Զատ էր տեսանել զքաջութիւն արանց մենամարտից. զի քաջասիրտքն զոչէին և թուլասիրտքն փախչէին, անարիքն տիրանային, տաղավարտքն փայլէին, տեսերքն շողային, նիզակքն բեկանէին, քաջք ընդ քաջաց ի մարտ մտանէին. եւ զոչումն տաղղակին արտաբեկ առնէր զտեսողս պատերազմին : Զատ էր տեսանել զողորմութիւնն Աստուծոյ եւ ըղ պտուղ աղօթից եւ յուսոյ հաւատացելոց. զի առաքեաց Աստուած զօրս հրեշտակաց յօգնականութիւն նոցա. զի երեք ապիտակասիրալ արք հեծեալ ի ապիտակ ձի, զային ի վերայ օդոյս, եւ ի ջեալ խառնեցան ի զօրս Թուրքմանին, զոր պատմեաց մեզ հոգեւոր եղբայրն մեր Կարապետ կրօնաւորն, որ էր տեսեալ զտեսողն : Եւ նոյն ժամայն բեկեալ խորտակեցաւ զօրութիւն Զաղաթային զի մին մարդ ի Թուրքմանէն 100 ոգի ապան՝ Սարաֆ անուն : Եւ զօրացն

արեւելից ի փախուստ դարձեալ զսիր հարեալ ի բազմութենէ ստակմանց իւրեանց եւ ի շփոթմանէ վրդովմանց մեծ պատերազմին յանթիւ և յանհամար վախից ի վայր մղեալ զահավէժ եղեալ ստակեցան ի կորուստ. զոր եւ ասէին ունելի քան 2,000 ոգի ։ Եւ մեք զերծեալք ի նոցանէ որդւովք եւ դստերօք, սիրաք ուրախութեամբ եւ ցնծութեամբ ի ձայն մեծ օրհնել զԱստուած՝ զթագաւորն թագաւորաց, զոր Յիսուս Քրիստոս զողորմածն քրիստոնէից, որ ազատեցոյն ի գազանաց արեւելից. եւ զոհութեան եւ օրհնութեան պատարագ Աստուծոյ ի բարձունս մատուցաք ։

Բայց զարմանալի զարծ մի գործեցաւ ի սին աւուր զի ԿԻՆ ՄԻ ԵՐԿԻՒՂԱԾ ԵՒ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԻՄուշ գաւառէ, ունելով զորդի մի յոյժ պատուական եւ բազմալի, եւ զէմբ կերպարանացն իւրեւ զերեսս հրեշտակի, զոլով ամաց իւրեւ եօթանց կամ ութից. զի յելանել զօրացն արեւելից ի լեառն Խութայ, բազումք ի քրիստոնէից ատ եւ անդ փախուցեալ կային ի պրակս մոյրիցն գազուազոլի ։ Եւ տեսեալ զնոսա անօրինացն՝ արշաւեալ ի վերայ նոցա կամէին գերել զնոսա ։ Իսկ որդեալի ՄԱՅՐՆ ՍՐԲԱՍԷՐ ԵՒ ԵՐԿԻՒՂԱԾ յետս դարձեալ՝ տեսանէր զի գային ըզկնի, եւ մերձենային առնուլ զմանուկն ։ ԱՌԵԱԼ ՍՈՒՐ Ի ՁԵՌԻՆ ԻՒՐՈՒՄ ՁԵՆԵԱՑ ՁՈՐԴԻՆ ՅԱՆ-

ԿԱԼԻ եւ իրեւ զդառն անմեղ պատարագեայ ի սէր դառին Յիսուսի Քրիստոսի փոխադարձ առնելով Հօրն երկնաւորի, որ զԱստուածորդին, զանաբաւ դառն իւր պատարագեայ զենեալ եւ խոյեալ ի վերայ քառաթեւ խաչին բարձրացեալ ի վերայ սրբոյն Գողգոթայի։ Եւ ԻՆՔՆ ՄԱՅՐ ՄԱՆԿԱՆ ՍԱԿԱՒ ՄԻ ՅԱՌԱՋ ԸՆԹԱՑԵԱԼ՝ ԵԼ Ի ՎԵՐԱՅ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿ ՎԻՄԻ, Ի ՎԱՅՐ ԸՆԿԷՑ ՋԻՆՔՆ ԵՒ ԵՀԱՆ ՋՈԳԻ ԳՈՀՈՒԹԵԱՄԲ ՓԱՌԱՒՈՐԵԼՈՎ ՋԱՆՈՒՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ (14)։ Եւ զայս վասն այնորիկ արար, զի մի երկուքն զրկեսցին ի Քրիստոսէ եւ սատանայի բաժին լինիցին, այլ Աստուծոյ լինիցին բաժին եւ հաճոյական պատարագ առաւել քան զՀօրն Հաւատոյ մեծին Աբրահամու եւ քան զորդին Շամունեայ, որ զեօթն որդիսն պատարագ մատոյց Աստուծոյ յորդորելով զնոսա յօժար կամօք մեռանել վասն Աստուծոյն մերոյ Մեսիայի. որոց անուանքն էին Անդրանիկ, Ակար, Մակար, Խորէն, Խորսէն, Ամինադաբ, Գադիէ։ Եւ զայս վասն այնորիկ եւս թոյլ Աստուած զորդիս իւր ապանանել եւ Աստուծոյ պատարագել զի մի միայն Աստուածն Աբրահամու փառաւորեսցի եւ մի տամբ հնոյն Իսրայէլի։ Եւ մի հինն Իսրայէլ առաւել պարծեսցի քան զնորա Իսրայէլ՝ զՀաւատոյ որդիս մեծին Աբրահամու եւ Լուսաւորչին Գրի-

դորի, որ էր ի մարմնաւոր թոռանց հօրն հաւատոյ։

Եւ զայս մի՛ ոք երկբայութեամբ եւ կարծեօք դիտեսցէ զի մեք իսկ վարդապետօք եւ աշակերտօք գնացաք ի տուրբ Կարապետն, եւ դարձեալ եկաք ի Մուշ եւ բերաք զտեսողն եւ զլսողն՝ զճշնաւոր հայրն զԴաւիթ կրօնաւորն զհոգեւոր հարազատ տուրբ ճշնաւորին Բարդողիմէոսի տուրբ Աղաբէլոյն Ղազարու վանացն. եւ ի նոցանէ զճշմարիտն ստուգեցաք, եւ ձեզ յիշատակ օրհնութեան Աստուծոյ թողաք։

Բայց որք զաւառին Սասնոյ եւ Խութայ հաւատացեալք եւ անհաւատք յազգէն Մարաց, քաջալերեալք ի միմեանց՝ դիմեցին ամենեքեան ի կողոպտել զաւար Զողաթային, եւ լցան աւարօք եւ գանձիւք նոցին։

Իսկ յերկրորդում աւուր եկին Թամուրն ի Մուշ քաղաք, եւ կոչեաց առ ինքն զամիրայն նոցին։ Եւ նա գնաց առ նա մեծապոյն ընծայիւք եւ պատարագօք։ Եւ նորա ասացեալ «Ե՛կ տա՛ր զմեզ ի թուրքմանն»։ Եւ նա առեալ տարաւ ի նոյն տեղի պատերազմին, եւ եցոյց զբազմութիւն կատրելոյն։ Եւ զահի հարեալ պշուցեալ հայէր եթէ զինչ իցէ եւ ո՛րքան որք սրով խոցեալ էին. եւ դարձեալ՝ եռեսն զնոյն արան որք առանց սրոյ մեռեալ էին. եւ ասէ ի լսելիս ամենեցուն «այս ոչ է գործ մարդոյ. այլ

գործ է Արարչին Աստուծոյ»։ Եւ յետս դարձոյց զգ-
զօրս իւր եւ ասէ «տա՛ր զմեզ ի վերայ նորա զի
կարասցիս առնուլ զվրէժ իմ»։ Ասէ «ոչ է կարողու-
թիւն մարդոյ ընթանալ զհետ նորա զի ելեալ է ի
լեառն Սարաթու. եւ եթէ երթայցես՝ մեծ եւ ան-
պատմելի վնաս գործէ քեզ»։ Եւ հաւանեալ անօրի-
նին՝ դարձաւ ի Բաղէշ քաղաք։ Եւ ամիրայն Ամիր
Շարաֆ զնայ առ նա, եւ սիրով ընկալաւ զնա, եւ
խաղաղութեան նամակ ետ նմա, եւ խաղաղութիւն
եղեւ ամենայն աշխարհին։

Եւ անտի չուեալ եկն ի յԱրծկէ. եւ ի հաւանելն
ի դուռն քաղաքին ըմբռնեցին արեղայ մի Կարապետ
անուն ի գեղջէն Ջուղայու, որ գայր յԵրուսաղէմայ.
եւ կապեցին զնա եւ տարան կապանօք։ Եւ գերեալ
քրիստոնէիցն հաստատութիւն եղեւ հաւատոյ ի
Սմրղանդ քաղաքի։ Եւ եղեւ եպիսկոպոս յետ ժա-
մանակի, եւ ոչ հատաւ յաշխարհն յայն. այլ մեռաւ
ի Սուլթանիա. եւ քրիստոնէութիւնն կորեաւ անդ.
զի յաւուրս որդւոյ Թամուրին Շահ-Ռուֆ (15) ա-
նուն յորժամ թագաւորեաց ի Հրէ քաղաք՝ զորդի
իւր Ուլուխ պէկ եդ ի Սմրղանդ թագաւորոյա։ Եւ
Ամիրն դաշոյ մի նեստորական գոյ, մտանէ ի տուն
իշխանի մեծի, եւ կեցեալ աւուրս ինչ առ նա վասն
ոգեւորութեան, եւ անկեալ ընդ կնոջ նորա. եւ
թողեալ զոգեւորութիւնն՝ զնայ ի հեռաւոր տե-

զի. եւ գրով գրէ անդ եւ ասէ. սուտ է օրէնքն ձեր եւ առաջնորդն ձեր. զի ես եկի ի ձերում միջի, եւ զսուտ թիւն օրինաց ձերոց ճանաչեցի, եւ զկանայս ձեր խայտառակեցի ։

Եւ իշխանին առեալ զնամակն՝ տարաւ առ Ուլուխ պէկ Սմիր զայն. եւ նորա հարցեալ թէ յորմէ՞ ազգէ եւ ի գաւառութենէ էր այրն այն ։ Եւ նոքա ասեն. Յիսէի էր այրն այն ։ Եւ նա բարկութեամբ ցեալ՝ հրամայեաց զամենայն քրիստոնեայսն հանել ի հաւատոց եւ կամ մեռանել ։ Ոմանք զմահ յանձն առին տակաւանք, եւ բազումք ի հաւատոցն ելին ։ Եւ գնացեալ եպիսկոպոսն մեր Յովհաննէս մականուն Զանկի վասն գերելոյ՝ գրեաց եւ զայս բոթ գաւառութեան երեր մեզ. վայ ինձ (16) ։

Դարձեալ դարձցուք յառաջիկայ բանս մեր ։ Եկաւ չար գազանն այն ի դուռն քաղաքին Սրճկոյ. եւ իշխան քաղաքին Սահանդ անուն գնաց առ նա միջնորդութեամբ Հեր եւ Զարեւանդ գաւառին Օրդու Բուզոյ անուն ։ Եւ յոյժ սիրեցեալ եղեւ ի նմանէ. եւ ազատեցաւ ի նմանէ երկիրն ամենայն եւ մնաց ի խաղաղութեան ։ Եւ եւս զՍրճէշ նմա. եւ վաղվաղակի ի տակաւ առաւս եկին ամենայն երկիրն Սրճիշու ի Խլաթ քաղաք, եւ հասեալ ի Ծղուկք. յերեկոյէ մինչեւ յառաւօտ Գուրդն կոլոպտեաց զզատատեալ երկիրն ։ Եւ եկեալ ի զօրաց Սահան-

դին՝ բերին ի ՅԱրծկէ քաղաք. ապա նոր սկիզբն եղին շինութեան զի առերեալ էր աշխարհն ամենայն ի զօրաց պիղծ եւ անօրէն Զաղաթային : Եւ անտի չուեալ գնաց ի գուառն Տարօն ի վերայ ամրոցին Վանայ Հայոց. եւ առ ժամայն ամիրայն Եղեղին յազգէն Սենեքերիմեանց ոչ եկն առ նա. այլ ապաստամբեալ ի նմանէ մնաց ի յամրոցին հանդերձ ամենայն զօրօքն եւ բազմութեամբ քրիստոնէից : Եւ յետոյ իջեալ ի յամրոցէն՝ գնաց առ նա. եւ նորա կալեալ կապեաց զնա. եւ եկեալ ի վերայ ամրոցին՝ քառասուն օր ի նեղութեան արկին եւ զրաղումն ապանին ի զօրաց անօրէն Զաղաթային : Եւ նոցա նեղեալ ի հացէ եւ ի ջրոյ՝ ոչ կարացին կալ ի խառնին, եւ եառն զբերդն ի ձեռս նոցա : Սակայն ոչ ոչ ոչ ոչ եւ զառն կոչիս : Սատ էր տեսանել զահ եւ զերկիւղ աստ՝ն զառաստանի, զլալումն և զողբումն ամենայն բերդին զի հրաման եղեւ ի չար բռնաւորէն զկանայս եւ զմանկանս առնուլ ի գերութիւն, եւ զհաւատացեալս եւ զանհաւատս ի բերդէն ի վայր ընկենուլ : Իսկ նորա առժամայն կատարեցին զչար հրաման նորա. սկսան առհասարակ զամենեսեան ի վայր ընկենուլ. եւ այնքան բարձրացաւ մեռեալն, մինչ զի վերջին անկեալքն ոչ մեռանէին, զոր տեսաք աչօք եւ լուաք ականջօք մերոք ի սուրբ հօրէն՝ սրբազան արքեպիսկոպոսէն Տէր Զաքարիայէ եւ ի

հրէշն վարդապետ Տէր Պօղոս կուշեցեալ, որ եւ նոքա ազատեցան լինելով ի բերդին. զի իշխան մի Զաղա-թայ զիւր տուեալ բաժին զերիսն ազատ արար. եւ տակաւ մնացելոցն նա եղեւ պատճառ։ Եւ լցաւ անմեղ արեամբ քրիստոնէից եւ այլազգեաց աշխարհն ամենայն շուրջ զդղեկաւն։ Իսկ Մուղրի մի յոյժ բարձրաձայն եղեալ ի վիճարայն քաղաքին Բերկրոյ զիրաւաթի ապայն (իմն կոչ վերջին տուր) (ձայնեաց). Աստ օր դատաստանին հատաւ։

Եւ պղծոյն անողորմի միտ եղեալ ասէ «զինչ է ձայնն այն». ասեն մերձակայքն «օր դատաստանին հասեալ է որ Յիսէն ասեալոյ է. եւ զայն դու արարեր այսօր». զի ըստ նմանութեան փողոյ ձայն լսելեան դուշեաց Մուղրին։ Ասէ «բերանն այն բեկե՛ալ լիցի, տակաւ մի այլ թէ յառաջ դուշեալ էր՝ բնաւ երբէք մարդ ոչ ապանանէի»։ Եւ նոյնժամայն հրաման տուեալ այլ մի արկանել ի վայր զմնացեալսն. այլ ազատել զամենեսեան։ Բայց ո՞վ կարէ պատմել զթիւ զերեսոյն եւ զապանումն անմեղացն. այլ Աստուած միայն որ ստեղծ զամենայն եւ թուէ զամենեսեան, զի լցաւ աշխարհ ամենայն զերութեամբ Հայոց (17). մեռան քահանայք եւ աշխարհականք, հաւատացեալք եւ անհաւատք։

Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց, մանաւանդ ի ծուլութենէ կարգաւորաց եւ

կարգաթող խաբերայից ։ Եւ երթեալ դարձեալ ուստի եկեալ էր զերութեամբ եւ աւարաւ ։ Եւ յետոյ եկեալ սիրելեաց կոտորելոցն, եւ տեսեալ զանբժշկելի վէրս Հայոց՝ զոր ի բերան առեալ աշխարէին. մին զոչէր. վայ ո՛րդեակ իմ՝ մին ասէր. վայ հա՛յրիկ իմ՝ եւ լցաւ երկիր եւ աշխարհ լալով եւ եղուկ կարդալով բովանդակ ամենայն կողմանք Վասպուրականն զաւառին. զի չի՛ք որ որոյ ոչ զոյր սիրելի կամ բարեկամ անհետ եւ անդառնելի եղեալ ի սիրելեաց ։ Ա՛ւա՛ղ եւ եղո՛ւկ ամենայն Հայոցս զի աւերեցաւ ամենայն երկիրս. զի յԱրճշոյ մինչեւ ի տունն Վրաց եւ մինչ ի Կուր գետն Ազվանից շաղախեցաւ արեամբ անմեղաց երկիր ամենայն չարչարանօք, ապանմամբ եւ գերութեամբ ։ Եւ յետ գնալոյ նորա յաշխարհէս մերմէ եկն տալ սատիկ յաշխարհս մեր եւ տարածեցաւ յամենայն տեղիս զի կերան զշունս եւ զկատուս, խորտկէին զուտերս եւ զտերս. այր՝ զկինն, եւ կին՝ զայրն ապանանէին զմիմեանս եւ ուտէին եւ ոչ յագենային. եւ յետոյ ինքեանք մեռանէին ։ Զի ոչ կարեմ պատմել զգրառնութիւնս մեր զոր տեսաք աչօք եւ լուաք ականջօք. զի ընչեցաւ մարդկութիւնս, մանաւանդ Հայկազեան զաւառս ։ Եւ կատարեցաւ տեսիլ եւ հրաման մեծին Ներսեհի (18) որ ասէ «յաղագն Ներսեհոյ ընչեցի՛ տունն Արամայ» ։ Այսքան առ այս ։

Եւ սոյն գիտելի է զի ոչ միայն սով մարմնական տուաւ մեզ. այլ եւ սով հոգեւորական ոչ լսելոյ ըզ բանն տէրունական. զի երկու դասատունք կային յաշխարհին Սիւնեաց, մին ի տուրբ ուխտն Սարգսեանցն մեծ վարժապետին Գրիգորի՝ աշակերտի մեծին Յովհաննու Որոտնեցւոյ, որում 28 ամ աշակերտեալ էր. եւ երկու ամ էր որ նստեալ էր յաթոռ վարդապետութեան ուսուցանելոյ. զի համշիրակ եղբարքն իւր գնացին ի նմանէ. մեծն Յակոբ գնաց յերկիրն Սպարտական, եւ բնակութիւն իւր արարեալ զտուրբ ուխտն Սաղմոսավանից, որ 20 ամ աշակերտեալ էր Յովհաննու Որոտնեցւոյ: Եւ վարդապետն Գրիգոր գնաց աշակերտօք իւրովք ի գաւառն Եկեղեաց յԵրզնկայն. եւ այլք սոյն եւ անդ ցրուեալ եղեն։ Իսկ մեծն Գրիգոր սակաւ աշակերտօք իւրովք գնաց ի յՍպրակունեաց հնձան յաւուրս ձմերայնոյ. եւ ի գարնան եղանակին գնացեալ ի տուրբ ուխտն եւ ի շնորհալից (19) յաթոռս Սաթէի տաւաքելոյն, եւ ի տունն Օրբէլեանց առ իշխանն Սմբատ՝ որդի Իւանէի՝ թոռն Բուռթէլի։ Եւ յետ ժամանակի ժողովեաց զբազում աշակերտս եւ ողորմութեամբն Աստուծոյ լուսաւորէր զաղգս մեր ճշմարիտ եւ ուղղափառ դաւանութեամբ և հաւատով։ Սպարեալ հարցմունս՝ զրեաց պատասխանիս ընդդէմ ամենայն աղգաց, եւ երկու հատոր քարոզգիրս. մինն՝

ամարան, միւսն՝ ձմերան, եւ քաղուածոյս Հնոց եւ Նորոց եւ լուծմունս արտաքին գրոց, ոչ ելեալ անտի մինչ ց867 ամ մերս Թուականի։ Բայց պատճառաւ ինչ եկեալ յերկիրս Քաջբերունի զի մեք երկրաս-սան եղբարք՝ աշակերտք մեծին Սարգսի եւ երկու ամ առ նա գնացեալ կայաք. եւ ոչ գոյր անդորրու-թիւն եւ ոչ հանդիստ խաղաղութեան վասն անօ-րինաց չարութեան։ Եւ նա խոստացաւ մեզ ամե-նեցուն գնալ Յերուսաղէմ եւ առանձնացեալ ի զբաղմանց աշխարհիս՝ դաս ասել նոցա։ Եւ դար-ձեալ վասն կապանաց անհնազանդ ամբոխն Սղ-թամարայ քարոզեաց դառնալ ի հնազանդութիւն։

Դարձեալ՝ բռնաւորն Յուսուֆ, տէրն Թաւրիզու, էառ զՈրոմն ի Սմբատայ իշխանէ. վասն բարեխո-սութեան նոցա եկն. եւ նա ոչ լուաւ ազաչանաց վարդապետին։ Եւ ամ մի ըմբոն բնակեցաւ ի տարբ ուխտն Մեծորայ. եւ ժողովեցան առ նա 10 վար-դապետք եւ 80 աբեղայք. եւ ճշմարիտ վարդապե-տութեամբ եւ դասիւ միաբանեալ զնոսա. եւ ի միւս ամն ելեալ գնաց։ Եւ ի նոյն ամին օրհաս մահուն եկն կոչեաց զնա յերկնային քաղաքն։ Եւ էր սա առատ եւ ճոխ բանիւ՝ ոչ գտուել նման նմա յազգս ամենայն ոչ ի հինան, ոչ ի նորս, երկրորդ Աստուածաբան, Յովհան Ոսկեբերան. մինչ զի ի յու-սուցանելն եւ ի կարդացանելն զաչս իւր տեսանէաք

այր ծերունի առ նա նստեալ։ Եւ դարձեալ՝ երբեմն հայց եւ երբեմն խնձոր բաժանէր. եւ երանի էր տեսողացն եւ լսողացն, որք զնա տեսանէին, զի դէմք կերպարանացն զարհուրելի էր, եւ բաղում անգամ ասէաք ի մարդկանէ թէ Քրիստոս այսպիսի ձեւով լինի եկեալ յաշխարհս։ Եւ սա ազատեաց զերկիրն Սրճոյ ի կապանացն Սղթամարայ վանն տեսլեան դիշերոյ։ Սյսքան առ այս՝ եկեալ ի կարդ վանն պիտոյից վարդապետաց եկեղեցւոյ։

Դարձեալ դարձցո՛ւք ի յառաջին կարդ շարադրութեան պատմութեանս։ Մեծ վարդապետն Սարգիս, որ ունէր զատրը ուխտն Սատապատայ։ Եւ նա եկեալ անտի՝ եկն ի Հեր քաղաք տակաւ աշակերտօք ի նոյն ամի դառնութեան. եւ անդ անցոյց զաւուրս տվոյն դառնութեան նեղութեանն։ Եւ ապա առաքեաց զմի յաշակերտաց իւրոց Յովհաննէս անուն, մանուն ապաղ կոչեցեալ՝ այր սուրբ եւ մաքուր հոգւով զնալ յերկիրն Քաջբերունեաց առանալ ինքեանց տեղի բնակութեան։ Եւ նա եկեալ յատաւուածաբնակ եւ ի հրաշագործ ուխտն Տիրամօր Սատուածածնին ի մայրաքաղաք վանն Սուխարայ, որ այժմ Խառաբատայ վանք կոչի, առ երջանիկ եւ հեզահոգի այրն ցանկալի Տէր Զաքէոս՝ եպիսկոպոս զաւառին, առալ նոցա տեղի բնակութեան։ Իսկ ի նոյն դիշերին զարմանալի տեսիլ եռեռս հոգե-

ից արեղայն վարդապետն Յովհաննէս, թէպէտ եւ վասն խոնարհութեան ոչ էր առեալ զաստիճան վարդապետութեան, այլ ամենեցուն խրատիչ եւ ուսուցիչ էր բանիւ եւ գործով և առաքինութեամբ։ Զի տեսանն տուրբ Աստուածածնին կանթեղաք լցեալ, եւ ամենայն կանթեղքն վայլէին նման արեգական. եւ ժամատուն լուսով լայտերայց մոմեղինօք պայծառացեալ։ Եւ նա զարթուցեալ ի քնոյն՝ օրհնեաց զԱստուած եւ գոհութիւն ետ նմա, եւ ասէ ի միտս իւր. ասա հաճեցաւ Աստուած զալ բնակիլ մեծ վարդապետին Սարգսի, որ ունէր հոգի մարգարէութեան, եւ տեսլեամբ աչաց եւ դիմաք ճանաչէր զամենայն մարդ, եւ հեզութեամբ եւ խոնարհութեամբ ոչ զոլով նման նմա յորդիս Ադամայ։ Ոչ եկեր զմիս եւ ոչ ըմպեաց զինի զամենայն ժամանակս կենաց իւրոց մինչեւ յօր մահուան իւրոյ։ Եւ զէմք կերպարանաց իւրոց ահաբեկէր եւ զարմացուցանէր (20) զամենայն մարդ, մանաւանդ զաղգս այլազգեաց մինչզի ազգ Զաղաթային յերկիրս պարսից զայն նմա։ Եւ աւետարանիչ և ուսուցիչ եղեւ աւետարանին քարոզութեան։

Եւ եկեալ վարդապետն Սարգիս բնակեցաւ յաստուածարնակ ուխտն տուրբ Աստուածածնին. եւ նստաւ յաթոռ վարդապետութեան։ Եւ ժողովեցան առ նա բազումք ի գրոց աշակերտաց եւ ի կրօ-

նաւորաց եւ յուսմնասիրաց աւելի քան 60 կարգաւորք եւ ուսումնականք : Եւ ասոյց զամենայն ծանրերս Պապերական զաւառս ասմամբ եւ գիտութեամբ, ժամօք եւ պատարագօք : Եւ տեսանէին զսուրբ ոխան իրրեւ զվերինն Երուսաղէմ յ838 ամէ թուականէս մեր մինչեւ յ851 ամն : Եւ ապրեալ մինչեւ մահուամբ հանգեաւ ի Քրիստոս եւ եղաւ ի շիրիմ տապանի մերձ առ եպիսկոպոսայն արքայական Խաչատրոյ եւ Զաքէոսի ի փառս Աստուծոյ մերոյ :

Բայց գիտելի է զի բաղում վիշտս կրեաց եւ զանութիւնս վարդապետն Սարգիս յաշակերտաց իւրոց. զի յոյժ էր յերկրին Սիւնեաց՝ Կարապետ անուն վարդապետ մի՝ մանուն ճոգաբանիր, զոր եղեալ զգիրս առաքինութեանց իւրեանց, եկն առ նա աղքատութիւնց արեղայ մի եւ ասէ ցնա « Եա երբեմն արեղայ ի ձէնջ եղեալ եմ. բայց ասասնայ կորոյս զիս եւ արար բարկեղանական , եւ սիրտ իմ հանապազ խոցի ի դէմս ձեր անարգութեան եւ հայհոյութեան. բայց գիտութիւն լցի քեզ զի Կարապետն այն զոր եղիր զգիրս առաքինութեանց, և կամին զալ ի քէն բան հարցանել : Ահա քեզ զիրք առաքինութեանց. զի պատասխանի տացես նոցա »:

Եւ նորա յոյժ ուրախացեալ փառս ետ Աստուծոյ մեծաւ զոհութեամբ : Եւ յետ երկուց աւուրց եկին

երկու աբեղայք աղթարմայ առ վարդապետն եւ հարցին. զի՞նչ է առաքինութիւնն եւ զի՞նչ է ահման նորին : Եւ նորա պատասխանեալ զուղիղն՝ գնացին առ վարդապետն իւրեանց : Եւ դարձեալ դան միւսանգամ և ասեն. զի՞նչ է ահման հաւատոյս : Եւ նա ասէ զոյն պատասխանի զոր ուսեալ էր ի վարդապետայ : Եւ նոքա ամօթալից դարձան ի վանան Քռնոյ : Իսկ աշակերտք մեծին Սարգսի տխրեն զնա ապաշանօք դաս ասել զգիրս նոցին առաքինութեանց . եւ նորա հեզահոգի եւ մի-ամիտ զոլով՝ ապաւինեալ ի հոգին Աստուած սկսա-նի դասել վարդապետութեան ուսուցանել զնոսա : Իսկ աշակերտք նորին ոչ էին առեալ զճաշակ դասանութեան սուրբ եկեղեցւոյ՝ զմեծի Լուսաւորչին Գրիգորի, զԱստուածաբանին Գրիգո-րի, զԱթանասի եւ զԿիւրղին և զմերոց աստուածա-բանիցն զՍտեփաննոսին Սիւնեաց, զԱնանիայի Շիրակացւոյն, զՊօղոսի Տարօնացւոյն, զՅովհաննու, զՍարգսի Հաղբատացւոյն, զԴաւթի փիլոսոփային, զՄովսէսի քերթողահօրն, զԱստղիկ թարգմանչի եւ զայլոց վարդապետաց սրբոց :

Եւ որոյ ոչ է առեալ զճաշակ ճշմարիտ վարդա-պետութեան՝ զիւրաւ սխալեալ մեռանի հոգւով, որպէս զառն, որ ոչ առնու զխաւսաց մօրն եւ զդալ՝ վաղվաղակի մեռանի. այնպէս եւ աշակերտք նորա

վաղվաղակի տկարացան ի հաւատոց և կամէին աղ-
թարանց լինել ոչ դիտելով վարդապետին ։ Եւ տե-
սանէ ոմն ի քահանայից տէրն ուխտին՝ ապաստար
եւ փակակալ տէրն ուխտին Սարգիսնեաց զաղ-
դումն տէրն Հոգւոյն տեսլեամբ դիշերոյ յանուրջս
երազոյ զի գեան Երասխոյ բարձրացեալ՝ եկն, տա-
ռաւ զաշակերտսն առ հաւատակ եւ կորոյս զամենե-
սին ։ Իսկ վարդապետն Սարգիս եւ փակակալն
Ստեփաննոս մաղապուրծ եղեալ՝ զձեռս ի ձեռս
արկեալ՝ ապրեցան ի հեղձուցանելոյ գետոյն ։ Եւ
զարթուցեալ ի քնոյն և երթեալ առ վարդապետն և
առ ճգնաւորն Սաղարիս պատմեաց զերազն և զամե-
նայն խորհուրդն տուտ և թերահաւատ և խարեբայ
աշակերտաց նորա ։

Իսկ նոքա հարեալ զերեսս և զմօրուս ճղէին, ըզ-
զլուխն հարկանէին, ողբս ի բերան առեալ իբր ի
վերայ մեռելոյ անմխիթար ազալ ասին զհոգեւոր
մեռելութիւն և զկորուստ նոցին ։ Եւ ապա խորհուրդ
ի մէջ առեալ մեծ վարդապետին՝ յուզարկէ զճգնա-
ւորն Սաղարիս առ մեծահամբաւ և հռչակաւոր վար-
դապետն Յովհաննէս մականուն կախիկ հասանել
յօդնականութիւն հեղահոգի առն Աստուծոյ մինչ ոչ
է տարածեալ գայթակղութեանն չարութիւն ոգէտ
աշակերտացն իւրոց առ աղթարանց ուրացողին
ճշմարտութեան. եւ ոչ նոքա փոխուցեալք եղեն ։

Իսկ երջանիկ և երանելի վարդապետն Յովհաննէս Եղեալ աշակերտաւքն և բազում քահանայիւք յերկրէն Որսան, ի շնորհալից աթոռոյն Սամթէ ի առաքելոյն՝ եկն յերկիրն Երնջակու ի տուրբ ուխտն Սարգսակու-նեաց. և կոչեաց զամենայն կարգաւոր և աշխարհա-կան և ասուզեաց ի նոցանէ զամենայն չարութիւն ազէտ աշակերտացն. և հրամայեաց բերել զաշա-կերտսն, և զէմ յանդիման եղեն առաջի հրապարա-կին (21), և պարտաւորեցան : Եւ տարեալ եղին ի բանտի, և զմանս յերկաթի հարեալ, և զմանս բը-բաժեծ արարին :

Եւ վարդապետն Սարգիս բան արանջման ասաց նոցա. և յետոյ ամենեքեան պատժեցան յԱստուծոյ, ոմանք զեռակուր եղեն, ոմանք խոցոտակեալ մերկ շրջէին, կէսք ի նոցանէ փախուցեալ գնային յաշխարհն Ֆռանկաց, և ի նոցա միջի չարախոսու-թիւն արարեալ՝ ի պղնձի եղեալ եփեցին. կէսք ի նոցանէ զոչխարքն ապաշխարեցին, որպէս Աստուն Տոկացին, զի զոչխարս և զնոցա յԵրուսաղէմ և դար-ձեալ եկն ի դուռս իւր և զմարմնաւոր պատիժն կրեաց. զի սերան ծակեցաւ. և տարի մի շունչն էր-նէր ի սրտէն. և ապա զոչխարքն առանձեաց զհոգին :

Յետ մահուն տրա՛ յանդրդեաց զաթոռ վարդա-պետութեան երջանիկ և աստուածամերձ տէրն ցանկալի հրեշտակաց և մարդկան՝ պատկառելի քաջ

վարդապետն Վարդան՝ գոլով ի սուրբ ուխտէն Հոգոց վանաց, զեր ի վերոյ գոլով իմաստութեամբ և խրատուք և առաքինութեամբ քան զամենայն վարդապետս Հայոց (22). մինչ զի ասէին մարդիկ թէ հաւրիկ է զի մեռեալքն յառնեն և թողութիւն մեղաց ի սմանէ գտանեն, ի սեպհական աշակերտաց իւրոց։ Եւ չորս ամ լուսաւորեաց ճշմարիտ վարդապետութեամբ և գոսիւ զսուրբ ուխտն և զամենայն երկիրս Քաջբերունեաց։ Որ և աղօթիւք տրին և եղբօր իւրոյ Եղիա ճգնաւորին, որ առեալ էր զսաղմոսն սարկաւագութեան, որ զամենայն ժամանակս կենաց իւրոց կանգուն կայր յաղօթս առաջի Աստուծոյ, աղերսացաւ մարմնական ընչիւք և ողորմութեամբ մայրաքաղաք վանքն Աստուածածնի և ամենայն երկիրս Սրճիշոյ։ Եւ ի հալածմանէ անօրինաց եկեալ դնաց աշակերտաւքն իւրովք յերկիրն Տարօն. եւ անդ հանդիպաւ ի Քրիստոս ի սուրբ ուխտն Սալնապատին 1855 թուականիս մերում. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

Եւ յաջորդեաց զաթոռ նորա մեծ վարդապետն և նահատակն և ողորմածն ամենայնի Գրիգոր՝ որդի հաւատարիմ առն Աստուծոյ ծերի, գոլով ի քաղաքէն Խլաթոյ, յաշակերտացն մեծին Սարգսի՝ հոգեւոր հարազատ և համշիրակ իւր. բայց ոչ ի նոյն Սուխարու ուխտն Աստուածածնի այլ ի յերկիրն

Բզնունեաց ի քաղաքն Արծկէ, ի տեղի ուխտն Ստեփաննոսի վկային Յիսնից կոչեցեալ։ Այլ ոչ պարապեալ վարդապետական դասի վասն առնացեալ բարուց ուսումնականաց մերում ազգի։ Այլ ապա և զիշեր զկրս գրէր, և զամենայն աղքատս կերակրէր, եւ սիրէր զողորմածութիւն, և զամենայն վարդապետս և կարգաւորս ի նոյն յորդորէր։ Ոչ գոլով նման նմա ողորմած և մարդասէր և ապատարար աղքատաց և տնանկաց։ Եւ եռ նմա Աստուած խնամութիւն առաւել քան ամենայն վարդապետաց. վասն զի զերիս ժամանակս պատմութիւնս ի լոյս ածէր ի հարցանելն և ի պատասխանատուութիւնս, և զգիրս սրբոց մարտիրոսաց և վկայիցն որ կոչի Յայսմաւուրց՝ ոսկեաբան և անվթար (23) շարադրեալ ի սրբոց Հնոց և Նորոց վարդապետացն ի լոյս էած, զխաւարեալ զրուն եկեղեցւոյ մերոյ լուսաւորեաց. և ոչ որ կարէ զխաւարութիւնն, որ ի նմա ծածկեալ կայ. այլ Աստուծոյ միայն է զխաւելի։ Եւ 50 ամ զիրս գրեաց տիւ և գիշեր անհանգիստ տքնութեամբ, որպէս զխաւակ է գաղտնեաց զխաւակն։ Եւ բազում երդս զանձուց և տաղից յիշատակ թողեալ ինքեան՝ յոյժ ոճնաւէր եւ պատուական սրբոց մինչ զի ոչ եղեալ է և ոչ լինելոց է։

Եւ հասեալ ի բարեաց ծերութիւն աւելի քան զ75 ամ. և յ874 ամի թուականիս մերում եկն պիղծ

ազգն Մարաց ի յԱրծկէ քաղաք Հայոց, և գնաց յանապատն Ցիպնայ. և ըմբռնեալ զնա անօրինացն՝ յոյժ տանջեալ չարչարեցին. և նա ճշմարիտ դաւանութեամբ զՔրիստոս Աստուած և Տէր դաւանեալ խոստովանեցաւ. և նոյնժամայն զենին զնա իբրեւ զդառն անմեղ և անարատ զերջանիկն և զերանելին Գրիգոր վոխանակ դառին Քրիստոսի : Եւ եհաս մարտիրոսական պսակի յոյժ մարտիրոսաւէր գոլով. և եդին զնա ի տեղի ոխան Ցիպնայ Եպիսկոպոսին Ստեփաննոսի անուամբ կոչեցեալ : Եւ հոգեւոր հաբազան իւր վարդապետն Յակոբ ճգնաւոր՝ այրն ցանկալի, եկն ամփոփեաց զնա հանդերձ հարազատ որդւովք իւրովք Ստեփաննոս եպիսկոպոսաւ եւ աշակերտաւ. եւ նոսաւ ապաստաւոր նորա զերեզմանն ամ մի :

Եւ տեղացաւ, որպէս սահման է բնութեանս. և ի Համբարձմանն յաւուր վերացման ի բանն յայն զոր ասացին քահանայք «Համբարձաւ Տէրն մեր յերկինս» աւանդեաց զհոգին ի վասն Քրիստոսի Աստուծոյ մերոյ : Եւ յետ այսորիկ յետ երկու ամի նոյն Քաբրղն յաղագէն Մարաց ի Բաղիշու զնաց յերկիրն Ռշտունեաց, և զերջանիկ և զսնանաւէր աղօթարար վարդապետն Յակոբ Ովաննայի ի յԱնծղնապատի ուխտէն նահատակեալ եդին զնա մերձ զերեզմանին Գրիգորի Նարեկայ վանից : Եւ ի նոյն ամի վարդա-

874
1425
1350

պետն Բաղիշու Ղազար՝ յոյժ հռչակաւոր եւ բանի-
բուն, աղօթաւոր եւ ճգնաւոր վարեալ ի յանօրինաց
եւ գնայ ի լեառն Սանոյ։ Եւ գտեալ զնա անօրէն
ազգին Մարայ՝ ասեն «դու ասես թէ՝ Քրիստոս
Աստուած է». եւ նա ասէ «ես ասեմ և ուսուցանեմ.
եւ այն որ ոչ ասէ եւ ուսուցանէ, գնայ ի կորուստն
յաւիտենական»։ Եւ նոքա հարեալ սրով ապանին
զնա. եւ եհան մարտիրոսական պսակաց։ Եւ յառաջ
քան զայս երկոց եւ չորից ամաց վարդապետ մի
Թովմա անուն՝ աշակերտ Սիմէօնի վարդապետին
Ռշտունեաց, զիտակ մանր ուսմանց, սիրող արքու-
թեան եւ աղօթից՝ ի տեղի ուխտին Պուռիկ վա-
նայ, նեռիւ հարեալ ապանին։ Եւ քրիստոսական
պսակաց արժանի եղեն։ Այս չորս վարդապետքս
յաւուրս մեր անօրէնք ապանին, որոց յիշատակն
օրհնութեամբ եղիցի. եւ աղօթիւք նոցա մեզ ողոր-
մեսցի Քրիստոս Աստուած։ Այս էր ի 874 թուա-
կանին ամէի կամ պակաս. զոր անմեղադիր լեր զի
ծեր էի եւ յետ 50 ամաց սկսայ. վասն այսորիկ յետ
եւ յառաջ գրեցի։

Դարձեալ 844 թուականին շարժեցաւ պիղծ
բռնաւորն Խորասանոյ եւ եկն Պարսատոյ ճանա-
պարհաւն. ամբեաց զՊարսատ եւ զամենայն Աս-
բուտանեայս եւ զամենայն Միջագետս Տիարբակիր
(այժմ՝ Դիարբէքիր). եկն յԱմիթ քաղաք. էառ

զնա, եւ զմեծամեծան հրով եւ արով անասելի եւ անպատմելի չարչարանօք ապանին. եւ զխոքունան զայր եւ զկին զերեցին զամենայն յաշխարհն Իւրեանց։ Եկն ի Մերդին, աւերեաց զքաղաքն (24), և հնգետասան զիւղ ուղղափառ եւ ճշմարիտ քրիստոնեաց զերեաց 3,000 տուն, եւ այլն ամենայն 7,500 (25) ամենեքեան զերեցան. եւ զչորս զեղս արեւորդի կուսակալաց զՇօլ զՇեմրախ, զԱաֆարի, զԱարաշի խոպան կործանեաց։ Եւ յետոյ դարձեալ սատանայի հնարիւք բազմացան ի Մերդին եւ ի ՅԱմիթ։

Եւ եկն դարձեալ յաշխարհն արեւելից եւ գնաց ի վերայ Երզնկայ քաղաքին. սիրով էառ զնա, եւ ըզ մեծ կաթողիկէն զտուրբ Սարգիսն ի հիմանէ քակեաց եւ զայլ եկեղեցիսն զամենայն կործանեաց չարախոստութեամբ Թախրաթան Պարոնին եւ այլ ամենայն Տաճկաց քաղաքին։ Եւ վարդապետն մեր Գէորգ՝ աշակերտ Յովհաննու Որոտնեցւոյն, գնաց առ նա. եւ յահէ եւ յերկիւղէ սղջոյն շրթունքն պատառեցան, եւ արիւն ինքանէր։ Եւ լալով եւ արտասուօք յետս դարձաւ այրն Աստուծոյ վասն զի հրաման էր քակել զամենայն եկեղեցիսն. եւ սուգ մեծ եղեւ։ Եկն ի վերին կողմն աշխարհիս եւ նստաւ ի վերայ ամրոցին Բասենոյ Անիկ կոչեցեալ. էառ զնա, եւ զիշխան նոցին Սիր անուն կապեաց, եւ 100 ոգի

ի բերդէն ի վայր ընկէց անօրէնն, եւ մեռան։ Եկն ի վերայ գաւառին Արարատեան, աւերեաց զաշխարհն ամենայն կողոպտելով յընչից, նաեւ ի վերայ բերդին Բաղբատունեաց, էառ զնա եւ բժանեաց 300 Տաճիկս եւ 300 Քրիստոնեայս ի միմեանց։ Ասէին. զՔրիստոնեայս սպանանեմք եւ զՏաճիկսն ազատեմք։ Եւ էին երկու եղբարք եպիսկոպոսի քաղաքին Սկրտիչ անուն՝ երթեալ խառնեցան ի զունդս Տաճկացն։ Եւ սուր եդին ի վերայ եւ սպանին զՏաճիկսն եւ զհաւատացեալսն ազատեցին։ Իսկ երկու քրիստոնեայքն ազաղակեցին եթէ մեք Քրիստոսի ծառայք եմք եւ հաւատացեալ եմք։ Ասեն. զարիսո՛ւ սուտ խօսեցայք. վասն այնորիկ ոչ ազատեմք զձեզ եւ զերկոքեանն սպանին. եւ սուգ մեծ եղեւ եպիսկոպոսին թէպէտեւ ճշմարիտ հաւատացեալք մեռան։

Եկին ի վերայ Ճակատուց երկրին Սուրմառու եւ Կողբայ եւ ի վերայ Բառնակուտին եւ գաւառին Արճիշոյ։ Այս երեք գաւառս ցրուեալ էին, առհասարակ զամենեսին կողոպտեցին, եւ ողորմութեամբն Աստուծոյ զերին ազատեցաւ ի ձեռաց նոցին։ Եւ սով մեծ եղեւ ընդ ամենայն երկիր։ Բայց ի նոյն օրն զիւզաքաղաքն Կողբայ կողոպտեցաւ։ Քան եւ հինգ զամէշ ի վերին Կողբայ ի քարէն ի վայր գինքեանս արկին ի գաւառին Արճիշոյ։

Եւ Քրիստոնեայքն սուր ի վերայ եղեալ զենուին. եւ բաժանեալ ի միմեանց պաշար առեալ յերկիրն Քաջբերունեաց հասին հանդերձ վարդապետաւք եւ եպիսկոպոսաւք եւ քահանայիւք եւ ժողովրդեամբ ։ Եւ եկեալ հասաւք ի գաւառն Կողովիտ ի գիւղն Դարբա ։ Անդ հանդեաւ սուրբ վարդապետն Ստեփաննոս՝ աշակերտ մեծին Յովհաննու Որոտնեցւոյն, յընկերաց սուրբ վարդապետին Յովհաննու Մեծոբայ ։ Եւ եկեալ տեսաք զաշխարհս մեր աւերակ, թափուր և դատարկ յամենայն ընչից եւ պակասեալ ի հոգեւոր առաքինութենից՝ ոչ ժամ եւ ոչ պատարագ ։ Եւ դարձեալ սկիզբն արարին շինութեանց ։ Զի տուեալ եղեւ երկիրս մեր պարոնին Արծիշոյ Սահանդ անուն ։ Եւ ի մի ամին եկն Յուսուփ Թուրքմանն եւ վերատին աւերեաց զաշխարհս մեր. էառ զԱրծէշ քաղաք, եւ զՀիմաթ անուն Պարոն եղեալ երեսուն եւ չորս մարդով ապան վասն զի ապանեալ էր զՍտեփաննոս քահանայն՝ ձեռնաւոր քաղաքին ։ Եւ զմեծաղդի տանուտէր մի Մուսէֆիր անուն նահատակեցին չարախօսութեամբ եւ նենգութեամբ անէր քրիստոնէիցն ։ Եւ զքաղաքն ամենայն հրով այրեալ էր ։ Եւ ի նոյն աւուրս եկն տէրն Որոտնոյ Աւիր Եղբին անուն Զաքարիայիւք ի վերայ Յուսուփին. և պատերազմեցան առիւ աւուրս, եւ դարձեալ հաշտեցան ։ Եւ ի միւս օրն Զաքարիայ

Պարոն մի ի բերդէն Բասենու եկն 400 մարդով ի գիւղն Սղի յօգնութիւն ամիրային. եւ եհարց զխաղաղութենէ նոցին. եւ նոցա պատասխանեալ թէ ի հաշտութիւն եկին՝ զերեւոյ զգիւղն Սղի ի մուտս արեւուն, եւ զարձաւ ի բնակութիւն իւր : Իսկ քրիստոնէիցն ի հետս մնեալ, հոգմ եւ փոշի արարեալ, զգերի եւ զաւարն թողեալ փախեան : Իսկ ասուածապաշտ այր մի՝ հարազատ մեր Յովհաննէս անուն կոչեցեալ, որպէս այծեամն հասեալ ի դաշտն Սարճիշոյ՝ խաբար արար(լուր եւ)(26)Յուսուին և եղբօր նորա Սրալի անուն, (որք) հասեալ ի մէջ գիշերի՝ ընթանեցին զՋաղաթայն եւ զամենայն զօրս նորա կողոպտեցին, զմանս ապանին, գիշխան նոցա Սթալիշ անուն ձերբակալ արարին եւ ի Մար յուղարկեցին :

Եւ մինչդեռ յայս տառապանս կային յաշխարհն մեր՝ յանկարծակի բօթ մահու եւ գոյժ լալոյ եհաս եթէ զօրք Զաղաթային զերկիրս մեր լին : Սատ էր տեսանել զաղէտս տարակուսանաց եւ զահ եւ զերկիւղ անօրինաց. զի 15,000 մարդ յԵրիշատ գեղ հասեալ. մեք փախուցեալ՝ ի լեառն եւ ի ձորս գիմեցաք : Եւ զխուցեալ անօրինացն՝ 12 օր զլեառն շրջապատեալ իրրեւ զանասունս էրէոց որսային եւ կալան զամենեսին. զմանս ապանին, զմանս գերեցին եւ զաշխարհս մեր հրոյ ճարակ եղեն : Եւ վար-

դարեան Յովհաննէս աշակերտօք իւրովք մաղա-
պուրծ եղեալ գնաց ի դաւառն Ռշտունեաց. զերկու-
սամ անդ դադարեաց, եւ պատիւ մեծ ընկալաւ ի
հաւատացելոյն Քրիստոսի :

Եւ անօրէնն Յուսուֆ փախեաւ ի Զարեհ այէն
յ844 թուականին մինչեւ ց855 այլ ոչ կարաց գալ
յաշխարհս մեր : Իսկ յ846 թուականին առաքեաց
Թամուրն զչեխ Ահմատ անուն Զարեհ այն յաշխարհս
մեր. եւ նա եկեալ ի խնդրելոյ վարդապետացն մե-
ղոց մեծին Սարգսի Սորբեցւոյ եւ Յովհաննէս վար-
դապետին՝ Մեծոպոյ վանքին առաջնորդի, չինեաց
զաշխարհս մեր ասի եւ անսի ժողովելով, եւ յոյժ
բարեբարոյ եւ քրիստոնեասէր պղով : Եկին ամենայն
ցրուեալքն եւ սկիզբն արարին շինութեան : Եւ
ծաղկեցաւ ուսումնականաւքն ի ձեռն խաղաղութեան
պարսնութեանն Աստուծոյ մեռաւան ամ ծովա-
բոլորս :

Իսկ յ850 ամին հանդեաւ ի Քրիստոս մեծ վար-
դապետն Սարգիս ալեւորեալ եւ լի աւուրբք : Եւ
յաջորդեաց զաթոռ նորա արանչելի այրն Աստուծոյ՝
աշակերտ նորին մեծ ճգնաւորն եւ վարդապետն
Հայոց Վարդան զամս չորս. եւ լուսաւորեաց եւ
պայծառացոյց զդաւառս Սրճիշոյ զվերջինն առաւել
պայծառ քան զառաջինն : Եւ ժողովեցան առ նա
բազում աշակերտք առաւել քան 60 կրօնաւորք ի

մեծահանդէս ուխտին եւ ի մայրաքաղաք վանան Տիրամօր Աստուածածնին : Եւ լուսաւորեալ պայծառացոյց զհոգիս ամենեցուն ժամօք եւ պատարագօք, ուսմամբ զրոց եւ սաղմոսերգութեամբ զամս չորս : Եւ փախուցեալ յանօրինաց եւ երթեալ ի տուրբ Սալնապատ՝ եհաս օր վախճանի նորա : Եւ անդ եղեալ կայ մարմին նորա. եւ հոգի նորա վերացաւ ի կառս քրովբէից եւ սրովբէից եւ ի կարգս համատեաց աստուածարան վարդապետացն մերոց եւ լուսաւորչաց, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի. եւ աղօթք նոցա ի վերայ ամենայն աշխարհի. ամէն :

Եւ որք մնացեալ աշակերտաց նորա՝ թողեալ զնոցաւ ի դաւառն Սիւնեաց առ մեծն Գրիգոր՝ վարդապետն ամենայն Հայոց, երկրորդ լուսաւորիչն եւ աստուածարանն զեր ի վերայ գոլով ամենայն իմաստասիրաց եւ վարդապետաց հնոց եւ նորոց : Որ եւ նա ուրախացեալ յոյժ՝ սիրով ընկալաւ զմեզ իբրեւ զորդիս իւր սիրելի հոգեւոր եւ բաղձալի. զի հայր նորա էր ի դաւառէն Քաջբերունեաց ի քաղաքէն Արճիշոյ : Եւ նորա ժողովեալ զբաղումս յաշակերտաց իւրոց՝ զԱխիմարն ի Տաթեւոյ, զՅովհաննէս ի Յեղեգեաց ի վանաց Հերմոնի, զԳաղուսան ի Վաղանդնոյ Սիւնեաց տուրբ Կարապետէն, զԱմէնն ի Սիւնեաց, զՅակոբն Բռնաստի, զԳրիգորն

Արարատեան, զԳրիգորն եւ զՄատթէոսն Ջուղայեցի, զԱւետիսն ի յԱստապատ, զԵղիայն ի յՈծոմայ, զՅովհաննէսն ի Վաղանդնոյ վանացն, զՈւնան ի Թամխայ, զՅովհաննէս կարմիրն ի Կապանայ։ Եւ էին երեք յաշակերտացն յայլ տեղիս. Մատթէոս Ռշտունեաց տէրն ուխտին Գանձասարու, Մկրտիչն ի Փայտակարանէ, Ստեփաննոս ի Թաւրիզայ։ Եւ քահանայս բազումս առելի քան զ60 ոգի. եւ սկսաւ ուսուցանել զգիրս արտաքին իմաստասիրացն։

Եւ ապէցոյց զամենեսին առաւել քան զիմաստունսն Հելլենացւոց։ Եւ ապա զչորեքտասան թուղթսն Պօղոսի առաքելոյն եւ զԱ. ոս որս գիրս Աստուածաբանին Գրիգորի։ Եւ էր տէրն ուխտին առաջնորդ հեզահոգին եւ ընտրեալն յորովայնէ՝ տէրն Եպիսկոպոսն Տէր Աբրահամ եւ մեծ իմաստասէրն քուերորդին մեծ վարժապետին, որ ունէր ըզմիտսն իրրեւ զհրեղինայ, եւ էր սիրող ամենայն առաքինութեանց։ Եւ երկոտասան եղբարք, աշակերտք մեծին Սարգսի, մեք էաք որ յետ մահուանն նորա գնացաք յաշակերտութիւն նորա. առաջին՝ Յակոբ, Մարգարէ, Յովհաննէս, Մկրտիչ, Կարապետ, Մելքիսէթ, Սարգիս, Մատթէոս, Կարապետ եւ ես անարժանս Թովմա։ Եւ երկու ամ զմեզ մխիթարեաց Աստուածաշունչ գրովք։ Եւ ի հաստատ-

մանել անօրինաց շարժեցաւ ի գաւառէն Սիւնեաց առեալ զմեզ՝ եկն ի գաւառն Արծրունեաց։ Եւ արարեալ իւր բնակութիւն զաստուածահաճոյ ուխտն Մեծոցայ առ հեզահոգի եւ աստուածաբան եւ երջանիկ այրն Աստուծոյ վարդապետն Յովհաննէս. եւ յոյժ ուրախացաւ վասն զի ի նոյն ամին 858 աւարտեալ էր զնորաշէն տաճարն տերոյ Աստուածածնին։

Եւ ժողովեցան առ նա բազումք ի վարդապետացն. Գրիգոր նահատակն եւ տերոյ այրն Թլատեցի, Յակոբ Ովաննայի ի Ռշտունեաց, Մարգարէն ի Վարազայ, Յակոբ ի ՅԱպխանկու, Յովհաննէս ի Փսիդինոյ, Ստեփաննոս ի Բերկրոյ, Մկրտիչն ի Հիզնայ, Յովհաննէսն ի Բազիշոյ, Սարգիս վարդապետն ի Յարութենէն, Մելքիսէթն ի Յերզնկու, եւ ի քահանայից և յաշակերտաց աւելի քան 80 արեղայ։ Եւ զամ մի լման վիսիթարեաց զամենայն եղբարսն անճառելի ցնծութեամբ. եւ զերիս գիրս մեկնեաց դասիւ՝ զԱւետարանն Յովհաննու աւետարանչին, զգիրս Յոբայ նահատակին եւ զգիրս դրշութեան երկոքեան վարդապետացն Գէորգայ Լամբրոնացւոյն եւ Արիստակէսի։

Եւ ի սոյն ժամանակի ի խնդիր եղեալ վասն կապանաց Աղթամարայ. եւ մեծահանդէս ժողով արարեալ արձակեաց զամենեսեան (ի կապանաց) հնոց կաթողիկոսացն մերոյ։ Եւ վերսկայսու եւ

նախախնամող էր երջանիկ եւ երանելի ճգնաւոր վարդապետն Յովհաննէս Մեծոպոյ վանիցն, որ կայր ի վերոյ բազմութեան եղբարցն եւ կերակրէր զամենեսեան հացիւ եւ հանդերձիւ. եւ կայր ի մեծի փառաւորութեան սքանչելի այրն Աստուծոյ Յովհաննէս վարդապետն մեր : Եւ այս էր ի թուականիս մեր 868 ամի : Իսկ յետ ամի մի՛ոյ եկեալ աշակերտք նորա կային ժամանակս ինչ և զաղտագողի առեալ գնային ի գաւառն Արարատեան առ մեծ վարդապետն Յակոբ Սաղմոսավանից՝ հոգեւոր հարազատն իւր : Եւ մեք ամենեքին վարդապետք եւ աշակերտք գնացաք առ նա : Եւ եկեալ դարձեալ աշակերտք նորա ի Սիւնեաց ի տեղի առաքելոյն Սատթէոյ խնամատարն եպիսկոպոսն և վարդապետն Տէր Սարգիս՝ տարաւ զնա : Եւ յետ ութն աւուր գնալոյ նորա հիւանդացաւ եւ փոխեցաւ յաստի կենացս ի հանդերձեալն. որոյ յիշատակն եղիցի՛ օրհնութեամբ, եւ աղօթիւք նորա Քրիստոս մեզ ամենեցուն ողորմեսցի՛ : Իսկ սքանչելի այրն Աստուծոյ Յովհաննէս՝ վարդապետն մեր, ի տոյն աւուրս հանգեաւ ի Քրիստոս, և տարեալ եդաք ի մեծահանդէս ուխտն Հայոց թուականիս՝ զերեսնամեայ նոր վկային Յովսեփայ և Եղիա վարդապետի նոցա : Եւ սուգ անբժշկելի մնայ ի վերայ երկրի մերում՝, մեզ եւ ամենայն բնակչաց անապատին եւ գաւառին, զի ոչ եղաք արժանի

սուրբ Եշխարայ նորա, թէպէտ աղօթք նորա եւ բարեխօսութիւն է ընդ ամենայն ծագս երկրի. ամէն։

Այս երջանիկ եւ սատուածահաճոյ վարդապետս Յովհաննէս եւ բարի օրինակս ամենայն առաքինութեանց եւ եկեղեցւոյ վարդապետաց էր ի դաստէն Քաջբերունեաց, ի գիւղաքաղաքէն Զարիշատու, բարեպաշտ եւ սատուածասէր ծնողաց զաւակ սրբոյ քահանայի միոյ Ներսէս անուն։ Եւ խնդրեաց յԱստուծոյ եւ խոստացաւ նմա եթէ լցի զաւակ նմա՝ տայէ զնա Աստուծոյ փոխարէն անձին իւրոյ։ Իսկ որ զկամն երկիւղածաց իւրոց առնէ բարերար եւ մարդասէրն Աստուած եւ նմա զաւակ բարի, եւ եղ զնա յուսումն Աստուածաշունչ գրոց յատուածաբնակ սուրբ ուխտն գեղեցկաշարդ անապատն սուրբ Աստուածածնի Մեծոցայ վանք վերաձայնեալ, առ հրեշտակապետն եւ ճգնաւոր այրն Աստուծոյ Ներսէս կրօնաւորն։ Իսկ նորա վարժեալ եւ ուսեալ զՍաղմոսն Դաւթի եւ զմանր ուսումն եկեղեցւոյ։ Եւ տեսեալ զնա հեզահոգի և սրբազան արհի եպիսկոպոսն Տէր Ներսէս՝ կոչեաց զնա յաստիճան քահանայութեան. եւ նա եւս զանձն իւր յընծայ Աստուծոյ. եւ կրթէր ի վարս ճգնութեան՝ մանաւանդ ի յերկս եւ յաշխատանս Աստուածային գրոց գեր ի վերոյ գոլով ամենայն ընկերաց իւրոց։ Եւ շարժեալ ի Հոգւոյն սրբոյ կամէր եւ ցանկայր

հասանել վարդապետական իմաստութեան ։ Եւ ոչ դոյր վարդապետ ի ծովեզերս Ասպուրականին ։

Այս միաբանեալ հետ սրբասէր եւ բարեբարոյ քահանայի մոյ Ստեփաննոս անուն, որ եւ նա աշակերտեալ էր վարդապետին Մոկսիսի ի նոյն անապատ ։ Եւ ելեալ գնացին առ մեծ վարժապետն Յովհաննէս մականուն Կոխիկ, յերկիրն Սիւնեաց ի յՈրոան գաւառ, որ իրրեւ արեգակն փայլէր ընդ ամենայն աշխարհս Հայոց եւ լուսաւորէր զամենեսեան ստուգային գիտութեամբ . եւ կայր ընդդէմ հերձուածողաց աղթարմայից երկաբնակաց ։ Եւ յոյժ սիրեցեալ եղեն ի նմանէ իրրեւ հրեշտակ Աստուծոյ և ընկերակից նորա Ստեփաննոս զերիս ամս աշակերտեալ՝ եւ նա գաւազան իշխանութեան զալ մխիթարել զքաղմութիւն քրիստոնէիցն եւ վանորէիցն անխրատից զի անտերունչ էր գաւառն այն ։ Իսկ երանելի այրն Աստուծոյ Յովհան երկոտասան ամ առնա դադարեալ աշակերտակից ունելով զմեծ վարդապետն Գրիգոր եւ բազում վարդապետս եւ աշակերտս. եւ նա ուխտ եղեալ էր անձին խրատ եթէ տացէ ինձ Աստուած իշխանութեան կարգ վարդապետութեան՝ վկայ ինձ Միածին Որդին լիցի, որ մօր նորա Աստուածածնի Կուսին տաճար չինեմ յոյժ հրաշալի ։

Իսկ մեծ վարդապետն Յովհաննէս յ835 թուականի

նին եւ նմա զգիրս առաքելական վարդապետական կարգի ի բերան առնուլ զի տայէ նմա հրաման իշխանութեան : Եւ ի նոյն ամի յանկարծակի ակարացեալ հիւանդացաւ, եւ կամ եղեւ Սարգիսն գնալ առ նա. կոչեաց զմեծ վարդապետն եւ զընկերակիցսն նորա , օրհնեաց զնոսա ամենայն հոգեւոր եւ աստուածային օրհնութեամբ, եւ եդ զԳրիգոր ամենեցուն գլուխ եւ ուսուցիչ , եւ յանձն արար նմա զվարդապետն Յովհաննէս տալ նմա զվարդապետական իշխանութիւն եւ առաքել յաշխարհ իւր :

Իսկ նորա յետ մահուան մեծին Յովհաննու արար մեծահանդէս կոչումն, եւ եւ նմա վարդապետական զաւազան, եւ առաքեաց յերկիրն իւր վարդապետական ճոխութեամբ եւ աշակերտօք յետ աւերման վերին կողմանն ի չար բռնաւորէն Թամուր Զաղաթայէն : Եւ եկեալ նորա ի սեպհական զաւառն իւր ուրախութեամբ եւ ցնծութեամբ : Եւ էին ընդառաջ նորա մեծ վարդապետն Սարգիս ի մեծ ուխտէն Խառաբատայ աշակերտօք իւրովք եւ ամենայն բազմութեամբ հաւատացելոցն. եւ յետոյ եկն ի հայրենի տուն իւր ի տուրբ ուխտն Մեծոցայ վանք յաւուր Ներ Կիւրակէին :

Այս էր տեսանել զուրախութիւն անապատին սրբոյ եւ ամենայն ընկերայ իւրոյ զի տեսանէին

զնա իբրեւ զուսուցիչն Գրիգոր և կամ զԱպար՝ սիրելին Քրիստոսի, յարուցեալ ի մեռելոց : Եւ յերկրորդ ամին սկիզբն արար շինութեան տուրբ եկեղեցւոյն վասն դաշանցն եւ ուխտին եղելոյ. եւ ոչ պատահեցաւ զի ոչ զոյր խմաստուն ճարտարապետ ի գաւառ իւր : Իսկ նորա համբերեալ ժամանակ ինչ մինչ ի Տեառնէ, մինչեւի յաջողումն գործոյն. բայց զարդարեաց զտուրբ ուխտն ժամօք, աղօթիւք եւ պատարագօք, ընթերցմամբ գրոց եւ ուսումնականօք եւ զեղեցիկ կարգաւորութեամբ, ծառօք եւ տնկօք իբրեւ զդրախտն եդեմական : Եւ զայն հաստատեալքն եւ շարժէին ի բարին, եւ ասէին. ահա տեսաք զԵրուսաղէմ : Քարոզութեամբ աւետարանին վարդապետութեամբ ըստուերեաց զՀրէշակայն Վասպուրական գաւառս, մանաւանդ ճգնաւորական վարուք եւ տքնութեամբ անցուցանէր զկեանս իւր մինչ զի յամենայն ժամանակս իւր զգլուխն իւր ոչ եդ ի տնաս. այլ զիրս ունելով ի ձեռին՝ այնու անցուցանէր զպանդխտութիւն կենցաղոյս զառնութեան : Եւ այնուհետեւ եառնու շնորհս բժշկութեան Տէր Յիսուս : Զի զյաւս եւ զհիւանդութիւնս փարատէր ի յախտաժետաց Աւետարանին ընթերցմամբ եւ ձեռն դնելով ի վերայ տկարաց ոչ միայն հաւատացելոց այլ եւ անհաւատից : Եւ կատարէր Քրիստոս զխնդրուածս նորա վասն սերտ հաւատոյն, զոր ու-

նէր առ Քրիստոս, եւ յուսոյ հաւատացեալքոյն : Եւ վասն այսորիկ սիրելի էին ի յանհաւատիցն եւ ի հաւատացեալքոյն իբրեւ ճշմարիտ այր Աստուծոյ : Այլ և յոյժ տագնապէր հոգի իւր վասն շինութեան սուրբ եկեղեցւոյն :

Իսկ որ զկամն երկիւղածոյ իւրոյ առնէ եւ աղօթիս նոցա լսէ : Այր մի ի գերութենէ Թամուրին ազգաւ Հոռոմ Ֆարաճ անուն եկեալ էր ի Մերդին քաղաք՝ յոյժ խնամուն եւ ճարտար շինող : Յղեաց եւ կոչեաց զնա, եւ սկիզբն արար շինութեան սուրբ եկեղեցւոյն յաւուրս Զաքարիայի յորմէ ամենայն եկեղեցիք Հայոց ի հիմանէ քակեալ լինէին : Եւ թէպէտ բազումք յանհաւատիցն մախայեալ լինէին, եւ միանգամ կամեցան (քակել) անհաւատքն զառաջին հիմնարկութիւն ի քաղաքին Սրճիշոյ. այլ Զաքարիայն զայր եւ անձամբ առնոյր ի վերայ անձին իւր զբարինան, եւ բերէր զնէր ի հիմն սուրբ եկեղեցւոյն. եւ զթշնամիսն սուրբ եկեղեցւոյն նկուն եւ սիր ի բերան առնէր Աստուած : Եւ յետոյ սակի վճարեաց Աստուած աղօթիւք վարդապետին եւ աներկիւղ յուսոյն զոր ունէր առ Քրիստոս միաբանութեամբ սուրբ ուխտին որք զանձինս իւրեանց եռուն Աստուծոյ եւ սուրբ եկեղեցւոյ Տէրածին Կուսին : Յ851 ամին թուականին սկսաւ, եւ յ858 ամին աւարտեցաւ յետոյն ամին

ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն։

Ի սոյն ամի եկն վարժապետն Գրիգոր վարդապետոք եւ աշակերտոք. եւ գնացեալ դէմ ընդառաջ նորա հոգեւոր ծնողին իւրոյ, եւ բերեալ յանապատն իւր՝ հանդոյց զնա ի բազում աշխատութեանց իւրոյց։ Եւ ժողովեցան առ նա բազում վարդապետք եւ աշակերտք՝ մեռոսան վարդապետք եւ 80 կրօնաւորք, որպէս յառաջագոյն գրեցաւ. եւ պայծառացեալ լուսաւորեաց տաճարին վարդապետութեամբ զամենեսին իբրեւ Փրկիչն մեր Յիսուս, որ նստէր ի լերինն եւ ուսուցանէր զամենեսեան երանութեանցն (27) վարդապետութեամբ։ Իսկ տուրբ վարդապետն Յովհաննէս անճառելի ուրախութեամբ զուարճանայր եւ ի սպասու կայր պիտոյին պակասութեան։ Եւ ասէր առ Քրիստոս «Տէ՛ր Յիսուս՝ եա զՄոյր քոյ պատուեցի, զոր զիս պատուեցեր վարդապետոք եւ հոգեւոր հարքդ խմբք եւ զքոյ աշակերտոք եւ զքաղքոք եւ ճգնաւորոք եւ ճշմարիտ ուսումնականոք, եւ ինաւակատիս տաճարի Մօր քոյ առաքեցեր զնոսա։ Զի՞նչ տայ քեզ փոխարէն եւ հատուցումն, զի ոչ ինչ ունիմ աղքատիկս, բայց միայն օրհնեմք եւ գովեմք զամենատուրդ Երրորդութիւնդ եւ զմայր Միածնիդ զի արժանի արարեր զիս հատանել յաւարտ տաճարիս։ Եւ այս ոչ է բաւական միայն օրհնել զի զոր ի հրեշտակաց եւ ի

հրեշտակապետաց օրհնութիւն. այլ զանձն իմ իսկ եղիցի ի վերայ քո. այլ երթեալ քարոզեցիր յայսմանէ անհաւատիցն թէ սուտ է առաջնորդն ձեր, և դուք մոլորեալ էք ընդ նմա ի կորուստն անդիտաց։ Դարձարձ՝ ի Քրիստոսն իմ և տեսէք թէ ո՞րքան պարգևաց բարեաց պարգևեսցէ ձեզ»։

Եւ ոչ թէ միայն ի ծերութեան ժամանակին քարոզէր անհաւատիցն սուտ և խաբեբայ զոլ զնոսա. այլ զամենայն ժամանակս իւր անուշ, անբիծ նախատէր զնոսա և զկորուսիչ առաջնորդն նոցա։ Եւ ոչ որ իշխէր մեկել ի նա ձեռն ոչ իշխան եւ ոչ որք ընդ իշխանութեամբ. այլ սարսէին ի պատկառելի դիմաց նորա զի կենդանի նահատակեալ էր ըստ մարմին իւր պահօք եւ աղօթիւք եւ ամենայն արութեամբ։

Իսկ մեծ վարդապետն Գրիգոր օրհնեաց զաշխարհս մեր, և առեալ զաշակերտս իւր՝ ելեալ գնաց ի գաւառն Արարատեան։ Եւ վարդապետն Յովհաննէս և ամենայն աշակերտքս զհետ նորա ընթացաք։ Եւ անտի ելեալ գնացաք ի շնորհալից աթոռն իւր տուրբ Առաքելոյն Թադէոսի։ Եւ աստուս ութառաջ մնացեալ. և ապա կոչեաց զնա առ ինքն վերին Կոչողն տալ նմա զաշխատութեան վարձն յաւուր ոսնի ԵախտակայինՍտեփաննոսի մեծի առաքելոյ։ Իսկ սքանչելի այրն Աստուծոյ Յովհաննէս

վարդապետն Ոնոյ ի դատառն Սարատեան, եւ հասեալ ի Զատկի յարութեան տօնն՝ ի նոյն յօրն որ ասի Անակիզն Աստուած, ի յարութեան օրն գնաց առ Քրիստոս։ Վասն այնորիկ անդ եղեւ վախճան կենաց նորա, զի գնաց երկիր պագանել աստուածամուխ գեղարդեանն առաջի պատկերին Ամենափրկչին, որ և դրոշմեալ եղեւ աղօթիւք սուրբ Աւետարանչին Յովհաննու ի վերայ սրբոյն Գողգոթայի ի խնդրոյ տիրամօր Աստուածածնին։ Եւ յետոյ պարդեւօք տուաւ Աշոոյ թագաւորին ի Հառունոյ թագաւորէն. և բերեալ եղեւ ձեռամբ կիւրապաղատ իշխանին։ Եւ անդ երկիր պագեալ, հասեալ վախճան կենաց նորա վերափոխեալ եղեւ ի կեանս անպատումն առ Տէր Յիսուս, որում բաղձայր հասանել։ Եւ մեք աշակերտք գրով նմա եւ հոգեւոր որդիք, Մկրտիչ և Թովմա և նահատակն մեծ վարդապետն Ռշտունեաց Յակոբ և վարդապետն Մկրտիչ ի Բերկրոյ, ժողովեցաք և բազում եղբարս, և եղաք զնա ի հանգստարանի նոր վիճին Յովսեփոյ և Եղիա վարդապետին ի մեծահանդէս ուխտն Հայոց թառ։ Եւ բազում բժշկութիւնք լինէին ի սուրբ ոսկերաց նորա ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, եւ աղօթիւք նորա Տէր Յիսուս ողորմեսցի. ամէն։

Դարձեալ դարձյուր ի նոյն կարգ պատմութեան ուստի սկսեալ էր։ Յ850(28) թուականին շարժեցաւ վիշապն մահաշունչ Թամուր ի Սմրղանդայ և եկն ի վերայ աշխարհիս մեր, և գնաց ի տուն Շամայ. աւերեաց զՀալապ և զամենայն շրջակայս նորա։ Եւ անտի գնացեալ ի Դամասկոս ի Դմշկի քաղաք՝ աւերեաց զամենայն աշխարհն ներքին մինչ զի մերձ գնային վայրուց քաղաքին Երուսաղէմի։ Եւ ձմեռն մի լման եկաց ի Դամասկոս։ Եւ եկին առ նա կա. նայք առաջնորդաց նոցա որք էին ուսուցիչք Ղադի, Միւֆրի, Միւռաիս, Իմամ և Դանիշման։ Եւ ասեն «զու փառիշահ ես ամենայն աշխարհիս, և ի հրամանէ Աստուծոյ եկեալ ես զի նոքա որք զհրամանն Աստուծոյ կոխեալ են՝ հարցանես, մինչ ոչ զոյ այսպիսի հարցանող իրրեւ զքեզ, և զայնպիսիսն որք չարքն են՝ իշուցանես կենդանւոյն ի գժոխս. վասն զի յայս քաղաք ամենեքին չարագործք և արուագէտք են մանաւանդ սուտ և խաբեբայ մոլէքն»։ Ասէ ցնոսա «մի զուցէ սուտ լինիցիք և զուք սատակիք ի ձեռաց իմոց»։ Ասեն ցնա «մի լիցի սուտ ի դատուց կանանց, զու կոչեա՛ զառաջնորդսն մեր, և զէմ յանդիման վկայեմք նոցա»։

Եւ հրաման արար բռնանդակ ամենայն քաղաքին սատիկ և ահեղ գոչմամբ զամենայն առաջնորդս չար ուսմանն առ ինքն կոչել։ Եւ վաղվաղակի ժո.

զուլեցին զամենայն դարի և միտառախ. և ասէ «այս քաղաքս ո՞ւմ քաղաք է». Եւ նոքա ասեն «փիղարա՝ բէրին է փամոիշահ՝» : Եւ նա ասէ ցնոսա «փիղարիէրին գիրքն առ ձեզ ունի՞ք թէ ոչ». Եւ նոքա ասեն «մեր մահն և կեանքն նորա գրուած լինին, բայց ոչ ընթեռնումք» : Ասէ ցնոսա «փիղարիէրն ձեր հրաման տուեա՞լ է ձեզ չարագործութեան» — Ասեն ցնա «քա՛ւ լիցի» — Ասէ «եթէ լինիցի այսպիսի մարդ՝ իրաւունք պատասանի նորա զի՞նչ լինիցի» — Ասեն «ամենաչար տանջանօք պատժեալ տանջեսցին, և ամենայն ընտանեօք կործանեսցին» — Եւ ասէ ցնոսա «այն դուք էք» — Ասեն ցնա «Յոնոքքեար՝ այս քաղաքս Մուսուֆային է քաղաք. այսպիսի բան ոչ եղեւ և ոչ լինելոց է : Եւ կոչեաց զզկանայս առանձնորդացն. և նոքա եկեալ՝ զէմ յանդիման արանց վկայեցին զգործս անօրէնութեանցն զոր գործեալ էին :

Եւ հրաման եղեւ ի նմանէ՝ (և ասէ) 700,000 մարդ կայք առ իս՝ 700,000 զլուխ այսօր և վաղիւն այսր բերջի՛ք. և եօթն բերդ շինեսջի՛ք. որ ոչ բերիցէ զզլուխ՝ հատցի զլուխ նորա : Եւ որ ասիցէ. Ցի՞ սէի եմ՝ ի նա ոչ որ մերձեսցի : Եւ բազում զօրացն առ ի վերայ եղեալ՝ կոտորեցին զամենայն քաղաքն. և պակասեալ լինէին այր մարդ, և զլուխ գտանել ոչ կարէին. ապա կտրէին զզլուխս կանանցն

և զհրամանն ի տեղ բերէին ամենայն զօրքն : Այս էր տեսանել զօրինակն համօրէն զատաստանին և զգոչումն և զաղաղակն, զլայ և զհառաչումն : Եւ ով որ ոչ կարէր սպանանել զգլուխ մի՝ ի 100 թանկայ գնէր և տայր ի համարն : Եւ բազումք ի զօրայն ոչ սպանանել կարէին և ոչ գնել զգլուխս նոցին հաստանէին և ի շար մահ ելուր գնէին : Եւ հոգեւոր որդեակն մեր Մխիթար ի քաղաքէն Վանայ, պատմէր զանցս ազէտիցն և զմահ նոցին. որ և ինքն մազապուրծ եղեալ ապրեցաւ ի ձեռաց նոցին : Այս եղև ի Դամասկոս : Դարձեալ առաքեաց զզօրս իւր գնալ ի Պաղեստան քաղաք , և նոյն թուով համարաւ 700,000 մարդ ի Պաղեստան մատղէպ բերդ շինեցին : Եւ մէկին Ասանոյ և հոգեւոր որդեակն մեր Մխիթար էին ընդ նոսա : Եւ վասն այն ահին և երկիւղին Մխիթարն այն միակեաց եղեւ և առ մեզ բնակեցաւ երեք ամ . և ապա գնաց առ Քրիստոս : Եւ դարձեալ ի միւս ամին առեալ զզօրս իւր՝ եկն ի վերայ Սեբաստիա քաղաքին, և քաղաքն այն Իլորում Խոնդքեար բռնաւորին էր կողմանցն Հռոմին : Եւ նոքա զառաջինն ոչ եառն զքաղաքն ի յանողորմ բռնաւորն. և խաբեալ զնոսա ասէ ցնոսա «մի երկրնչիք զի ով զձեզ սրով սպանանէ՝ աւր նոցա ի սիրտս նոցա մտանէ» . Եւ նոցա բացեալ զքաղաքն՝ ելին ընդ առաջ նորին ուրախութեամբ և ցնծութեամբ

իրր ազատեալ ի բանտէ : Եւ առժամայն չար հրամանն եհաս ի վերայ զօրացս իւրոց զի զաղքատանդերի տացեն և զմեծատունսն չարչարեսցեն և ըզթագուն դանձս նոցա տացեն, և զկանայսն յաղխ ձիոցն կապել և արշաւել. և զորդիս և զաղտերս ժողովեալ ի դաշտավայրի միոջ անթիւ և անհամար՝ հրաման եառ իրրեւ զորայս կամնասցին կոխել զնոսա անողորմութեամբ :

Այս էր տեսանել զաղէտս տարակուսանաց անմեղ տղայոցն ի ձեռն չար բռնաւորին հաւատացելոցն և անհաւատից : Եւ այնքան զօրացն որ եկանէին ի բաղաքէն, և երդուանոցս ոչ ապանանել զնոսա, պատուել եառ զերկիր, և կապել եառ ոտիւք և ձեռօք 4,000 ոգի, և կենդանի թաղեցին զնոսա, և ջրով և մոխրով ծածկեցին զնոսա : Եւ աղաղակ նոցա յերկինս եկանէր: Եւ ո՞վ կարէ ընդ դրով արկանել զայս դառն տանջանս, զոր գործեաց կարապետ նեռին՝ անողորմ բռնաւորն : Բայց սակաւ մի ծանօթ առնեմ զեկեալդ զկնի մերում ժամանակաց, որ տեսաք և լուցաք ի քրիստոնէիցն, որ եկին առ մեզ զերիքն և տեսարք զերեսցն :

Եւ անդի չուեալ զնաց զօրօք բազմօք ի վերայ Խոնդքեար Իլարումի՝ որդւոյ Մուրատ Պէկին : Եւ նորա ժողովեալ զզօրս բազումս չորեքտասանիկ, և յոլով քան զզօրս բազումս Թուրքին՝ եկին ընդ առաջ

նորա : Եւ նորա խաբեալ զնա՝ խոյս ետ ի գիշերի և էառ զաշխարհն նորին, և յետս դարձաւ. և պատերազմեալ ընդունեաց զնա և զբազումս ի զօրայն(29) : Եւ արար աւար, և գերի էառ անթիւ բան զաստեղս երկնից և բան զաւազ ծովու, մինչդի 60,000 տուն Ղարաթաթար անուն տամբ և որդւովք ի Խորասան գերի գնաց. և այլ անպատմելի և անճառելի, զոր ոչ ոք կարէ ճառել : Եւ ի գնալն ի կողմանցն Հռոմոց Իլտրումին՝ եկն նախ ի վերայ տանն Վրաց գերել և կորուսանել զնոսա : Իսկ թագաւորն Վրաց Գորգի եւ երկու եղբարք Կոստանտին և Դաւիթ խնայեալ զչարութիւն նորա՝ վաղվաղակի զօրաժողով եղեն, և զամենայն ազգն Վրաց և Հայոց յամրոցս արկեալ պահէին. և ինքեանք գնեալ և զկածան տեղիսն ունէին : Եւ բանտարկուն ստոյնոյ մտեալ յերեք չարագոյն որդիք անօրէնք եւ անաստուածք՝ զաղուազդի բաժանեալ ի թագաւորէն՝ գնացին առ չար բռնաւորն, և ցուցին զգճանապարհն մտանելոյ ի մայրիս նոցա : Եւ յետոյ զօրս բազումս ի վերին կողմանէ, և ընդունեալ առին զամենայն բազմութիւն քրիստոնէական գնդին. զգերեալսն ստանային և զիրարունս գերի առեալ տանէին աւելի բան զ60,000 ոգի :

Իսկ թագաւորն Գորգի մաղապուրծ եղեալ՝ 100 ոգի առեալ ընդ ինքեան և ի մէջ զօրայն մտեալ

յիշելով զանուն Յիսուսի Քրիստոսի զբաղումն կատարեցին, և ազատեալ գնացին ի տեղի ամրա-կանին։ Եւ նոքա արով և հրով զամենայն աշխարհն Վրաց կործանեցին, զեկեղեցիսն բակեցին, զգերիսն առեալ հատուցին յաշխարհս մեր մերկ և բոկիկ, քաղցած և ծարաւած, ամեն հինգ Զաղամիայ 20 գերի ունելով։ Եւ բազում այն էր որ ի ճանապարհին մեռանէին. և նոքա քար առեալ չախչախէին ըզ-գլուխս նոցա զի մի կենդանի մնացեն. և ինքեանք թողեալ գնացին ի ճանապարհն իւրեանց։ Զոր տե-սաք աչօք մերովք և լուաք. և վայ և եղուկն բարձրա-ցաւ ի վերայ քրիստոնէից ազգիս. տեսանէաք ըզ-գերիսն եւ օգնել ոչ կարէաք. այլ հեղձամղձուկ լեալ՝ ողբալ եւ լալով խոյս տուեալ փախչէաք ի նոցանէ։

Եւ առեալ գնացին ի Խորասան. և պիղծ բռնաւորն զորդին իւր զԱիրան-Շահ անուն եդ ի վերայ կող-մանցն Ատրպատականի ի Թաւրէզ շահաստանի. և նա եդ որդւոյ իւրում Օմար անուն տեսչաց ազգիս քրիստոնէից։ Որ և յառաջին ամի իշխանութեան իւրոյ երեք իշխան յազգէս մերմէ, որք իբրեւ զճիւտ մի ողկուզաց էին մնացեալ ի մէջ ազգիս, դարձոյց բռնութեամբ ի յանհաւատութիւն՝ զորդի Իվանէին զԹոռն Բաւռթէլին զԲաւռթէլ անուն յազգէն Օր-բէլեանց զՏէրն Որոնոյ, և զեղբայր նորին Սրմ-

բան անուն տարան ի Սմրղանդ ընտանեօք իւրովք, որ յետոյ ասասուածային զղջմութեամբն և աղօթիւք նոցա դարձան ի Հայրենիս իւրեանց. և զՏէրն Եղեզդեայ Տարայիճ անուն՝ զորդի Գորգոնին ուրացուցին. և զՏէրն Մակուայ Հանին ի սուտ և յերկրաբնակ աղթարմայութենէն, և ազատորդի մի Սգիտան անուն ի յԱրարատեան գաւառէն ի գեղջէն Սղցուայ. որք և յետոյ զղջացան և եղեն ճշմարիտ հաւատացեալք Քրիստոսի եւ ժառանգք արքայութեան :

Դարձեալ չար վիշապն եւ նեռին կարապետն, ալիզնն Թամուր առեալ զզօրս և մտեալ ի յաշխարհն Հոնայ՝ յաղթեայ թագաւորին նոցա Թողթամիշ անուն. և զամենայն աշխարհն արար հնազանդ ինքեան : Եւ եդիր նոցա թագաւոր Իդիկայ անուն. և նստաւ նա ի Սարայ. և տիրեայ վեց ամոյ ճանապարհ մինչ ի յելն արեւու : Եւ դարձեալ զնայ ի յարեւելս ի Հնդկաստան, և էառ զԴիկի քաղաք(30), զոր և ասէին թէ 40 օր նստաւ անդ զօրօք իւրովք. և եղր քաղաքին ոչ զիտէր. այլ և հնազանդեցոյց զամենայն աշխարհն Սմարգանից որ է կանանց երկիրն : Այլ և էառ զԲէշբաղրայ եւ զԲալաշխան (Բաղաշխան)՝ զերկիրն Հնդկաց իւր ինքեան, եւ զծոմն զայն, ուր զմարգարիտն հանեն ինչանելով ի յատակս ծովուն :

Իսկ որդի Թամուրին Միրան-Շահ անուն, յոյժ ողորմած և բարեբարոյ. որ և ընկալաւ զմեծ վարդապետն զԳրիգոր սիրով իբրեւ զհրեշտակ Աստուծոյ : Եւ չարախօսէին նմա զԲաղէշ քաղաքի ամիրայէն Իբրահիմ անուն, որ նստաւ ամիրայ յետ եղբօր իւրոյ Ամիր-Շարաֆին, եթէ ոչ կամի հնազանդիլ քեզ : Եւ Իբրահիմն այն էր յոյժ առեցող Քրիստոսի և քրիստոնէից ազգի, և ոչ իբրեւ զեղբայրն իւր սիրող ամենայն քրիստոնէից. այլ կամէր բառնալ զհաւատս մեր. և կանչել ետ ի քաղաքին եթէ մի է Աստուած և ոչ Որդի և ոչ Հոգի. և այնպիսի Աստուած որ ոչ ունի խնամութիւն և ոչ հոգի : Եւ ոչ կամէր զխաղաղութիւն, և կապուտ արկ ի քաղաքին. և յոյժ դառնացան քրիստոնեայքն : Իսկ ողորմածն Աստուած զարթոյց զնա ի բարկութիւն : Ի յ845 թուականին եղեալ զօրօք իւրովք եկն ի յԱրճէշ քաղաք, երկիր պատեաց տուրբ եկեղեցւոյն և ոչ մնաւ ի մզկիթ Տաճկացն. այլ արհամարհեաց, անարգեաց զնոսա : Եւ եկն ի վերայ Բաղիշու յանկարծակի. և ամիրայն Իբրահիմ եկն առ նա. եւ ընդունեալ զնա՝ ասան, և բազում աւերս արար ամենայն քաղաքին և դաւառին : Եւ Տէրն Ոստանին Եղին ամիրայն անկեալ ի մէջ նոցա՝ հաշտութիւն արար նոցա : Եւ զորդի ամիր Շարաֆին փոքր տղայն Շահշահին անուն եդ ամիրայ, և գնաց ի Թաւրէզ :

Այս բան ի մէջ անկաւ ըստ կարգի շարադրութեան։ Այսքան առ այս։

Եւ սիրեցն Թամուր երթեալ յաշխարհն իւր՝ առ տակեցաւ չան սէս(31). և ունայր մեռեալն իրրեւ ըզ շուն ի սիրեցն խատիրայ Մաշարին։ Եւ անտի հանեալ ի հուր եդին և ի ջուր անցուցին. և սիրեցն ձայն նորա ոչ զադարէր բաղում ժամանակս։ Իսկ Թուրքմանն Յուսուֆ յետ տասակման Թամուրին ի յ857 առեալ զամիսս զօրս իւր տասասեալ և անդէն, եկեալ ի բանտէն Դամասկոսի եկն վերստին յաշխարհս մեր, նախ ի քաղաքն Բաղէշ։ Եւ որդի ամիր Թարագին Թամշատին ամիրայն գնացեալ ընդ առաջ նորա՝ յոյժ մեծարեալ զնա հայցալ և ջրեօք, ձիւրք, գինւոք և ամենայն գինուորական և պատերազմական պատրաստութեամբք։ Եւ առեալ եկն ի վերայ աշխարհին Ռշտունեաց և վանակերտին Վարդայ։ Եւ նոքա պատրաստեալ զզօրս իւրեանց՝ ելին ընդ առաջ նորա ասելի քան երիտասան հազար. և խաբեալ զՄէլիքն բարեբարոյ և սիրոյն և զզրմանծն քրիստոնէից նենգաւոր ազգն Ասրայ՝ խոյս եառն և փախեան։ Եւ նորա ասերեալ զաշխարհն հրով, կողոպտելով, սպանութեամբ և սպանութեամբ։ Եւ ապա եկեալ ի հնազանդութիւն եդին ամիրայն և Մէլիք որդին։

Եւ ի նոյն ամի եղեւ վախճան երկուց վարդապե-

ապան մերոյ մեծին Վարդանայ՝ սուրբ վարդապետին և բարեկամ սուրբ ուխտին Աստուածածնի Խաչատրատայ, աշակերտի մեծին Սարգսի, և Յովհաննու՝ ճգնաւոր վարդապետին Ռշտունեայ, որ աւելի քան զ50 ամ իրրեւ անմարմին հրեշտակ կայր կանգուն ի վերայ ոտից իւրոց յաղօթս և ի պաղատանս, զոր և տեսաք աչօք մերովք և վայելեցաք յաղօթից նորա : Եւ էր սա ի Բաղբերունեայց ի սուրբ ուխտէն Յարութեան որ Սպիտակայ վանք վերակոչի. ի դեղջէն Վախանից. որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի. և աղօթք սոցա ի վերայ ամենայն աշխարհի. ամէն :

Սոյա ամիր Եղբինա, որ հակառակ եղեւ Յուստինի, տէրն Ռատանայ ի յ842 թուականին ապան զկաթողիկոսն Սգէ ամարայ զՋաքարիա անուն : Զարին պատմութիւնն տեսցես ի գիրն Յայսմաւուրց սուրբ վարդապետին Գրիգորի : Եւ յանցեալ ամին զՏէր Թէոդորոսն՝ զՍոյ կաթողիկոսն տան և վեց տանուտերօք ապան ի նեղութենէ բրիտանէիցն Սոյ պիղծ մէլիք Օմարն : Եւ սուրբանն Սոյ ապան զմէլիք Օմարն չարաչար մահուամբ և զտուն տանչանօք : Փառք Աստուծոյ :

Եւ ոնոյ զօրացեալ Յուստին այն եկն ի Թուրքէզ և մարտեաւ ընդ Սամիր Միրան-Շահ Զաքարեայն՝ որդի Թամուրին. և էառ զԹուրքէզ և ապան

զնա, և կոչուտեայ զնա և զամենայն զօրս նորա ։ Եւ արար խաղաղութիւն վերին կողմանց աշխարհիս Հայոց ։ Իսկ յերկրորդ ամին զարձեալ զօրս գումարեաց որդի Միրան-Շահին, անթիւ և անհամար, Ասու-Բաբիր անուն՝ յոյժ զօրեղ զօրական ի պատերազմի ։ Եւ եկն ի վերայ Յուսուփին. եւ նստեալ ընդդէմ միմեանց աւուրս ինչ. և ի միում գիշերի գաղտագողի Ասու-Բաբիրն առեալ զզօրս իւր՝ փախեաւ. և եթող զառ և զաւար, զվրան և զարքունի դարանն և զամենայն զանձս ասն թագաւորութեան և զօրայ իւրոյ Թուրքմանին ։ Եւ նա յոյժ զօրացեալ եկն ի միւս ամին՝ էառ զԵրզնկայ քաղաք խաղաղութեամբ. զի իշխան քաղաքին Դարխարատ անուն ատակեալ էր ։ Եւ էառ զամուրն Մերտին, և զամենայն գաւառս նոցին. և եկն ի վերայ Սմթայ և Սրղնու, և խաղեաց զնոսա և աւերեաց զաշխարհն զայն ։ Եւ ի մէջ անկեալ տէր Երզնկային Փիր Օմարն՝ հաշտեցոյց զտէրն Սմթայ Օթման անուն Սղզոյինլու, սիրոյ յոյժ ազգիս Հայոց, քաջ զօրականն, որ և ասեն եթէ 72 պարոն ապանեալ էր եւ զՏիարպէկն յինքն գրաւեալ ։

Եւ ի այն աւուրս եկն սուլթան Ահմատ ի Պաղատատայ՝ մտեալ ի Թաւրէզ էառ զնա. և Սմբատ՝ որդի Իվանէին՝ թոռն Բռութէլին, զնայ առ նա խաբեալ ի խրատուց իւրոց ։ Եւ նա մեծարեալ

զնա՝ եւ զգեղն Անգեղակութ նմա պարդեւս : Եւ լուեալ Յուսուփին՝ փութանակի եկն ի վերայ զանին Թաւրիզու : Պատերազմեալ ընդ սուլթանին զանին՝ ընդունեալ սպանանէին զնա խեղդամահ արարեալ զի տեսրք էին տեղեացն, և դան ասէին և որդիս դանի : Եւ եղեւ ի նոյն ժամանակս խաղաղութիւն խնամօքն Աստուծոյ ամենայն աշխարհս Վրաց և Աղվանից, և շինութիւն ամենայն աշխարհս, մինչ զի յԱրճիշու մինչ ի գաւառն Արարատեան մարդիկ ի յաւեր ոչ բնակէին. այլ ի շէնս բնակէին. և թէպէտ հարկապահանջութիւնն բաղում էր. սակայն խաղաղութիւնն առանց խռովութեան էր : Եւ ծաղկեալ էին եկեղեցիք քահանայիւք և սարկաւագօք. և մարդիկ որք յաւուրս Զաքարէին ի հաւատոց ուրացեալք էին, եկին ի հաւատս՝ Բուռթէլն Որոնոյ, Տարսայիճ Եղեգեայ, Սուրբաթիշ՝ Մակուայն, Աղիսան՝ Աղցից : Եւ յԱրճէշ զվանքն զոր առեալ էին Տաճիկք, եւսն զեկեղեցին. եւ յոյժ ուրախանային հաւատացեալքն :

Իսկ պիղծն Բելիար ոչ կարաց տանել հոգեւոր ուրախութեան եկեղեցւոյ. այլ յարոյց պատերազմ ընդդէմ Պարսկաց. զի տղայ մի ի Թաւրէջ քաղաքէն Յուսուֆ անուն՝ յոյժ հայհոյիչ և ատելոյ անուան Քրիստոսի, առնու զպիղծ ոսկերս շանց, և երթեալ զհետ տղայոցն քրիստոնէից, և ձգէ զպիղծ ոսկերս

ի կարաս քրիստոնէից : Եւ էր վարդապետ մի Սուք-
ինանոս անուն յաշակերտաց մեծին Գրիգորի. և նա
և ամենայն քրիստոնեայքն անտի ջուր ըմպէին : Եւ
ի սոյն գիշերի բացեալ լինի կամարն երկնից, եւ
իջանէ Քրիստոս յերկնից՝ նստեալ ի վերայ հրեղէն
աթոռոյ, և երկոտասան Առաքեալքն ընդ նմա : Եւ
էջ ի տեղին յորում Յուսուֆն ննջեալ էր. և ասէ
Տէրն «ըմբնեցէ՛ք զողայդ զայդ և տարեալ ցուցէք
զտեղի չարչարանաց պիղծ առաջնորդի դոցա եւ
ամենայն հեռեւողաց նորա, եւ ապա ասասա՛ք զդա
զի գնայցէ ի նոյն տեղի տանջանաց նոցա : Եւ ա-
ռեալ զնա հրեշտակքն տարան ի դժոխքն եւ ի բա-
ցածուալ հուր դեհենին, որ այրէր զառաջնորդ
ազգին եւ զամենայն հեռեւողս նորին : Եւ նա ունէր
զկերպարան շան, եւ ձայն կաղկանձելոյ գայր ի
միջոյ հրոյ հնոցին. եւ շղթայ արկեալ էր ի պարանո-
ցին : Եւ ասէր հրեշտակն «ահա՛ առաջնորդն քոյ
եւ ահա՛ ժողովուրդք նորա» : Եւ անտի հանեալ ըմ-
նա՝ տարեալ ցուցին զարքայութիւնն երկնից եւ ըմ-
վայելչութիւն գեղեցկութեան նորա, եւ զամենայն
անդրանկաց հոգւոց դասուն զուրախութիւնան եւ
զամենայն առաջնորդս քրիստոնեայ ազգին : Եւ
ասէ հրեշտակն «տեսանե՞ս ո՛վ մոլորեալ՝ զհաւատա-
ցեալսն Քրիստոսի Աստուծոյն մերոյ եւ զԿոյսն
Մարիամ Աստուածածին, եւ տեսանե՞ս զԼուսա-

տրիչն Հայոց ասասուածային փառաք փառաւորեալ։ դու զի՞արդ զազգս Հայոց հայհոյեալ անարգես։ Հաւատա՛ ի խաչ ելեալն Քրիստոս, եւ ե՛րթ, մկրտեա՛ յանուն Աստուծոյ Երրորդութեան զի մի գնայցես ի յայն տեղի տանջանաց, յորում՝ տեսար. այլ յայս տեղիս փառաւորութեան յորում՝ այժմ ի ներս կաս զի ինքն Քրիստոս առաքելոքն իւրովք ինչեալ է յերկնից եւ եկեալ առ քեզ»։

Եւ անտի զարձեալ բերին առ տսկալի եւ հրեղէն աթոռն Քրիստոսի. եւ տեսեալ զՔրիստոս՝ ահագին զոչէր որպէս Թովմա «Տէ՛ր իմ եւ Աստուած իմ՝ մեղայ քեզ, խոստովանիմ եւ հաւատամ զքեզ ըստեղծող եւ արարիչ, եւ զՀայրն քոյ ամենակարող, եւ փառակից զճշմարիտ քոյ Հոգին Աստուած, միայն ապա՛ւ արա զիս ի մեղայ իմոց զի մի գնայցեմ ի տեղի տանջանաց չար առաջնորդին մերոյ։

Եւ յանկարծակի տեսիլ երազոյն խափանեցաւ, եւ յահագին զոչման ձայնէն ընտանիք նորա՝ մայրն եւ եղբարքն նորա, զրան զաւանութեան որ եղանէր ի բերանոյ նորա, լսէին. եւ զարհուրեալ ապուշ մնային. եւ զերեք տիւ եւ զերեք գիշեր զնա զարթուցանել ոչ կարէին։ Եւ յանկարծակի վերացաւ աթոռն ի յերկինս. եւ նա զարթուցեալ ի քնոյ տեսլեան գիշերոյն ելեալ շնորհօք Հոգւոյն սրբոյ սկսաւ սարսիկ լեզուաւ զաւանել զՔրիստոս Աստուած եւ

Տէր ամենայնի ։ Եւ երթեալ յետ սակաւ աւուրց առ վարդապետն Սուրբանոս մանուն ըստուկ՝ ասէ նմա զտեսիլն ահագին. եւ մկրտեալ ի նմանէ՝ եղեւ քրիստոնեայ ։ Եւ գիտացեալ անօրինացն զի թմբուկ ի ձեռին առեալ դաւանէր զՔրիստոս Աստուած ի մէջ քաղաքին ։ Եւ ժողովեալ բազմութիւնք անօրինացն՝ ազգի ազգի հնարիւք հնարէին ողբանօք եւ սգաստանեաւք. եւ ապա հանեալ ի յուզտ ի բոլոր քաղաքին ի շուրջ ածէին. եւ նա ասէր «Տէր Յիսուս Քրիստոս՝ վաղվաղակի բարձրացուցեր զիս յայսմ աշխարհի զի ես ուզում ընթանամ. սրբոյ՝ հեռիոս ։ Եւ իջուցեալ զնա չարչարեցին այնքան զաւն տանջանօք մինչ զի 40 օր ի մարթ ծրարեցին, եւ առողջացեալ հանին զնա ընտանիքն ։ Եւ գնացեալ ի Սուլթանիա անդ եւս չարչարեցաւ. և գնացեալ ի Սմրղանդ. եւ անտի գնացեալ ի կռապաշտից յաշխարհն հնդեստան աւուր ճանապարհ՝ եկն ի Պաղտատ ։ Եւ չարչարեալ ի նեստորական ժողովրդենէն զՔրիստոս Աստուած դաւանեաց մըտեալ ի Մաշտոց Սվին. եւ գաղտաբար մնաց ի ներս ի գիշերին եւ եռես զխաբէութիւն նոցին զի ասէին հուր վառի ի սին ։ Եկն առ մեզ ի դաւառն Քաջբերունեաց ի տուրբ ուխտն Մեծոցս ամիս վեց. եւ ապա գնացեալ ի յՍմրնէշ քաղաք՝ դաւանեաց զամենասուրբ Երրորդութիւնն ։ Եւ տեսեալ ան-

օրինայն՝ վաս վարեցին եւ թաղեցին մինչև ի մէջքն եւ քարկոծ արարին որպէս զնախամէկայն Ստեփան-նոս : Եւ յետոյ մեղէքն ազատ արարին զի զբազուկն խորտակեցին : Եւ յետ վեց աւուր խորտակող բազկին չարաչար տատակեցաւ Սրամիշ անուն :

Եւ ապա ազատ արարեալ եկին զարձեալ առ մեզ. եւ գնացեալ ի քաղաքն Ամասիայ. եւ ժողովեալ զմանկունս Վրաց եւ Հայոց. եւ կերեալ միս խոզու՝ զամենս նոքա տարեալ էին ի մզկիթ նոցին : Եւ տեսեալ անօրինաց որ անդ կային, զոր յիմար իշխանն որդի Սրբուզին Իսմանէի բարձրացուցեալ էր զնոսա առաւել քան զամենայն ազգս քրիստոնէից որ առ նա կային : Եւ նոքա նենգութեամբ առեալ զանձս բազումս՝ եկին առ բնաւորն Յուսուֆ ի Վաղարշակերտ Բագրեւանդ գաւառին. և զչարութիւնն իւրեանց նմա յայտ արարեալ՝ առեալ գնացին ի տունն Վրաց եւ եառն զքաղաքն ի ձեռս նոցա :

Եւ նոքա իբրեւ կատարի եւ անողորմ գազան սուր եղեալ ի վերայ նոցա իբրեւ զգազան անմեղ զենուին ի վեր քան զհամար եւ զթիւ մտաց մարդկան. եւ զամենայն աշխարհն դերի առեալ զնին եւ զտղայ՝ գերութեամբ էին զամենայն աշխարհն Հայկազեան սեռի. եւ զամենայն քրիստոնեայքն ազգս ազգաց որոմելի արարին զկարգաւոր եւ զաշխարհական, եւ զհոգւոյ եւ զմարմնոյ ատոյուածս ի դին դերոյն եառն :

Եւ էր որ գոլութեամբ, եւ էր որ փախստեամբ ազատ առնէին զքրիստոնեայսն, եւ էր որ գաղանակուր լինէին։ Եւ ո՞վ կարէ պատմել եւ կամ ընդգրով արկանել զաղէտս տարակուսանացն և զկսկիծ լալոյ եւ ողբոյ հարցն եւ մարցն, որդւոցն եւ դստերացն։ Եւ եւս առաւել տեսանողքն ոչ կարէին ժուժկալել. կանայք զզարդարանս իւրեանց կողոպտէին, արք՝ զանասունս, քահանայք եւ կրօնաւորք զաղբատութիւնս իւրեանց ցուցին. ում ոչխարիկ եւ ում տաւարիկ կայր՝ տային եւ գնէին։

Եւ տեսեալ անօրինացն զյաժարութիւն նոցին՝ զամեն զերին հանեցին ի 10,000 եւ ի 20,000 մինչ զի քահանայի միոջ յԱրճէշ եւ յԱրծկէ երկերիւր երեսուն հազար դահեկան գնէին։ Եւ այս եղեւ կարուստ չար եւ անօրէն բնաւորին Յուսուֆին. զի երարձ Աստուած զօգնութիւն իւր ինամնէ, եւ այլ ոչ յաջողեցաւ նմա. եւ այս էր յ865 թուականին։ Դարձեալ գնաց յետ այսորիկ ի Տիարբէկն, եւ էջ ի վերայ կողմանն Թամոյ Իրրեւ ազուէս. եւ (Իրրեւ) ջղջկան տեսար յետս դարձաւ. զի որդին նորա ասատակեցաւ որ դան եղեալ էր ի վերայ ամենայն աշխարհին։

Եւ ի միւս ամին Օթմանն՝ տէրն Ամթոյ, էառ զԵրզնկայ եւ զՓէր Օմարն չարաչար ասատակեայ։ Ի միւս ամին Թահ-Ռուհն՝ տէրն Խորասանու՝ որդին

Թամարին, առեալ զչորս իւր անթիւ եւ անհամար զնդին՝ եկն ի Սուլթանիա եւ ի Թաւրէզ ի վերայ նորին. եւ նա ելեալ զնայ ընդդէմ նորին. եւ յորժամ մերձ եղեն միմեանց զի այսոր եւ վաղիւ մարտնչէին, զվրէժ զերութեանն անողորմ էառ Աստուած ի Թուրքմանէն զի հիւանդացեալ սատակեցաւ բռնաւորն այն. եւ զօրայ նորա զինքն անթաղ թողեալ՝ ի բաց զնացին. եւ եկին, հասին ի լալի եւ ողբմելի սգաւորացեալ աշխարհս Քաջբերունեաց։ Եւ նստեալ ի վերայ քրիստոնէից վանորէից եւ գիւղորէից մինչ յեղանակ գարնանային ժամանակին։ Եւ ի գնալն իւրեանց զամենեսեան կողոպտեցին. եւ որդի նորա Սապահան անուն բազում չանս եղեալ ի վերայ հաւատացելոցն եւ ողորմութիւնս արարեալ՝ ազատեաց զամենեսեան գնալ ի գուռն Ռշտունեաց. եւ մարգարէութիւն եղեալ ազատեցաք ի զօրայ Զաղաթային։ Զի իբրեւ արծիւ արնթաց հասին ի վերայ զօրայ Թուրքմանին ի յերկիրն Տարօնոյ. եւ թողեալ նոցա զառ եւ զաւար, և զաղտաղտոյն զնացեալ հասին յերկիրն Տամոյ ի դաշտին Սմիթ բաղաքին։

Իսկ որդի Յուսուֆին Սրանդարն ոչ հանդիպեցաւ առ հայրն իւր զի նստէր ի տեղի նորին. այլ եկն ի կողմանէն Պաղատայոյ, եւ առեալ զզօրս հօր իւրոյ եւ զբաջս Հիզանին՝ եկն ի Բաղրեւանդ գաւառ մերձ

սուրբ ուխտին չինեալ ձեռամբ Տրդատայ եւ Լուսաւորչին Գրիգորի՝ կամէր գնալ ի վերայ Շահ-Ռուհին. եւ Շահ-Ռուհն այն հասեալ ի Հեր եւ ի Զարեւանդ գաւառ, եւ ի վերջն՝ ի Բերկրի : Եւ համբաւ գալոյ Սքանդարին եհաս առ նա. եւ դարձեալ անհուն բազմութեամբ եկն եհաս ի Յարճէշ. փոս եւ հաստատեալ յերկուս տեղիս՝ վինն ի Յարճէշ եւ վինն՝ ի Զռապակ (32) մինչ ի լեառն Աղու. եւ ի միւս օրն եկեալ գնայ ի դաշտն Ապահունեայց ի Խանդաքն, եւ փոս եհատ յահէ զօրացն արի եւ զօրեղ զօրակցին Սքանդարին : Եւ հասեալ ի Վաղարշակերտ, ի դաշտն Բաղրեւանդայ՝ ճակատ առ ճակատ բանակեցան : Եւ մտեալ ի պատերազմ՝ հարկանէին ըզ միմեանս. եւ արի եւ քաջ պատերազմողն մտեալ ի մէջ անթիւ զօրացն Շահ-Ռուհին, եւ զբազումս սատակեալ ի զօրայ Զաղաթային, եհատ զենդունս փղին, եւ մի կին ի ծառայից նորա յարիշտակեալ ի տանէ Շահ-Ռուհին. եւ արկ ահ եւ երկիւղ ի վերայ արեւելեան գնդին: Իսկ Շահ-Ռուհն այն կայր առանց երկիւղի յահէ նորին : Ապա երթեալ ի ծառայքն ասեն ցնա զի՞ կաս խաղաղութեամբ, ահա՛ կորեաք յահէ քաջ և մեծամարտիկ որդւոյ Յուսուին : Իսկ նորա եկեալ ի խորանէն՝ հրաման եառ զուզոն եւ զանեանս տանել զառաջեաւ զօրուն. եւ գոչեցին առ հաստատակ վիրաբերան, եւ կոխարդքն ձգեալ զթուղթ

ի վեր յերկինս, եւ հանեալ զտուրս խրեանց՝ ի վերայ նոցա դիմեցին : Եւ վաղվաղակի և առժամայն ի տուր տուսերի հարեալ կոտորեցին զզօրս անհնազանդ Թուրքմանին :

Այսր էր տեսանել զաղէտ տարակուսանաց նոցին. զի զոչումն աղաղակի նոցա տարսեալ դողացուցանէր զերկրսին կողմանսն, որպէս քաջքն Վարդան եւ Մուշեղ տարին Պարսից : Այլեւ հայր ուրացաւ զորդի, և որդի՝ զհայրն, մայր՝ զդուստրն եւ դուստր՝ զմայրն :

Եւ երկու եղբարք Սքանդարն եւ Սպահանն մազապուրծ եղեալ գնային փախստական տակաւ զօրօք ի ներքին կողմն աշխարհին ի Մերսին, ի Մաւալ : Եւ ամենայն զօրքն եւ խիզան (33) անկան ի ձեռս Զաղաթային : Եւ ի նոյն տեղի ուր զգերիսքն բաժանեցին զՀայոց եւ զՎրաց. ի նոյն տեղիքն եւ նոքա գերեալք, եւ ի նոյն տեղիքն անթիւք եւ անհամարք սատակեալք կործանեցան : Եւ ո՞վ կարէ ընդ գրով արկանել զճիշ եւ զաղաղակ տղայոց անօրինաց, որ ի նոյն տեղիք մնային, եւ ամենեքեան սովալուկ և զաղանակուրք աղեն : Եւ այս էր ի թուականս մեր 870 ամին : Եւ Զաղաթային առեալ զտուն և զտուար՝ գնաց ի Խորասան ուստի եկեալ էր : Եւ փախուցեալ որդիքն Յուսուֆին՝ գնացեալ ի ներքին կողմն աշխարհին : Գիտացեալ զերթալ

նոցին եկն վաղվաղակի Ասպահան ճանապարհաւն Բաղիշու, զնացեալ ի Թաւրէզ նստաւ անդ տակաւ զօրօք աւուրս ինչ : Եւ միւս եղբայր Սբանդարն եկն Պարսատու ճանապարհաւն. մտեալ ի Թաւրէզ փախոյց զեղբայրն եւ էառ զաշխարհն ամենայն եւ նստաւ Թագաւոր ի վերայ ամենայն կողմանց մերոյ աշխարհայ : Եւ եղբայր նորա եկն ի Բասէն եւ էառ զամուրն Ասնկայ : Եւ ի միւս ամին գնայ առ միւս եղբայրն ի Պարսատ Շահ Մահմուտ կոչեցեալ, եւ համբերեալ զերիս ամ. եւ ապա միաբանեցոյց զզօրս իւր ի վերայ եղբօրն իւրոյ, էառ զամենայն աշխարհն Բաբելացւոց : Եւ նա փախուցեալ յեղբօրէն՝ անկաւ ի ձեռս Զաղաթային, որ և սպանին զնա զի էր այր խաղաղասէր և քրիստոնեասէր : Եւ բազմաց ասէին թէ Քրիստոսի ծառայ էր :

Եւ Ասպահանն այն ելից արեամբ զաշխարհն Բաբելացւոց զի առնոյր զգանձս աշխարհին եւ ծածկէր դաղանի եւ զպահաղ դանձին ոպանանէր. ոչ ի Տաճիկ խնայէր և ոչ յԱսորի : Ասերեայ եւ զերեայ զՄօալ եւ զՍնջար եւ զԹիլլաղ եւ զամենայն աշխարհն եւ ապա եկն ի վերայ Զիղիրու՝ անթիւ արիւնս արար : Եկն ի վերայ Մերանայ եւ սպան երեսուն քրիստոնեայս : Եւ տէրն Մերանոյ, որդին Օթմանին տուղան Համզէն եկեալ ընդ առաջ նորա, էառ զամենայն զօրս նորա եւ զկողոպուտն, եւ ինքն

մազապուրծ փախեալ ի ձեռաց նորա. զի արիւն անմեղացն գոչեալ առ Աստուած՝ կորուսին զնա եւ զօրս նորա : Իսկ Սրանդար որ նստաւ թագաւոր ի Թաւրէզ Տահատանին յ871 թուականին՝ եկեալ զօրօք խրովք ի վերայ Խլաթայ, եւ առեալ զերկիրն զամենայն՝ նստաւ ի վերայ բերդին Աղվանից : Եւ Տարաֆ անուն քուրդ մի անմիտ քրիստոնէիւք ապստամբեալ՝ ի բերդէն հայհոյէին զնա : Իսկ նորա բարկացեալ հրաման եառ զօրացն նեռածիզ լինել ի վերայ նոցա, եւ առ ժամայն առին զնա. եւ տուր եղեալ ի վերայ քրիստոնէիցն՝ 150 ոգի ապանին ի ժողովրդենէն որ անդ կային եւ 60 հոգի մին դարշադէմ քրիստոնէի զենուլ եառն ի Ծղակայ եւ յԱղվանից, եւ զայլ բազմութիւն կանանց եւ որդւոց առեալ տարան գերի, եւ կորուսին զբազումս :

Եւ էր զի տակաւ գնեալ արծաթով ի յեռս դարձուցին. եւ յայնմ օրէ ի հետ ի լաց եւ ի սուգ նստաւ ամենայն ազգս Հայոց մինչ ի վերջին օր ստուգման նորա : Եւ յերկրորդ ամին եկն ի վերայ Բագիշու եւ Խլաթայ, կոչեաց զամիրայն Տամշատին փեսայ իւր եւ ասէ «տուր ինձ զբերդն Խլաթայ» : Եւ նորա գնայեալ ընդդէմ բերդին՝ արձակեաց զգօտին որ ի միջին եւ պինդ կապեալ դարձեալ : Եւ Էմիրն այն զվարշամակ գլխոյն ի վայր ձգեաց նշան տալով թէ

զդլուխս հատանեն՝ զդղեակն մի տայք. այլ պինդ պնդեցէք զգօտիս ձեր : Իսկ նորա բարկացեալ՝ հրաման եւ զօրայ իւրոյ հատանել զդլուխ նորա : Եւ ըմբռնեալ զտէրն Ռշտունեաց սուլթան Ահմատ անուն՝ զորդի Եզդին ամիրային, և փութանակի եկն ի վերայ դղեկին Վանայ, եւ տեսեալ զաշխարհն ամենայն. եւ նստաւ չորս ամիս ի վերայ նորա. եւ ի հապրիլ բերդին անթիւ եւ անհամար քրիստոնեայք մեռան ի սովոյ եւ ի ջրոյ. եւ փոքրացաւ եղեալ բազմաբազմաբ մեռանէին :

Եւ ի նոյն ամի ոչ կարաց առնուլ զնա. այլ երթեալ ի Թաւրէզ՝ ի նոյն ամին լուեալ. և զորդի Եզդին ամիրային զսուլթան Ահմատն ապան ի բերդն Երընջակայ : Դարձեալ ի միւս ամին 874 թուականին եկն դարձեալ ի վերայ Վանայ, եւ նստաւ ի վերայ նորա. եւ նեղեալ որդի Քրդոյն Մէլիք Ադ անուն՝ եւ ի նա զբերդն. եւ ապատեալ՝ եղեալ զնայ կահիւք եւ ընչիւք ի Զուլամերկ : Եւ ի նոյն ամին ապանին զհօրեղբայրն նորին Պահաթին անուն առեալ զերկիրն Ռշտունեաց եւ զկղզին Աղթամարայ. եւ բազմաբազմաբ ի քրիստոնէիցն սատ եւ անդ շրջեալ ի լերինս եւ ի բլուրս սովալուկ եւ սովատանջ եղեալ մեռանէին : Եւ ոչ կարեմ ընդ թիւ արկանել զմեռեալսն եւ զողբումն, զլացն եւ զաղաղակն եւ զկորուստ ազգիս մեր, որ եղեւ ի չար բռնա-

ուրէն եւ ի նեռին պիղծ եւ անօրէն կարապետէն ։

Եւ ի սոյն աւուրս եկն նենդաժուտ եւ անողորմ Քուրդն Բաղիշոյ ի վերայ սատուածապահ քաղաքին Սղերդոյ, եւ հարեալ սպանեալ սրախողխող արարեալ զքաղաքն յազգայ մերոյ մանաւանդ զատուածապատիւ եւ զատուածապարիսակ, զողորմած եւ զերջանիկ վարդապետն Գրիգոր՝ զորդի ծերին Խլաթեցւոյ ի տուրբ ուխտն Դատակ որ Ցիլնանք վերակոչի ։ Եւ սուգ եղեւ ամենայն ազգիս Հայկազնոյ. վասն զի զարդարէր զեկեղեցիս Հայոց յայսմաւուրօք, կորուսեալ ճառիւք, գանձիւք, տաղիւք. եւ 55 ամ գիրս գրեաց եւ զամենայն աղբատաց բաժանեալ։ Եւ հեզահոգի եւ յոյժ ուսումնասէր զոլով և մարտիրոսաց պատուող՝ մարտիրոսաց պատկայն եհատ։ Եւ էր տա աշակերտ մեծին Սարգսի վարդապետին Հայոց, եւ ութն ամ աշակերտեալ Յովհաննու Որոնեցւոյ՝ աշակերտակից մեծին Տաթեւացւոյ ։

Դարձեալ ի սոյն ամի անողորմ միշտն և արեանարբու զաղանն գնաց ի Յորմի քաղաք Հայոց, եւ աւերեաց զամենայն աշխարհն, եւ սպան 700 Տաճիկ հատանելով զզլուխս նոցա անողորմ եւ չարաբարոյ. եւ բաղում գերիս էառ եւ ջնջեաց զազգս Հայոց ըստ տեսութեան մեծին Ներսէսի թէ ջնջեցի ազգն Սրսանց յազգէն Ներսոյ ։ Դարձեալ յ878

Թուականս զոր ժողովեայ, գունդ կազմեայ եւ ելեալ գնայ ի վերայ քաղաքին Սուլթանիոյ. և չորս ամիս խաղեալ էառ զնա. եւ զամենայն զորսն որ անդ կային՝ առ ի վերայ եղեալ զենեայ զամենասեան աւելի քան զ300 հոգի : Եւ նորա աղխողրամ կալծէին, գոչէին լալով եւ արտասուօք եւ ասէին «դու Տէ՛ր՝ վրէժխնդիր լեր արեան մեր». և զտէրն տեղւոյն ըմբռնեալ զԵլիսա՝ Խօջու որդին, եդ յամուրս իւր : Եւ էր տէր տեղւոյն որդի քենեոջն Թահ-Ռուհին՝ թագաւորին Մարայ և Պարսից կողմանցն Սրեւելից եւ Խորասանու : Եւ նորա շարժեալ ի բարկութիւն՝ եկն անթիւ եւ անհամար զօրօք իրրեւ զասեղս երկնից բազմութեամբ, մեծահանդէս պատերազմական պատրաստութեամբ ի վերայ յիմար եւ անզգայ եւ անհնազանդ եւ հպարտ եւ գոռոզ բռնաւորին Սբանդարին : Եւ նա փախուցեալ ինքնանէ եկն նստաւ ի վերայ նորա ի Սալմաստ ճակատ առ ճակատ եւ թիկ առ թիկ (գունդ առ գունդ). եւ ոչ եւս թոյլ զօրայ իւրոյ փախչիլ ի բարկութենէ զօրայ Զաղաթային վասնզի կախարդութեամբ կապեցին զնա մինչ զի ոչ նեւս մի կարայ հանել ի կապարձից թարքաշի իւրոյ. այլ խոյս եւս եւ փախեաւ ի պատերազմի ժամուն ի քաջութեան տեղեացն այն որ տէր մին հաղարով իմով ընդ բիւրաւորս նոցա պատերազմեմ : Ոչ գիտէր եւ ոչ

խնայաւ եւ ոչ որ խնայուցանել կամէր վասն գառ-
զութեան բարուց իւրոց. եւ ոչ խնայաւ եղկելին թէ
սիրտ թագաւորի ի ձեռին Աստուծոյ է, եւ նա տայ
զյաղթութիւն հաւատացելոց եւ անհաւատից : Իսկ
նա ի բազուկս իւր յուսացեալ կամէր զործ յաղթու-
թեան ցուցանել. եւ ոչ եւ նմա Աստուած զօրու-
թիւն յաղթութեան . այլ մատնեցաւ ամենայն
զօրօք իւրովք ի ձեռս Զաղաթային . եւ զերեսաց
զամենայն Թուրքմանս եւ զրաղումս ի քրիստոնէից,
և առեալ տարաւ ի ձեռսայնոցն Ղարաբաղ. եւ անդ
անցոյց զգառնաշունչ առաւս ձեռսայնոցն :

Իսկ զօրքն Սբանդարին որք զերծան ի պատե-
րազմէն՝ զաղտագողի ատ եւ անդ փախչելով՝
եկեալ ի յերկիրն Բաղբերտանաց՝ առին զբաղաք
եւ զգեղ, զվանք եւ զտուն, կողոպտեցին և տերե-
ցին, ոչ հացի եւ ոչ խոտ տակի եռուն մնալոց. այլ
զաղանարար պատուեցին. եւ բարկութիւնն Աս-
տուծոյ ի վերուստ եւ ի ներքուստ պատեալ ունէր
զծովեղերս այս. ի վերուստ ձիւն էր եւ տեղատա-
րափ, եւ ի ներքուստ՝ զառնութիւն անօրինաց : Եւ
մեք մոգապարծ եղեալ կամեցաք մտանել ի կղզին
Լմայ. եւ իբրեւ մտաք՝ տեղի ոչ զտաք նստելոյ եւ
յառնելոյ եւ ոչ զոգեպահ կերակուր պատրաստելոյ
վասն ահագին բարկութեանն Աստուծոյ եւ ատելի
անձրեւին եւ ձիւնին : Եւ սիրով ընկալաւ զմեզ

հոգեւոր եղբայրն մեր վարդապետն Յովհաննէս։ Եւ մինչ յայս նեղութիւնս կայաք յանկարծակի զօրք բերդին Սիւկայ շար եւ անօրէն պիղծ իշխանն նոցա Հաշիպէկ անուն նստեալ ի նաւ եկն ի կղզին. եւ ըմբռնեալ զամենայն քրիստոնեայսն մեր պահանջէր ի նոցանէ ոսկի եւ արծաթ։ Եւ յերեկոյի ժամն մինչեւ ի լոյս առաւօտուն 40,000 դահեկան էառ. բայց ի համարս ուելի (քան) զ100,000։ Եւ յահէ նոցա կամէաք զի ծոգն ընկզմէր զմեզ ուեռանելով եւ ընելով զաղաղակ եւ զձիչ կանանց եւ որդւոց նոցա. վասնզի հարկանէին զամենեսեան եւ բրածեծ առնէին։

Եւ մինչդեռ յայս խորհրդի էաք թերեւս եկցուք ի ծովու միջէն՝ եկն եհաս համբաւ բօթալից եթէ Օթման Թուրքմանն եկաւ ի Սրճէշ քաղաք, եւ կողոպտեաց զամենայն մնացեալ հաւատացեալսն, որ անդ կային զի էր նա թշնամի Սբանդարին եւ զօրաց նորին։ Եւ նորա խրատուն յաղթեաց Շահ-Ռուհն պիղծ Թուրքմանին։ Եւ առակ արքոյն կատարեցաւ ի վերայ մեր։ Փախուցեալ ի միեղջերու էն՝ ընկաւ ի ձեռս օձին։ Այլ յայսմ վայրի եհաս ողորմութիւն բարերարին Աստուծոյ ի յոգնութիւն տառապեալ ազգիս. զի փախուցեալ Սբանդարն, որ գերծաւ ի Զաղաթայէն եւ եկեալ ի Վանայ քաղաքն, բարկութեամբ զարթեաւ ի վերայ զօրաց իւրոց գալ

եւ հանել զիսուանակն զոյն որ տիրեալ էին գաւառս
մեր եւ պատուէին զամենեսեան իրրեւ զչար գա-
զան։ Եւ հանին զայլոյծ գազանն ի քաղաքէ, ի
գեղէ եւ ի վանորէիցն։ Եւ մեք զերծեալք ի նոցա-
նէ՝ ապաւ մի հանդիսաւ առաք զաւուրս ձմերայնոյն
ամիսս երեք. զի այս դառնութիւնս էր ի Վարազայ
խաչին պահոյն։ Իսկ ի գարնանային ժամանակին
փախուցեալ Սրանդարն այն ի Զաղաթայէն որ աստ
եւ անդ գաղտագողի շրջէր, երթեալն ի Թաւրէզ, եր-
թեալն յամուրն Երնջակայ եւ յայլ տեղիս. ապա եկին
նստաւ ի վերայ Սրծկէ քաղաքին, զոր առեալ էին
բնական տէրքն քաղաքին Սաւալան անուն։ Եւ
ապաւ աւուրս նստաւ ի վերայ նորա, եւ պատե-
րազմ մեծ եղաւ ի վերայ. եւ քրիստոնեայքն եւ այլ-
ազգիքն զուն քաջութեան գործեցին, եւ աղօթք
ամենեցուն անդադար լինէր զի ազատայր չար
վիշապն զամենեսեան արոյ ճարակ առնել. եւ ամե-
նայն գաւառն յամրոցին կային։ Եւ յանկարծակի
չար զօրքն Զաղաթային 20,000 ոգի առաջնորդու-
թեամբ որդւոյ Տահ Ռուհին Ջանկայ անուն՝ իրրեւ
զարծիւ արընթաց ի վերայ քաղաքին հասին. և տեսեալ
զօրայ Սրանդարին՝ ահաբեկ եղեալ մեռանէին զի
յանդգնութեան կային. եւ զոչէին զի՞ կամ Սմիր-
զայ՝ թշնամիքն եկեալ հասին։ Եւ նա իրրեւ (թէ)
ոչ երկնչիմ ինոցանէ, կամակար եւ առանց վրիպոյ

1428/19

պլեցաւ զզրահ իւր եւ զամենայն զրծիս պատերազմին, եւ ելեալ զնայր առաջի նոցա տակաւ զօրօք 1,000 ոգեալ աւելի կամ պակաս ճանապարհաւն Կորոյ ձորոյ յեւ լերին տարբ ուխտին Սքանչելագործին : Եւ նորա պատապնդեալք 20,000աւ ելեալ զհետ նոցա՝ ոչ կարացին մոտանել ի մէջ նոցա եւ ընդունել զնա : Այլ մի զօրեղ զօրական եւ քաջ մենամարտիկ եկեալ ի Զաղաթայէն արշաւեալ երիվարաւն դոչեաց առ նա «Ա՛թագրայ Սքանդար՝ յե՛տ դարձիր զի տեսանեմք զիրեարս զի ի Խորասանայ ի հետ առ քեզ եկեալ եմ ի պատերազմել» : Եւ նորա յետս դարձեալ, զտուրն ի ձեռին առեալ եհաս առ նա եւ ասէ «ի Խորասանո՞ւ եկեալ ես, կատարեցիր զինդիրս քոյ». եւ եհար զնա սրով ի պարանոցէն մինչեւ ի մէջան յերկուս բաժանեաց : Եւ տեսեալ զնա ամենայն զօրացն արեւելեան ահաբեկ եղեալ եւ յապուշ դարձեալ ասէին «ո՛վ կարէ զնալ զհետ սորա զի այնպիսի ահագին եւ անպատմելի քաջութիւնս գործեաց սա» : Եւ այնուհետեւ այլ ոչ պատերազմ ի գործ արկին. այլ ահիւ զկնի նորա երթային : Եւ աներկիւղ երթեալ հասանէր ի գաւառն Բասենու : Իսկ բազմութիւն քաղաքին Սրծկոյ ելեալ ի քաղաքէն՝ զտուր եւ զաւար Թուրքմանին որ մնացեալ էր ի Զաղաթայէն՝ ի ներս ի քաղաքին ժողովէին. եւ չար զաւակն եւ որդին

կրամեան ոչ գնայ զինի նոցա. այլ ի յեռս դարձեալ
եկն յերկիրն Սրճիշու :

Եւ բազմութիւն քրիստոնէիցն կարգաւորաց եւ
աշխարհականաց ի լերինս եւ ի բլուրս, ի ծերպս եւ
ի ծակս վիմաց փախուցեալք էին : Եւ նոցա շրջա-
պատեալ զլերամին, իբրև արծիւ որ որսայ զթռչունս
երկնից, զոչէին, ճայնէին, երիվարաւն արշաւէին,
զսիրաս արանց եւ կանանց ճմլէին, իբրեւ զոր դա-
ստաստանին տակալի եւ ապարիսելի պատուհասի
հասին, զմեծամեծսն սպանանէին, զոմանս թալա-
ւէին եւ ի հաւատոց բեկանէին, եւ զկին եւ զորդի ի
հարանցն յափշտակեալ զերի առեալ տանէին : Գոչէր մայրն առ որդին եւ որդին՝ առ մայրն «մայր
իմ՝ ո՞ տայր ինձ տեսանել զքեզ » : Եւ մայրն՝ առ
որդին « ո՞վ որդեակ իմ՝ վայ է ինձ եւ եղէ՛ւ, եւ
վայ առաւ քոյ ծննդեան. վայ ինձ եւ վայ հօր քոյ
աւետեաց, վայ բեկեալ բազկիս որ զքեզ բարձի
ո՛որդեակ՝ երթե՞ալ դնաս ի ծով դառնութեան. մի
թէ Քրիստոս քեզ ճար ազատութեան արասցէ՞ » :
Եւ այս կսկիծ դառնութեանս անճառելի է ընդ գրով
արկանել զայս ապէտ տարակուսանաց ներգութեանս:
Բայց սակաւ մի ծանօթութիւն տամ յետ մեզ եկե-
ցուցէ զի լալով լայր զկորուստս ազգիս Հայոց, զի ան-
ճամբ ի ներս կայաք : Եւ նոցա առեալ զառ եւ
զառաջ եւ զորդիսն մանկունսն մեր անթիւ եւ

անհամար ի քաղաքէ եւ ի գեղջէ, և երթեալ ի Տոսպ գաւառ յերկիրն Վանայ ի յոսն տուրբ ուխտին Վարագայ՝ յանկարծակի հասեալ ի վերայ առաջնորդութեամբ պիղծ եւ անհաւատ քրդով մի Սեղին անուն ի տանէ եւ յազգէ բարեբարոյ եւ աշխարհաշէն Ամիրայի Եզդին եւ Մէմիքին, որ ունէր զերկիրն Բերկրոյ. եւ զերեալ զամենայն գաւառն անթիւ եւ անհամար զկանայս և զորդիս ամենայն հաւատացեալսն առեալ տանէին ի Խորասան :

Եւ ճիչն եւ վայ եւ եղուկն տիրեաց մեզ : Եւ մեք բազում անգամ հարցաքննութեամբ ի խնդիր ելեալ թերեւս գտանէաք զթիւ համարոյ զերեացն զԱրճիշոյ եւ զՎանայ. եւ ոչ ոք կարաց առուգել բայց միայն այսչափ զի երեք տարկաւագ ի տուրբ ուխտին Մեծոբայ, եւ 27 (34) զերի ի գեղջէն Ամզոյ որ մերձ էին առ մեզ յազգէ եւ տիրելեաց ծանօթք զի զերեալք էին, եւ 10 զերի ի միոջէ տանէ ի գեղջէն Մաջառուայ : Եւ վայ մեզ եւ եղուկ յայնմ օրէ մինչեւ յայսօր եւ առ յապա :

1430 Եւ այս եղեւ ի յ879 թուականին ի Պէնտեկոստէին աւուրս : Դարձեալ ի Խաչի տօնի աւուրն եկն Սբանդարն այն, նստաւ ի վերայ Արծկոյ քաղաքին, եւ հնարէր զհնար առմանն : Իսկ քրիստոնէիցն խորհուրդ ի մէջ առեալ գաղտնի յանօրինայ, մանաւանդ խորհրդական եւ իմաստուն, իշխանակերպ եւ

քրիստոնեայէր տանուտէրն Մուրատոյ անուն զհետ Արճիշոյ տանուտէրոյն Յովհաննէս Փոքր ճեռնաւորն եւ Գորգի մելիքն Աղոյ տանուտէրն գնալ առ բռնաւորն Սպանդար եւ շինուցանել զարկութիւն դառնութեան նորա. վասն զի եկեալ էր առ ի կորուսանել սրոյ մահուամբ զաղքատ քրիստոնեայն։ Եւ նոցա իջեալ առ նա աղաչանօք եւ աղերսիւք երդումն եառն նմա զի մի յիշեսցէ զառաջին ապատամբութիւնն եւ զանհնազանդութիւնն զոր արարին նմա, եւ մի վնաս ինչ գործեսցէ նոցա։ Եւ ողորմութեամբ Քրիստոսի շինուցին զդառնութիւն նորա։ Եւ նա երդուաւ ոչ ինչ վնաս գործել նոցա։ Եւ ի մէջ գիշերին իջեալ ի պարսպէն գնացին առ նա. և նա անճառելի ուրախութեամբ լցեալ սիրեաց զամենայն քաղաքացիսն. եւ այգուցն մտեալ ի քաղաքն խաղաղութեամբ առանց կռուոյ։

Բայց զոմէր քաղաքին Սալթին անուն ասային եւ Դանիշման մի խորհրդակից նմա. եւ մաղ մի ոչ կարեաւ ողորմութեամբն Աստուծոյ ի քաղաքէն զի քրիստոնեաւէր էր եւ ողորմած ազգին մեր։ Այլ վասն հպարտութեան բարուց իւրոց ոչ ինքեան յաջողեցաւ եւ ոչ հաւատացելոցն. կորեաւ ինքն եւ կորոյս զազգս մեր։ Իսկ ի դալ միւս ամին, որ մտաք 1880 թուականն, սոլ ասատիկ եղեւ յաշխարհս մեր հաւատացելոց եւ անհաւատից զի կերան զշուն եւ

զկատու եւ զմեռելսն, զձի և զԼորի, զէշ և զուղտ։ Եւ պարապեալ պակասեցաւ անասունն. և զիմեցին ի յուտերս եւ ի դատերս իւրեանց մինչ զի ի Թաւրէզ քաղաքն կերեալ էին 1,000 ոգի դաղանի եւ յայտնի, եւ աւերեալ վերին եւ ներքին կողմանքն։ Այլ եւ ի Թաւրէզ քաղաքէն եկեալ էին (35) անդ Հեր եւ Զարեւանդ, Օշնի եւ Սդրակ, եւ զիմեալ գնացին ի կողմանս Գաչքերունեաց. եւ բազումք որք անդ մնացին՝ մեռանէին. եւ որք եկին յԱռեստաւանի՝ ճկամբք և բանչարօք շատանային։

Իսկ դաղանքն որ սովորեալ էին ուտել զմեռելսն, զիմեցին ի վերայ կենդանեացն, որք յերկիրս մեր կային։ Մտանէր գայլն յԱրճէշ եւ յամենայն գաւառս մեր, զորդին ի մօր գրկացն առեալ պատառէր եւ ուտէր. թէ ի դաշտի գիպեալ յառնէր ի վերայ մեծաց եւ փոքունց եւ առ ժամայն պատառէր։ Եւ աւելի քան զ100 ոգիս ի յԱրճէշ գաւառի գայլն եկեր թո՛ղ զաղքատս որ ի վերայ գետոյն Սառատ եւ Մարմեռու կային։ Եւ ի գաւառէն Սարատեան ի ձմերոցին եղանակին եկեալ գնացին ի կողմն Վրաց այնքան հաւատացեալք ի խոտութենէ օդոյն մեռեալ եղեն. մինչ զի ոչ կարացին ի թիւ արկանել վասն բազմութեանն, որպէս պատմեաց մեզ հոգեւոր եղբայրն մեր Զաքարիա արեզոյն Տեղերոյի։ Եւ մոթ ցորեանն աւելի հանէր քան զ60 թան-

կայ ի պազարին Սրճիշոյ։ Եւ մեռանէին ամենայն մարդիկք բնիկք եւ օտարականք։ Եւ առեալ ոմանք զձիս իւրեանց՝ դիմեալ գնային ի հեռաւոր աշխարհս ի յԵրզնկայն եւ ի Խարբերդ եւ ի յԱմիթ եւ ի յԱրզնի եւ ի Զմշկածակ։ Եւ որք անտերունչ մնային՝ մեռանէին ի սատկութենէ սովոյն. եւ ոմանք գնացեալ խառնեցան ի Գուրջն Բաղիշոյ, Մշոյ եւ Սասնոյ վասն ապրուստի եւ սովն դադարութեան եկեալ ի հաւասոյ գարձան յանհաւատութիւն ասելի քան զ500 ոգի. եւ տրտմութիւն մեծ եղեւ Սասնոյ եւ հրեշտակաց եւ մարդկան։ Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղայ մերոյ եւ չար գործոյ, մանաւանդ ի ծուլութենէ երկրացոյ եւ ի խաբերայութենէ կրօնաւորաց եւ ի չարդործոյ անհաւատ եւ ի սուտանուն հաւատացելոյ, ի զրկող եւ յանիրաւ տանուտերաց, ի պիղծ եւ ի զազրալի սաստկորդաց զոր ոչ կարեմք ընդ գրով արկանել զաղտեղութիւնս մեր եւ նոցա. զի ծածկագիտին յայտնի է ամենայն։ Եւ այս եօթն ամք են որ ի ներքոյ դառն պատուհասի կամք. զի սուրն կորոյս, սովն ապան, զերին պակասաց, գազանք կերան զգ մարդիկ, թռչունք կերան զվատակս, գորան եւ մկունք ապականեցին զանդաստանս ասելի պատուհաս քան զԲաբելացւոցն յաւուրս Սրահամու եւ զանապտոյն քան զպատիժ Երբայեցւոցն եւ Եգիպ-

տայուց, զի որդիք Եդիպտացւոց ի ծով ընկղմեցան. իսկ որդիքն Հայոց՝ ի ծովն անհատութեան Հրէ բաղաքին. նոքա ի ծովն մեռան, և ոչ ծննդեամբ բաղմացան, որդիքն մեր և եղբարք, որք անհատութեամբ մեռան և կորեան, ահեն որդիք նոցա անհատութեամբ և ընուն զաշխարհս ամենայն. և մինչ ի վերջին օր դատաստանին լինի թէ յաղագս Հայոց այնքան մարդիկ ահեն որ այժմ կենդանի եօթանասուն երկու ազգիս նման (36). զի թէ յութիւն մարդկան արդար և պարկեշտ առն Աստուծոյ Նոյի ամենայն երկիր լցաւ, իսկ հաղարաց և բիւրաւոր արանց քանի՞ առաւել պա՛տ է ահել եւ բազմանալ :

Եւ այս պատուհաս որ եղեւ, մի կարգաւոր և աշխարհական, մեծատուն և աղքատ զլեզու իւր ոչ անձեաց ի հայհոյութենէ յիշոցացն, եւ ոչ ասային մեղայ Աստուծոյ և ի ժանտալից դառնապատուղ և դառնաբերան անիծից և նզովից գարշաբերան աղտեղութեանց զորս ժայթքեն հանապազօր մոխրաթաւալ նորընծայ ուխտի մանկունք եկեղեցւոյ Հայաստանեայց՝ հանապազ զաղտեղիս խօսելով ըզ բերանս ուսումնականաց ընուն : Այլ վա՛յ և եղո՛ւկ է մեզ, և եղո՛ւկ է նոցա զի անձամբ զանձն իմ դատապարտեմ զի և ես ի նոյնս կամ բայց հարեալ ի խղճէ մտայս. զի գիտութեամբ Աստուածաշունչ

զրոց ծանօթացոյ, կամիմ բառնալ, և ոչ կամին ասել. և ես հանապազ ի դառնութեան կամ զի սովորութիւնն հնացեալ բնութիւն մակաստոյական է։ Դարձեալ և ոչ կարեմ բառնալ ի մանկանց եկեղեցւոյ զի վիշապ ապատամբ եղեալ են, և ի խրատուէ հոգեւոր արանց և եկեղեցւոյ վարդապետաց խոյս տուեալ գնան զհետ կամաց իւրեանց։

Բայց զիտելի է ձեզ ո՞վ եկեղեցիք Հայաստանեայց և կուսակրօն վանորայք կուսանանց՝ զի ասէ Տէրն «կերակուր ոչ պղծէ զմարդ. այլ որ ինչ ի բերանոյ ելանէ՝ նա պղծէ զմարդ»։ Դու բերանով զարիւն Աստուծոյ ճաշակես և ասես «զնա՛, կե՛ր զչան և զմարդոյ, պղծես զբերանդ, որով ճաշակեալ ես զդառն Աստուծոյ և պղծես զբերան անմեղին այնորիկ, որ ճաշակեալ է զանմեղ դառն զՔրիստոս. և առանց խղճի մտաց կաս զամենայն ժամանակս կենաց քոց և ոչ բերես ի թիւ խոստովանութեան։ Եւ ո՞վ քաւէ զժանտալից, ժահահոտ ժայթքեալ բերանոյ մեզս քո. այդ անքաւելի և անթողլի մեղ քեզ և չար յիշատակ մինչ ի կատարած աշխարհի. և ո՛վ որ որ ասեալ է ի քէն՝ յաւելու օր ըստ օրէ քեզ մեղս ի վերայ մեղաց քոց ըստ Դաւթոյ «զի՛ր ըզ մեղս ի վերայ մեղաց»։ Դարձեալ՝ անէծք և նզովք ասելով զպատուիրն Աստուծոյ անիծանես և ոչ զիտես եթէ զսիրելատիպն Աստուած անիծանես. եւ

ով զԱստուած անիծանէ՝ մեղքն այն մահուչափէ եւ աննենելի։ Ո՞վ թողու զայդ մեղս քեզ. զի Աստուած միայն է այդ կապին կապողն և արձակողն. և դու զԱստուած հայհոյես, ճիայ այդ անբաւելի։ Եւ զարձեալ Աստուած վասն այն եկն յաշխարհս զի զանէծս Աղամայ բառնայ, եւ դու լրբութեամբ նոր նորոգես. կարե՞ս պատասխանի տալ Աստուծոյ թէ ոչ գիտէի։ Ահա Աւետարանն ասացանէ քեզ թէ ոչ գիտէիր։ Եւ վարդապետս և եպիսկոպոս անիծանես. ահա Քրիստոս և Առաքելոցն Գրիգորիոս ասացանէ ի գիրս կանոնաց իւրոց «քահանայ որ զպատկերն Աստուծոյ անիծանէ, ինքն զինքն ի Քրիստոսէ որոշէ»։ Եւ քաջ հոգիւն եկեղեցւոյ մեծն Աթանասիոս ասէ թէ՝ քահանայ որ վայրապար ըզ մարդ անիծանէ՝ ի քահանայական կարգէն լուծցի։ Վասն որոյ զերեսս ի դեռին դնելով աղաչեմ՝ զեղբարքդ զհոգ ասից ձեր վերելով մի որոշէք զձեզ ի Քրիստոսէ և մի լուծանիք ի քահանայական կարգէ. զի ի բերանոյ անտի ասէ Տէրն երանեն պղծութիւնք. և Աւետարանիչն ասացանէ «ամենայն պիղծ եւ չարակամ ոչ մտանէ յարքայութիւնն Աստուծոյ» և զիկէ զքեզ յերանութենէ. որասէ նոյն Աւետարանիչն երանելիեն որք լուանան զհանդերձս իւրեանց յանապատ արիւն գառին. և դուք քահանայդ՝ լուայք ըզ հոգի ձեր և զմարմին ձեր յարիւն գառին Քրիստոսի։

Սա՛ղ է մեղ եթէ յայնպիսի ստուածային շնորհայն զրկէ զկարդաւորն. զի թէ ամենայն արարածք ողբս ի բերան առեալ ողբան զայնպիսին՝ ոչ ինչ կարեն ցնաստել. իսկ եթէ դառնաս յայնպիսի լեզուազարութեանցդ՝ ողորմեայի քեզ Աստուած ասա և ի հանդերձեալն աղօթիւք և բարեխօսութեամբ ամենայն սրբոց, և ի ձեռն ձերոյդ զղջման և աղօթից նորոգումն առնէ Աստուած կորուսեալ և ջնջեալ ազգիս : Զի վասն այսպիսի հայհոյութեանցս հեռացաւ սուրբ Հոգին Աստուած, կարծեմ, յազգէս և յեկեղեցւոյս Հայաստանեայց :

Դարձեալ՝ դարձյո՛ւք ի նոյն կարգ առաջի եղեալ շարադրեալ պատմութեանս վերջին ժամանակիս թշուառական և տառապեալ ազգիս : Բռնաւորին Սբանդարին որդի մի կայր եղեալ իշխան ի յամուրն Տոպ զաւառի ի յոսն Վարագայ ի Վան քաղաքի՝ անուն Սրալի. և առնէր զանիրաւութիւն հարկապահանջութեամբ ազգիս մեր և Ցանկայ : Եւ նորա երթեալ առ հայր նորա Սբանդար զանգատեն ի վերայ նորա եթէ ոչ կարեմք տանել վշտաց և զառնութեան նորա զի կարի յոյժ աղքատացոյց զաշխարհս մեր : Եւ նորա կարի յոյժ զառնացեալ՝ կոչեաց զնա առ ինքն առ ի խրատել զնորա տգիտութիւն. և նորա երկուցեալ զնալ առ հայրն, այլ խոյս եառ և գնաց առ տէրն Ճամխառ Խալիլ-Ուլլահ անուն՝ որդի շեխ

Իրրահիմին։ Իսկ նորա ըմբռնեալ զնա եւ տանել առ տէրն Խորասանայ Թահ-Ռուհ անուն՝ որդի Թամուրին, ծածուկ ոչ ունելով Խալիլն ընդ Սբանդարին։ Եւ նորա խնայեալ զառելութիւնն առ նա՝ զօրս ժողովեալ զունդ կարգեաց և զնաց ի վերայ կողմանն Թամխու, աւերեաց զաշխարհն ամենայն, զքաղաք և զգիւղ և արոյ ճարակ եւ 15 աւուր ճանապարհաւ զաշխարհն, և ի գուն նեղութիւն արկ ըղ տէրն Թամխու և զքաղաքն Թամխի։ Եւ զծառ և զայգի հատանէր առանց խնայելոյ և անպատմելի աւերս գործեալ։ Եւ իշխան մի ի նոցանէ Սբանդար անուն զառեալ իւր ինքեան անուանակից և չարութեամբ հաւասար, առեալ զնա և տարեալ անցոյց յայն կոյս գրանն Դարբանդու. և աւերեաց բազում աշխարհս անազարմ արաքաղխոյ առնելով զլեռնականս և զդաշտականս՝ զամ մի ըմբռն անդ յամեալ զանմեղ արիւնս հեղլով զոր ոչ ոք կարէ ընդ գրով արկանել։ Եւ անտի դարձեալ յետս և 360 գանիշմանի զլուխս հատեալ, և ի բերանս եղեալ արիւնաշաղախ և գարշահոտ՝ բերին յերկիրն Սիւնեաց։ Եւ քրիստոնէիցն կարի յոյժ ողորմած զառեալ զի երեսուն զերի բերեալ էին գաղտնաբար. Յակոբ անուն քահանայ մի եկեալ զնի նոցա, և ծանուցեալ նմա. և նա կարի յոյժ զառնայեալ՝ ողորմեաց զնոսա ի խաղաղութիւն։

Իսկ տէրն Տամխու Խալին այն առեալ զղեսի և զմիտաւոխս և ընթացեալ առ Տահ-Ռուհն՝ տէրն Հրէ քաղաքին, հող զգլխով արկեալ և զօձիսն պատառեալ պատմեցին զդառն և զողբալի անցս ազգին որ անցոյց ընդ նոսա Սրանդարն։ Իսկ նորա ցասմամբ զայրացոյց զինքն և զամենայն ընտանիս իւր. և դառնութեամբ մղձին լցեալ զախտաժակ խնայականին՝ կոչեաց զամենայն առաջնորդս հարին Հրէ քաղաքին՝ զմեծամեծս և զփոքունս և ասէ ցնոսա «ուղիղ և արդար դատաստան արարէք թէ զինչ պարտ է առնել որդւոյ Յուսուֆին»։ Եւ նորա ամենեքեան ի մի բերան աղաղակեցին «մահապարտ է, սատակեցի՛ այրն այն. և եթէ ոչ սատակես զայնպիսի անողորմ արեանարբուն՝ ի քէն պահանջէ արարիչն Աստուած դատաստան նոցին»։ Եւ նա հրամանեաւ զէն զինուորութեան բերել և կապել զանձամբ իւրով, զոր ի վաղուց հետէ արդելեալ էր ասֆի գոլով և խաղաղասէր։ Եւ ի սրտմտութենէ ցասմանն երեք աւուր ճանապարհ քան ոգւով բարկութեամբ եկեալ։ Եւ ապա զօրաց նորա ասի և անսի ժողովեալ անթիւ և անհամար բազմութեամբ եկեալ հասին ի Սուլթանիա քաղաք. և 40 օր արդեալ առեալ թերեւս ընդ առաջ նորա եկեցէ հնազանդութեամբ յիմար դառոյն այն սաղրեալն և խաբեալն ի սատանայէ։

Եւ նորա անվոյթ արարեալ զնմանէ : Իսկ Թահ-Ռուհն խաղաղասէր գոլով՝ ծանր զօրօք շարժեալ եկն եհաս ի տունն Սիւնեաց ի յամուրն Երնջակայ, և շուրջ պատեալ պաշարեաց զայն աւուրս բազումս: Եւ որդի նորա և մայր նորա խնամութիւն ի գործ արկեալ ուխտ եդին նմա ոչ թողուլ զհայր նորա կենդանի եթէ հնար լինիցի ապանանել զնա, և ըղ դանձս բազումս ոսկի և արծաթ տանել նմա : Եւ առեալ զաղերս ի պատգամաւորացն շնորհակալ եղեւ նոցա : Եւ գովեաց զիմաստութիւն նորա թէ խնամութիւն որդւոյ նորա Խանումայ (մեծ է)քան զիմաստութիւն զոհայ Սբանդարին : Եւ դարձեալ զեպանացն մեծաւ պարգեւօք եկին ի կլայն. և Սբանդարն արտաքոյ կոյր կլայն. փախեաւ 150 մարդով՝ եկեալ գաղափէս յերկիրն Գողթանայ իգիւղն Արծաի աւուրս սակաւս անդ դադարեալ երեք կամ չորս : Եւ անտի յարուցեալ գնաց ընդ զօրս իւր և եհաս ի քաղաքն Կարնոյ այժմ Արզրում կոչեցեալ, ուր էին փախուցեալք յահէ և յերկիւղէ Զաղաթային եկեալ :

Իսկ տէրն Երզնկային Օթման անուն առեալ ըղ զօրս իւր և եկեալ ընդ առաջ նորա առելի քան քան հաղարաւ պատերազմել ընդ նմա : Եւ նա արտանդեալ ունելով ընդ ինքեան 3,000 ոգի՝ սպառազինեալ ամենեքեան յանկարծակի մտին ի մէջ բազ-

մութեան զօրաց նոցին, հարեալ ապանին զՕթմանն՝ զգլուխն զօրաց և զորդին անուն Պայազիտ և աւելի քան զ700 ոգիս. և ըմբռնեալ զբաջ զօրեղ զօրականն 100 ոգի, իբրեւ զոչխար զենեաց անողորմ և անազորոյն զազանն՝ որդին սատանայի : Եւ զբոլ պանեալքն ի ճանապարհին իբրեւ զբերդկոյ եղին. և յերկրորդ աւուրն եկեալ հասին զօրք Զաղաթային՝ որդին Շահ-Ռուհին Ջօնդոյ անուն ունելով ընդ ինքեան 30,000 ոգի : Եւ տեսեալ զապանեալքն ի ճանապարհին՝ զահի հարեալ ափշեին և ոչ կամէին գնալ զհետ նոցին : Եւ որդի նորա այսն համարեալ զոչ գնալն զհետ նոցա՝ բարկութեամբ ցկեալ ասէ դէմ յանդիման առաջի մեծամեծաց իւրոց « մի՞ որ խշխեսցէ ի զօրաց մերոց մնալ ի քաղաքի կամ ի լերինս. այլ ամենայն միաբանութեամբ ապառապինեսցո՛ւք զկնի նոցա» : Եւ նորա ընթացեալ զկնի նոցա հասին և առին զառ և զաւար և զամենայն կողոպուտ նոցա : Բայց ոչ կարացին մտանել ի մէջ նոցա. այլ մերձ ընդ մերձ երթային մինչ ի յԱղջար քաղաք. և ոչ կարացին ըմբռնել զնա : Եւ նա երթեալ բնակեցաւ ի Թօխատ և յերկիրն իւր. և ապա տիւս մեծամեծս ընկալաւ յիշխանաց քաղաքացւոց և շրջակայից կողմանցն այնոցիկ :

Իսկ ի գարնանային եղանակին աւերեաց զաշխարհս նոցին, և առեալ զնաց նոտաւ յերդ գեղի

միոջ, և ժողովեաց զօրս բազումս աւելի քան զզ 40,000. և եկեալ նոսա մերձ առ նոսա, և ոչ ինչ կարաց առնել նոցա. և նոցա տեսեալ զանարի զոլն նորա՝ եկեալ քակեցին և աւերեցին զաշխարհս նորա : Եւ եկեալ ի Սերաստիա նոսա. ի վերայ այրի միոջ ուր փախուցեալ էին յահէ նորին. և սուտ երդմամբ խաբեաց զնոսա և եհան յայրէն զբազմութիւն հաւատացելոցն, և զերեաց զկին և զորդի անմեղին և տատապեալ ազգիս Հայոց, և չարքն չարչարեալ հրով և սրով և անասելի չարչարանօք : Իսկ քրիստոնեայքն որք կային ի Տիւրինէ՝ տեսին զզ չարչարեալքն և զզերեալքն և լալով և ողբալով գնացին ընդ առաջ չար բռնաւորին և նեռին կարապետին, անթիւ և անհամար զինս եառն և գնեցին. և զբազումս ի նոցանէ բերեալ հատուցին ի կողմանս վերին : Եւ ապա եկեալ ի վերայ Խարբերդու՝ այրեաց հրով և սրով զամենայն երկիրն. և ի սուգ գերութեան նոցոյ զամենայն բազմութիւն ողորմած և գթած գաւառին :

Եւ եկեալ ի վերայ գաւառին Դերջանու՝ եհան զամենայն կայիւք և կարասեօք, որդւովք և դստերօք, և կամեցան տանել յերկիրն Սպարտաւան և Սիւնեաց : Եւ էին ուսուցք գառնաշունչ և գժնդակ օդոյն ձմերայնի. և յետ երկուց աւուրց յանկարծակի ձիւն սաստիկ եկն ի վերայ նոցա . և ի գիշերին

յայնմիկ պաղեցաւ երկիրն. և բազում քրիստոնեայք պաղեալ մեռանէին. որդի առ հայրն գոչէր և հայր՝ յորդի. և սիրելի որդիք նոցա ի գիրկս մարց մեռանէին : Եւ առեալ զորդիս ի գիրկս իւրեանց ձայն բարձեալ աղաղակէին ի վեր առ Աստուած «Տէր Յիսուս՝ վրէժխնդիր լեր արեան ծառայից քոց, զի դու ես յոյս և ապաւէն մեր, և աղաւեա՛ զմեզ և զորդիս մեր ի ձեռաց զազանիս» : Եւ մեռան ի այն աւուրս աւելի քան 700 ոգիք անմեղ քրիստոնեայք ի զառնաշունչ օդոյն. և ոչ գոյր ժամանակ թաղելոյ զնոսա զի կերակուր եղեն զազանաց. և ոչ գոյր չինութիւն գեղջկաց մերձ առ նոսա : Եւ վերակացուաց նոցա հատեալ զականջս նոցա տարեալ ցուցանէին նեռին կարապետին : Եւ նա ծիծաղելով ասէր «Աստուած արար. զինչ վոյթ է ինձ. թո՛ղ չէր տուեալ զդոսա ի ձեռս իմ՝ և ոչ ձիւն յերկնից առաքեալ» :

Զայս չարիս գործեաց անօրէն զազանն. և ոգէտք ոմանք վասն սակաւ սիրելոյն զհաւատացեալս թէ ազգ բարի է՝ երկարութիւն կենաց խնդրէին. որ և կարծիք է մարդկան թէ՝ քան զաստեղս աւելի մարդիկ մեռեալ եղեն վասն սրին անհնազանդութեան և հպարտ բարուց որ ոչ հնազանդեցաւ թագաւորին արեւելից : Վասն զի նա խաղաղասէր էր, ոչ կամեցաւ խռովարար լինել զի եռեսս զհայր իւր,

որ չան պէս ունայր ի գերեզմանի. և յոչ կամաց կորոյս զաղգս մեր : Իսկ որ զկամն երկիւղածաց իւրոց առնէ և աղօթիցն նոցա լսէ՝ աղօթիւք եւ մահուամբ անմեղացն դարձոյց զօգնութիւն ի սրոյ նորա և տկարացոյց յաչս զօրաց իւրոց և սիրելի եղբարց և աղգականաց. եկեալ հասաւ առ եղբարս իւր Ջհանշահ անուն, որ կայուցեալ Շահ-Ռուհին ի վերայ ազգայ իւրոց և ի վերայ աշխարհիս մեր : Եւ պատերազմ յարուցեալ եկն ի վերայ Ջհանշահ՝ եղբօր իւրոյ, գիտելով թէ զօրք իւր զանձինս իւրեանց ի վերայ դնիցեն, որպէս միանգամ եղին, և սպանին զեղբայր իւր սուլդան Բուսայիդն, զոր և նոյն Շահ-Ռուհն եդ ի վերայ աշխարհիս մեր. այլ ամենեքեան թողին զընդս և փախեան, և գնային առ եղբայրն Ջհանշահ : Եւ ինքն ճնայեալ տակաւ արամբ՝ մաղապուրծ եղեալ յեղբօրէն իւրմէ զաղտագողի երթեալ յամուրն Երնջակայ՝ զձմեռն մի ըման անդ անցոյց ընդ կեանս իւր ի բերդին արբեցութեամբ :

Իսկ եղբայրն շրջապատեալ պաշարեաց զնա զօրօք իւրովք մինչ ի յեղանակ գարնանային ժամանակին ամրոցս և բնակութիւնս չինելով շուրջ զամրոցսն : Եւ նորա գաղտաբար դեսպան առաքեալ առ սուլդանն Մսրայ տալ նմա օգնական զօրս բաղումս : Եւ նորա յղեալ բազում զօրս աւելի և յոլով քան զ60,000. և նոցա եկեալ ի գաւառն

Եկեղեաց՝ լուան թէ ապանին զնա ի բերդին Երնջակայ։ Եւ էր Սբանդարին այն որդի մի Թահուբաթանուն. միաբանեալ ինքն և մայրն իւր և 10 զօրեղ զօրականս և քաջ մենամարտիկս, և ի գիշերի երթեալ զտին զնա ի քուն արբեալ ի գինւոյ. և հանեալ զաւուրս իւրեանց՝ սրախողխող արարեալ ապանին զնա ոչ գիտելով բարեկամաց նորա։ Եւ այդուցն եկեալ տեսին զԹահուբաթն և ասեն. ո՞ւր է հայր քոյ, և նա ասէ. թշնամին ձեր այնպէս լիցի որպէս հայրն իմ։ Եւ տուեալ նոցա երդումն զի մի ինքեան զնաս գործեսցեն։ Եւ կայր նորա մի բարեկամ Հօլուլու անուն, բերեալ ապանին զնա. և ըզ գլուխ նորա հատեալ եառն տանել զնա առ եղբայրն Թահանշահ, որ շուրջ նստեալ սպասարէին զնա։ Եւ նորա տեսեալ՝ ուրախութիւն մեծ արարեալ և նաւակատիս մեծ կատարեալ՝ փառս տային Աստուծոյ զի զթշնամին իւրեանց ծնեալ որդին ի նման սիրելեալ ապան զնա և ոչ ինքեանք ապանին զնա. և բարձաւ չարն ի միջոց և ոչ եռես զփառս Աստուծոյ ըստ մարդարէին։ Եւ թէ՝ տեսի զամբարիշան վերայեալ և բարձրացեալ. և ահա ոչ էր զի այր արիւնահեղ էր, ոչ հատարակեաց զաւուրս կենաց իւրոց. և խաղաղացաւ երկիր ի տակաւ աւուրս։ Զի ի Խորասանու մինչ ի Սար խաուլութիւն վրդովմանց կայր յաշխարհ ամենայն որքան նա կենդանի էր ի

վերայ երկրի : Եւ էր թուականն 886. որ այս գործեցաւ : Ի յ870 թուականէն ի հետ մինչ ի մահ տրա ամենայն երկիր ի վրդովման կայր և ի խառնութեան անհաւատ և հաւատացեալ. զի երեք անգամ է այս որ Շահ-Ռուհ Զաղաթայն նորա անհնազանդութեան աղագաւ զամենայն Թուրքմանն և զՄիջերկրեայս ի գերութիւն էտ. վիանգամ ի Վաղարշակերտ, երկրորդ՝ ի Սալմաստ, երրորդ անգամ այս է յորմէ մեռաւ ինքն և բազումք վասն նորա մեռան : Եւ զայս յայտնի եմ տեսեալ ի գաւառս մեր. զի յ885 թուականիս յերկրորդ գալն Զաղաթային փախեաւ ի Զաղաթայէն և հասաւ ի Խլաթ քաղաք, Հեր և Բերկրի, Սրճէշ և Սրծկէ : Յանկարծակի հասին ի վերայ ամենայն Քուրդ և Քրդաստան ի լերանց և ի բլրոց, և սուր հանեալ ահաբեկ արարեալ զամենայն տառապեալ ազգս մեր որ խաղխաղ արարեալ կամէին կորուանել առհասարակ զամենեսեան : Եւ այնքան ահագին լինէր օրն այն ի յահէ և յերկիւղէ և ի գոչմանէ պիղծ և արեանարբու ազգին Սարաց մինչ զի իրրեւ օր դատաստանին լինէր՝ եթէ ոչ էր հասեալ յօգնութիւն յոյն ամենեցուն Քրիստոս Աստուած փրկիչն մեր. զի ի գիշերի եղեալ կամէաք գնալ ի քաղաքն Բաղէշ առ աստուածատէր և քրիստոսատէր և աստուածապահ հաւատացեալքն որ ի նմա վարդապետք և եպիսկո-

պատ, քահանայք և կրօնաւորք. յանկարծակի հասին ի վերայ մեր, և տ՝ ր ի ձեռին ունելով կամին առ հատարակ զամենեսեան սրոյ ճարակ առնել : Իսկ մեր ապաւինեալ յԱստուած՝ զամենայն մարմնաւոր գոյս ի բաց թողեալ՝ ի լերինս փախուստ առեալ օգնութեամբն Աստուծոյ և շնորհօք՝ ազատեցաք ի ձեռաց նոցա :

Եւ համբաւ նեղութեանս մերոյ հասեալ ի քաղաքն Բաղէշ. և եպիսկոպոս նոցա Տէր Սուրբանոս՝ այր ողորմած և ատուածասէր, առեալ զբազմութիւն հաւատացելոցն և զէարդապետսն մեր հոգեւոր հաւրազան եղբայր Սուրբանոս անուն ոդիս ի բերան առեալ լային զմեզ. և տային, հանդուցին զմեզ, և զերիս ամս իբրեւ զհրեշտակս Աստուծոյ ընկալան զմեզ և զաղքատսն մեր : Զոր և Տէր Աստուած մեր Յիսուս Քրիստոս անփոխն և անսասան կենօք պահէ զդաւսան զայն մինչ ի միւսանգամ գալուսն իւր որդւոքք և դստերօք և ամենայն դոյիւք : Եւ էր թուականս մեր 884 :

Դարձեալ և ատ ապտանեցիս զաղէտ և զկսկիծ զառնութեան մերում՝ ազգի : Էր ի քաղաքն Սրծկէ այր մի բարեպաշտ և երկիւղած, ատուածասէր և սիրող արութեան, յոյժ խոնարհ և կարգաւորասէր և ամենայն չարեաց ատելոյ. և տէր և զիշեր յաղօթս կայր եղբարքք և որդւոքք և ամենայն ընտա-

նեօք : Եւ էր անուն նորա Սուրաուշահ պատկերով քաղցր և ողորմած : Եւ կոխեալ էր զամենայն անօրէնս քաղաքին մինչ զի նոր հիմն եդ ի մէջ անօրինաց խաչիւ և աւետարանաւ Յուր օրհնել ի Յայտնութեան Տեառն : Եւ էր իբրեւ թագաւոր Քրիստոնէից ի մէջ ծոլու բոլորիս : Եւ նախանձեալ սատանայի և կամարարաց նորա չար ազգին՝ մատնեցին զնա քաղաքապետին. և նոցա ոմն ունելով ընդ նմա մատնեցին զնա քաղաքացիքն անօրէնք թագաւորութեամբ մերոյ ազգիս պղծոյն և չարագործի Զենոն անուն : Եւ նորա եղեալ ի բանտի ներսոյ (37) արարեալ և ի դղեկէն ի վայր արկեալ եհան մարտիրոսութեան և անանց պսակայն : Եւ յառաջ քան զայս տանուտէր մի Զաքարիէ անուն ըմբռնեալ և ի պարանոց նորա պարան արկեալ հեղձուցին զնա. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, եւ աղօթիւք սորա Տէր Յիսուս Քրիստոս մեզ ողորմեսցի եւ ամենայն քրիստոնէից. ամէն :

Բայց եւ զայս գիտելի է զի ի սոյն աւուրս պիղծ իշխանն Փերզի անուն, որ նստէր ի քարն (38) Սամկու, երեք անգամ ի սոյն ամի զերկիրն Սրճիշու եւ Սրծկու զերեայ եւ կողոպտեայ. եւ ի գիւղն Զերիշատ (39) զձեռնաւորն Մկրտիչ անուն ութն մարդով ընտանեօք տան իւրոյ ի հուրն այրեայ : Եւ բարեպաշտ ձեռնաւոր մի Յովհաննէս ասան ի

գիւղն Ասպինակ ։ Եւ եղբայր մի ծառայիս Աբրա-
տակէս անուն ի հուրն խորտկեցին իբրեւ զգառն
անմեղ ։ Եւ վասն Քրիստոսի տոքա այսպէս նահա-
տակեալ ընկալան ի Քրիստոսէ զպսակն անապա-
կան. որ եւ գործեցեալ մեզայ նոցա թողութիւն
առնէ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս. ամէն ։ Եւ
զամենայն գաւառս այնքան կողոպտեցին եւ ի
յընչից մերկացուցին մինչ զի ամենայն քրիստոնեայք
որ այժմ կան մեծամեծք եւ փոքունք խոտեն զին-
քեանս եւ ոչ ինչ համարին, առանց ամօթոյ խոտով
ծածկեն զինքեանս, եւ մերկ եւ բոկիկ շրջին իբրեւ
զանասունս ։

Եւ զկանայս հաւատացելոցն որք մոռեալ էին ի
կղզին Լիմն կոչեցեալ, աւելի քան զերկու եւ զերեք
հարիւր թանկայ վաճառեայ ի վերայ աղքատացն
մերոյ որ մին դրամի տէր ոչ գոյր ։ Եւ այն իշխանն
որ կարծանեայ զաշխարհս մեր՝ այժմ տէր եւ իշ-
խան է կարգեալ ի վերայ աշխարհիս մեր վասն մե-
զայ մերոյ պատուհասի եւ ի բարկութենէն Աս-
տուծոյ. եւ այժմ ձգեալ է զամենայն հաւատացեալս
ի ներքոյ հարկապահանջութեան՝ մինչ զի ամենայն
մարդապլուխ 40 թանկայ առնուն թուղ զրահայ եւ
զչարէք (40) ի ծերոյ և ի տղայոյ, յորոյ և յայրեայ,
ի կուրայ, յաղքատայ եւ ի տնանկայ ։ Եւ ամենե-
քեան կենդանի մեռեալք և տվեալ կան ։ Եւ մեք

զայս ամենայն տեսանելով զարմանեաւ զհաստատուն մերկայելոյ եւ աղքատաց եւ զանզգաստ ի սուտ ա-նուն տանուտերաց որ թուլութեամբ եւ անխոյժ-տանելով կորուսին զտուտպեալ ազգս մեր ոչ մի-այն ի զառն աղքատութեան այլ եւ ի գործս անբաւեալս եւ անպատմելիս եւ յանուսակ արբեցո թիւնս ծերոց եւ տղայոց, որպէս յայտ է տեսանել ի քաղաքն Սր-ճէշ, զոր եւ կամիմ սակաւ մի ծանուցանել :

Քահանայ մի Սուրբանոս անուն, ի յերկրէն Սմիւ, սակաւ առաջք եկեալ բնակեցաւ ի կղզին Լիմն կոչեցեալ, եւ անտի եկեալ ի քաղաքն Սրճէշ տեսեալ անտեսուչս(41)և անտաջնորդ ոչ հոգեւոր առաջնորդ ունելով եւ ոչ մարմնաւոր, ոչ եպիսկո-պոս եւ ոչ վարդապետ, ոչ ձեռնաւոր եւ ոչ տանու-տէր, յոխշտակեալ կին մի ի քաղաքացոյն հրամա-նաւ եւ կաշառօք անհաւատից, և բազում ժամա-նակս եղեւ առաջնորդ քաղաքին : Եւ նենգեալ անօրինաց եւ տասիոս քրիստոնէից մատնեն զնա քաղաքապետին Սրճկոյ Սահանդ անուն. եւ զտա-նուտէր մի տատուածատէր Մուսեֆիր անուն. եւ հեղին զարիւն նոցա, եւ զգլուխս ի պարսպէն ի վայր կախեցին : Եւ այն թէպէտ եւ պատիժ էր ի Տեառնէ զի ամենայն կարգաւոր յիւրում կարգի կացցէ. այլ անմեղ արեամբն խրեանց ըստին (42) զաղտեղա-թիւն մեզոց խրեանց. զի տուի կենաց պատիժս

ազատէ ի պատժոց տանջանաց դժոխոց : Եւ զարձեալ եթէ ձեռօք անհաւատից մեռանէին քրիստոնեայքն այնպէս, որպէս Աբէլ մեռաւ ի Կայենէ, եւ Կայէն պատժեցաւ ի Տեառնէ. զի ասէ զլուխն հաւատոց մի՛ որ ի ձէնջ չարչարիցի իբրեւ զդող կամ իբրեւ զչարագործ կամ՝ իբրեւ զօտարատեսուչ այս ինքն է կախարդ, ապա եթէ իբրեւ զբրիստոնեայ՝ մի՛ տանջեցէք : Այնպէս եւ տքա մի՛ տանջեցեն առաջի Քրիստոսի. այլ ընկալցին զանապական պսակն ըստ նմանութեան մարտիրոսական զաստից. եւ թագութիւն մեզաց արասցէ՛ սոցա Տէր Աստուած Յիսուս Քրիստոս. ամէն : Եւ այս էր յ844 թուականիս մերոյ :

Այլ ի քահանայէս յայսմանէ ծնաւ մանուկ մի Յովհաննէս անուն, եւ. սիրեցեալ եղև յաչս ամենայուն՝ հաւատացելոցն և անհաւատից. և եղին զնա ձեռնաւոր քաղաքին և երկրին հրամանատու : Բայց չար սերմանցն չար լինի երկրագործութիւն, և չար ուսուցչացն չար լինի ուսումն նոցա : Զի հայր սորա տուեալ էր զդուստր իւր առն միում՝ Սուրատ անուն. և սա տուեալ էր զքոյր փեսային ի կնութիւն ինքեան : Այս առաջին վնասն էր. և երկրորդ՝ զի ծնեալն ի կնոջէն յայնմանէ Բաղշաշիշ անուն՝ կայր ի գործս անպարկեշտս. և խրատեալ ի սիրելեաց իւրոց Վեղենայ անուն, և նա հանեալ զսուրն իւր

ինցեալ ապան զնա. և դառն ագով եղբարցն իւրոց եղին ի գերեզմանի : Եւ մեք աղօթս և պատարագս մատուցաք թերեւս թողութիւն մեղաց գտցէ. և նա ոչ զղջացաւ ի գործս իւր : Դարձեալ մայր տրա մեռեալ. և հայրն երթեալ առնու զհօրեղբօր իւրոյ կնոջ քուեր զուտարն. և կեցեալ տակաւ առուրբ՝ մեռանի ևս կինն այն. և նա ոչ ապաշխարեաց ըզ մեղս իւր : Եւ դարձեալ էառ յետոյ այլ կին և ոչ էառ յանձն ապաշխարութիւն վասն քաւութեան մեղաց իւրոց այլ կայր ցոխութեամբ բազում ժամանակս :

Դարձեալ էր տրա հօրեղբօր որդի մի Յովհաննէս անուն. և եւ զզուտար մանկան միոջ Ղրիմպէկ անուն. և զքոյր նորա առեալ քուեր որդւոյ իւրոյ : Եւ մանուկն այն տկարացաւ ցաւօք դառնագունիւք. և գնաց ի տուրբ ուխտն Գաղտոն և այլ ոչ դարձաւ. Եւ մայր տրա ի ճգնութիւնս և յաղօթս կայր հանապազօր. և եղբայր իւր ոչ գթացաւ ի նա : Դարձեալ վիշապն առատոյ շարժեաց զտուն իւր այսինքն կամեցաւ հարսանիս առնել որդւոյ իւր. երթեալ առնու զքուեր զուտար փեսային հօրեղբօր որդւոյ իւրոյ, յորմէ զմիւս քոյրն առեալ էր քուեր որդին իւր : Եւ մեք զէմ յանդիման քարոզելով խրատեցաք, և նա ոչ հնազանդեցաւ. այլ և երկոցս և չորիցս նամակ օրհնութեան գրեցաք, և նա անտես արար . այլ իրև խնամուն զարգանն որ մնաւ ի

մայրն Եւայ և խաբեայ զնա. և երթեալ մտանէ ի հոգևոր առաջնորդս և ի վարդապետս եկեղեցւոյ։ Եւ հրամանաւ նոցա առնու հարսն որդւոյ իւրոյ ըզ դուստր տանուտրոջ մի՝ Ասլան անուն վասն աղա՝ հութեան ախտից խաչիւ և պատարագօք զհաշտա՝ րարն Քրիստոս բարեխօս ունելով առ Հայրն կամե՝ ցան յանցանօք պատուիրանայն բարիս առնել թողուլ զհրամանս (Հայրապետաց) և Լուսաւորչին. և ընդդէմ կանոնաց նոցա կալ անհնազանդութեամբ իւրեանց՝ բարեաւն չար կամեցան առնել ընդդէմ Քրիստոսի կամացն. և ներողութիւնն Աստուծոյ ներեաց ամ մի։

Բայց յերկրորդ ամին կինն այն ծնանէր որդի, և եղև պատուհաս բարկութեանն Աստուծոյ ի վերայ նորա. զոչէր և աղաղակէր անմեղն և ասէր «ծնո՝ ղաց իմոց յանցանքն մատնեցին զիս ի ձեռս զիւաց. օգնեա՛ ինձ արարիչ Աստուած՝ և մի թողուր զիս ի ձեռաց»։ Եւ եկեալ բազմութիւն քահանայից և ժողովրդեանն՝ առեալ խաչ և աւետարան. և աղօթս արարեալ ի վերայ նորա, ոչ եղև նմա բժշկութիւն և ոչ հանդիստ խռովութեան դառն ցաւոց տարաբնեալ ի դիւթս և ի կախարդս։ Եւ նորա երթեալ փորեցին զգլուխ փոսցին աղտեղին և թաղեցին մինչ ի պա՝ ռանոցն, և սուր առեալ ի ձեռս իւրեանց աղաղա՝ կէին և հարկանէին զերկիր և ասէին «ա՛լ չար դև՝ ի

կնոջէս յայտնեմ» : Եւ բացեալ այլազգեացն զբ բերանս զրամելի և լայի կնոջն՝ որով ահաբեկ առնէին. և ամենայն բազմութիւն քաղաքին հաւատացելոց և անհաւատից եկեալ տեսանէին հերարձակ և զրամելի դիմօք կին մարդ ի մէջ հրապարակին : Եւ որպէս ուրախ եղեն ի յանցաւոր ուրախութեանն, այնպէս անուրախ եղեն ի տառապանս զրքատին զրամելոյ : Եւ ո՞վ կարէ պատմել զզիտզրամ կսկիծ եղկելի զրքատին ի մէջ հանդիսական տեսնին, զոր տեսողք և լսողք լալով և զրքալով պատմեցին մեզ. և կացեալ տակաւ տուրբ՝ առանձեաց զհոգին. զոր խնդրեմք ի բարերար Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ ի բոլոր սրտէ թողցէ զյանցանս նորա բարեխօսութեամբ ամենայն սրբոց զի ոչ կամաւ էր մեղանչական, այլ ակամայ :

Բայց ծնողաց իւր մեղադրութիւն եւս և ձեռնադրին և թոյլ տուող առաջնորդին և խարդիկ սրեզայիցն, որ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս թողութիւն արասցէ նոցա յայսմ աշխարհիս, և ի հանդերձեալ առեսին Քրիստոսի ազաչանօք սուրբ Աստուածածնին : Բայց ազաչեմ՝ զլերջին եղբարդ որ դայք զհետ՝ եպիսկոպոսք և վարդապետք, երես ի դեսին դնելով և հոգացեալ մարմնով՝ այս սուտ և անցաւոր կենացս համար մի նենդէք ի սէրն եղբայրական. զի ամենայն որ առէ զեղբայր իւր՝ մարդաս-

պան է. և սիրելի եղբայրական ծնանի սէրն աստուածական. և որ ոչ ունի սէր աստուածական ոչ կարէ վիճարիլ յԱստուծն պետական. զոր եւ հաստատմամբ արտիւ և ճշմարիտ հաւատով մաղթեմք ի Քրիստոսէ զի եղբարցն մերոց թողցէ զյանցանս որ ինչ ինձ գտեալ կան մեղանչական, զի և ինձ թողցէ զյանցանս որ ինչ առ Աստուած և առ եղբարս մեղանչական եղեալ եմ՝ յամենայն կեանս իմ։ Վայ զիս։

Իսկ յետ երից ամաց անցելոց եկեալ ձեռնաւորն ասացեալ ժողովոց զինքեր (43), զատապետաց, զքաղցեալ և զմերկացեալ զմեր ժողովուրդս Քաղբերտունեաց բերին ի յԱրճէշ և եառն ի ձեռս անօրինաց. եւ յամենայն զլոյս պահանջէին 540 թանկայ ի կալէ եւ ի կուրէ, ի ծերոց եւ ի տղայոց. եւ այնպիսիք են որ դրամի մեջ տէր ոչ էին։

Ի յ887 թուականին թագաւորն Վրաց Աշէրան անուն՝ զեղ մահու եւ իշխանին Պեղդինի (44). որդոյն Սմբատայ Օրբէլեանց (45), թոռին Բուրթելի, որ էր աներ խր. վասն զի առեալ զամենայն կողմն Սիւնեաց եւ զամենայն գաւառս շրջակայ մերձ ի Սիւնիս առեալ քան զ60,000 քրիստոնեայս տուն, եւ ազատեալ ի Թահ-Ռուհէն Վրաց։ Եւ թագաւորն առ երեսս պատուեալ զնա ասց նմա զդղեակն Լօռու։ Իսկ նա բարեպաշտ եւ երկիւղած զոլով, սի-

լոյ կարգաւորոյց, ողորմած եւ ողբոտասէր առ ամենեսեան՝ ձայն տուեալ առ նա ժողովէին : Եւ նա զամենեսեան պատուէր եւ մեծարէր հայրով եւ սեզանով եւ հանդերձով զամենայն զվարեալս առ նա յազգէս Հայոց : Իսկ արեանարբու զազանն եւ անզութն երկուչեալ ի նմանէ սին եւ անուտի կարծեաց զի մի Հայք առ նա ժողովեցին եւ աւերումն մինի կոչման Վրաց՝ մանաւանդ ի նենգութենէ չար իշխանացն, որպէս ի սկզբանէ նախանձու եւ առեւլութեամբ կորուսին զամենայն ազգս Հայոց, զազգնի զեղ մահու տան ի յայր մի Սմբատին անուն յազգէս Հայոց խոստանալով նմա մեծամեծ պարգեւս :

Եւ անօրէն, արեանարբու Կայէնն առաւել սիրեաց զնենգութիւն և զազգն քաղկեդոնական քան զաստուածապաշտ եւ զբարեբարն ազգիս ուղղափառան և ճշմարիտ հաւատացեալն. տայ նմա յանպատրաստից զեղ մահու ի ժամ կերակրոյն : Եւ նորա խմացեալ՝ զզեղիթափ խնդրեալ եւ ոչ ինչ օգտեալ՝ առանձեաց զՀոգին ի ձեռս հրեշտակաց. և տարեալ եդին առ հայրն իւր Սմբատ եւ եղբայր իւր Ստեփաննոս՝ եպիսկոպոս տերբ ուխտին Տաթեւու, որ հանդուցեալ էին ի կոչմն Վրաց փախստեամբ ի յայլազգեաց : Եւ տուգ մեծ եղև ամենայն ազգիս Հայոց եւ յուսահատութիւն ամենայն մերոյին ա-

զանց վասն զի ճիւռ մի կայր ի մէջ ոլորուցս և տասը մի՝ ի խաւար գիշերի և տեղիք ապաւինի ամենայն քրիստոնէից ազգիս : Եւ մնաց նմա եղբայր մի Շահ անուն՝ վարժեալ և սնեալ առ որսայնամոլ ազգին Վրաց : Եւ անարի գտեալ եւ ոչ ի խնդիր եղեալ հայրենի գաւառին : Եւ որդի մի փոքրիկ 10 ամաց աւելի եւ կամ պակաս. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, եւ թողութիւն մեղաց արասցէ նմա Քրիստոս Աստուած զի ըստ նմանութեան Աբելի մեռաւ ի դաւաղ եղբարց եւ նահատակեալ ի սուտ եղբարց :

Եւ իշխանք նորա վրէժխնդիր եղեն անօրէն Սմայնադնին ծայրակատար արարեալ յոտից և ի մատանց. եւ ոչ կարացին ի խոտ ածել զառուղն մահաբեր դեղոյն որ եհան զիշխանն մեր ի կենաց : Եւ ողորմածն Աստուած ներեաց նմա ամ՝ մի. եւ յերկրորդ ամին 888 թուականին զարդար դատաստան իւր ի գործ էած, այսինքն է եհար զանիրաւն և զարեանարրու թագաւորն ի գոգս ատամիկ եւ դառն հարուածով, որ յամենայն աւուր մեռանէր և նոր կենդանանայր. վայ եւ եղուկ գոչէր անձին իւրոյ, հաքիմնա (46) եւ բժիշկ ժողովէր, եւ ցաւն ատամիկ զօրանայր ի վերայ նորին : Եւ զարձեալ ի միւս ամին 889 թուականին բարկացաւ Աբարիչն Աստուած ի վերայ մերոյին ազգիս եւ ի վերայ չար թագաւորին եւ աշխարհի նոցին : Զի թագաւորն Թարիզու եւ բանաւոր իշ-

խանն Զահան-Շահ անուն զօր ժողովեաց, զունդս կազմեաց, եւ զչար առաջնորդն Սրատիլու եւ զամենայն դատի եւ զնուռատիս առեալ եկն ի վերայ տանն Վրաց. եւ բազում անգամ զեսպան առաքեաց զալ նմա ի հնազանդութիւն եւ զսովորական հարկն տալ նմա : Եւ նա ոչ կամեցաւ. այլ խառնութեամբ պատասխանեալ ընդդէմ նորա :

Եւ զայրացեալ եկն ի վերայ բազմութեամբ անթիւ զօրօք յաւուր մեծի Զատկին յանկարծակի եւ յանպատրաստ ժամու. և զանկեալս ի ձեռս իւրեանց գերեցին և զմեծամեծս ապանին. և խաբեալ տարեալ նոսան ի վերայ ամենայն Շամշուլոյ քաղաքին : Եւ մինչ ի Պենտեկոստէի օր գալստեան Հոգւոյն սրբոյ առին զՇամշուլոյ խարէութեամբ և երկիւղիւ. 1,664 մարդոյ զլուխ ի դուռն քաղաքին միւսոյ շինեցին, և 9,400 գերի առին թո՛ղ զայնս որ ի յանտառաց և ի մայրաւանսն յաղթուսակեցին : Եւ 60 այր և սրբազան ոգի ի կարգաւորաց քահանայից երէց և սարգաց և իշխան իրրեւ զոչխար ի դուռն քաղաքին զենեցին, և զամանց զլուխն ի չորս բաժանեցին, և զամանց զլուխն ջախջախեցին, զամանս ի հաւատոցն հանեալ ապանանէին, զոր քա՛ւ լիցի Աստուծոյ նոցա զայն ի մեզս համարել և զչնորհս աստուծոյն և զանապական սրինն կորուսանել :

Աստ էր տեսանել զաղէտ տարակուսանաց քրիս-

տասական դնդին. զի քաջքն և արիքն արտաքնեալ դատանէին զՔրիստոս ճշմարիտ Աստուած ահագին գոչմամբ ի մէջ բազմութեան տառնոյական գընդին. եւ երեսք նոցա փայլէին, իբրեւ զերեսս հրեշտակաց երեւէին ըստ նմանութեան արքայն Սուփանոսի նախաւկային : Եւ ո՞վ կարէ պատմել զբ բօթ տարակուսանաց եւ զկսկիծ մորմոքման տառապեալ հայկազեան սերնդոյ : Սուրբքն եւ Սքարիչն Աստուած միայն կարէ գիտել որ ստեղծ գնոցա . զի հայրն աղաղակէր առ որդին. վա՛յ ո՛րդի՝ և որդին առ հայրն գոչէր լալագին արտասուանօք. վա՛յ զիս հա՛յր՝ մայրն առ դուստրն հայէր, եւ զարտասուն զեռորէն ինչուցանէր : Եւ երկիր եւ աշխարհ ամենայն լցաւ զերեսօք, լալով, սրով եւ կոծով, մանաւանդ միջատահման դաշտս մեր հայրենի. զի ամենեքեան փախուցեալք էին և անդ երթեալք. այնպիսի փորձանաց եւ արդարութիւն զիպեցան :

Այլ ի Սար եւ ի Խորասան, ի Պարսատ եւ ի Տանկատան եւ յամենայն երկիր ցրուեալ ցնդեցան աղերս յղելով եւ զգերին ծանր գնով վաճառելով. եւ զայսպիսի կորուստ մեր արարծանս անձանց համարէին եւ ասէին բարձր ձայնիւ. ո՞ւր է Քրիստոս Աստուածն նոցին. թո՛ղ գայ եւ փրկեսցէ զհաւատացեալս իւր : Այլ վա՛յ եւ երա՛ւք է թանձ հաղար անգամ ի մի բերան. զի զոր անդթութեան մեղայն

ի զատաստանի աւուրն այսօր ի քաղաքիս մեր տե-
սաք. զի ամենայն գերին ի 1,000 թանկագ վաճա-
ռէին. եւ այնքան յաղքատութիւն անկեալ կամք
ամենայն ազգս, քաղաք եւ գիւղք, վանք եւ ազա-
րակ զի մին քաղաք եւ մին գիւղ գերի մի գնել ոչ
կարէ վասն զսուն աղքատութեան տառապանաց.
այլ տուգ եւ ողբ ի բերան առեալ՝ աղիողորմ զատ-
նութեամբ եւ ըսկսին հեծեծանօք լամբ եւ ողբամբ
զկորուստ մեր. զի անմեղ մանկունք գնեալ արեամբ
Քրիստոսի, ժողովուրդ, տուրք զատինք եւ անարատ
հարսունք մատնեալ անօրինաց՝ խաղտ կորեան.
եւ ոչ ոք էր որ օգնէր, եւ ոչ որ ի թիկունս հասանէր։

Այլ անտի չուեալ գնացին ի վերայ Տիգիս փայ-
տակարան քաղաքին, եւ զամենայն եկեղեցիսն հին
եւ նոր, չինեալ ի յառաջին թագաւորացն, ի հիմանց
տապալեցին, զնշան Տեառն ի վայր արկանէին, եւ
հանեալ զտուրս իւրեանց ի վերայ եկեղեցեացն տա-
բածանէին ահագին գոչմամբ եւ սատիկ գոռմամբ։
Մինչ զի յահէ եւ յերկիւղէ նոցա տարսէր եւ դողայր
ամենայն լեռնականք եւ դաշտականք. եւ տուր ի
ձեռին արիք եւ անարիք եւ Ջոկատանք մատնէին ի
մայրիսն եւ ի ծերպս եւ ի ծակս վիմաց։ Եւ զկին
եւ զորդիս նոցա հանեալ անտի՝ գերի վարէին ի բա-
զում աւուրս։ Եւ անարի եւ որոշեալ, արքեցող
եւ ապաստակեր ազգն Վրաց, որ հանապազ ի

դիներրուս նատեալ պարծէին յաղթող լինել ի վերայ ամենայն ազգայ, նեռիւ միով մարդ մի խոցել ոչ կարացին. այլ տեսեալ զմանս ի մէջ պրակի՝ զաղտագողի առ միմեանս ահիւ եւ դողութեամբ ասէին «ահա Թուրման, ահա Թուրման» : Եւ ահա ինքեանք մաղապուրծ եղեալ՝ զորդիս իւրեանց ի ձեռս անօրինացն մատնէին : Եւ ուստի մեք հանապազ յոյս ի Վրացիսն ունելով պարծէաք ի մէջ անօրինաց, յայնմանէ յուսահատեալ՝ առաջի անօրինաց ամիրեան եղաք : Կատարեցաք զբան մարգարէին որ ասէ «անիծե՛ալ մարդ, որ դիցէ զյոյս իւր ի մարդ». «եւ մի յուսոյք յիշխանս զի ոչ գոյ փրկութիւն» : Եւ այլ օգնական ոչ գոյ մեր բայց միայն Տէր Յիսուս Քրիստոս, որ եդ զանձն ի վերայ սուրբ եկեղեցւոյս իւրոյ խաչիւ եւ չարչարանօք :

Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց, մանաւանդ վասն հայհոյութեան յիշոցաւաց եւ վասն ծուլութեան, անտրօթ կալոյն եւ տեղութեան եւ անտէր գոլոյն առ ամենեսեան եւ անուղղայ քահանայութեան :

Եւ պիղծ բռնաւորն դարձեալ կոչեաց առ ինքն զչար առաջնորդս հաւատոյն իւրոյ եւ ասէր «եթէ այլ որ յաւաջին թագաւորացն մերոց զայսպիսի բարի գործս եւ արիութիւն գործեա՞լ էին» : Եւ նոքա ասեն «ոչ՝ զուր առաւել բան զիլոպարիէրն

պատուոյ եւ փառաց էք արժանի» : Եւ ասէ պիղծ
հէին Սրտաւիրս «զինչ չարիք որ գործեալ էիք,
եթող Աստուած, եւ եօթն տարւոյ, զոր ինչ գործ-
ծէք, թողեալ լիցի. բայց խրատս մի տամ քեզ եթէ
զառաջնորդն մեր հայհոյեցին նոքա՝ կունտ եւ քաշալ
անուն տային, հաւրկ եւ խարամ դիր ի վերայ ամե-
նայն քրիստոնէից զի ուրանան զՅիսուս Քրիստոս
եւ դարձցին դոքա յօրէնս մեր» : Եւ նոքա եղին
խարամ եւ հարկս մեծամեծս ի վերայ ամենայն ազ-
գիս թերեւս վասն բազում նեղութեանց դարձցին ի
կրօնս մեր, զոր Տէր Յիսուս վաղվաղակի բառնայ ըզ
սուտս ի միջոյ, եւ զատատան ուղիղ արասցէ ընդ
մեզ եւ ընդ սոքա, (որք) ամենեւին կորուսին զազ-
գըս իւր : Ութ հարիւր ամն (47) Հայոց լիցի օգնական
և կորուցէ զնոսա որպէս զԳոգ եւ զՄագոգ եւ ըզ
Հռափակ եւ զՍենեքերիմ՝ եւ զամենայն չար թա-
գաւորս աշխարհաց : Զի որ ընդհարցի ընդ միմին
Քրիստոսի՝ փշրեսցի սատ եւ փշրեսցի ի հանդեր-
ձեալն ազգօք եւ ամենայն ժողովրդօք : Եւ բարձրա-
ցուսցէ զեղջիւր թագաւորաց Քրիստոնէից բարե-
խօսութեամբ արքունոյ Աստուածածնին և ամենայն
արքոց երկնաւորաց և երկրաւորաց, մանաւանդ նոր
եւ ընտրեալ մարտիրոսաց, քաջ եւ արի նահատա-
կացն հեղմամբն արեանց Թադէոսի ուղղափառի քա-
ղաքակցաց : Եւ ի ձեռն սոցին բարեխօսութեան եւ

մաղթանաց Տէր Յիսուս Քրիստոս արա մեզ եւ ծնողաց մերոց եւ հարազատաց եւ ամենայն հայկազեան սեռիս կարգաւորաց եւ աշխարհականաց եւ ամենայն քրիստոնէից. ամէն ։

ՎԵՐՋ



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԹՈՎՄԱՅԻ ՄԵԾՈՒԵՑԻՈՅ։

1. Լանկ է բառ Պարսիկ առ որս գրի լէնկ եւ նշանակէ կաղ։ Պարաք եւ այլ արեւելեայք կարդան զնա Թիմուր-Լէնկ, Թիմուր-Բէկ կամ Էմիր-Թիմուր (Թեմուր՝ երկաթ), Եւրոպացիք՝ Թամերլան, եւ Հայք՝ Լանկ-Թամուր։

2. Անհիմն է ըստ ամենայնի բան Թովմայի որ համարի զԼանկ-Թամուր ծնեալ ի Հայս, ի Սարթաւի առ սահմանօք Մասեաց։ Բռնաւորս այս ծնաւ ի Կէշ Մալարանտահրի ոչ հեռի ի Սմրղանդայ, յամի Տեառն 1335, եւ Հիջրեթի 736. եւ մեռաւ ի 1405 ամին։ Էր ի սերնդոյ Ջինկիզ-Խանի ի կանանց կողմանէ։ Իրրեւ մեռաւ Սէրֆ-Էդդին՝ հօրեղբայր իւր, յամին 1360, ինքն անց ի գլուխ Բերլան՝ ցեղին Թաթարաց. եւ երեք ամօք զկնի միաբանեալ ընդ Հաւէյնի ընկէց զորդին Թողլուկ-Թիմուր Զաղաթայի եւ խոցեալ յառս կոչեցաւ լանկ։ Վեց ամօք զկնի զՀաւէյին եւս ընկեցեալ յիշխանութենէ ինքն միայնակ եկաց Տէր Բահլի եւ փոխադրեաց զթագաւորութիւն իւր ի Սմրղանդ յամին 1370։ Ամսի ամիսաւ առ ամսաւ ընդարձակեալ ձգեաց զտէրութիւն իւր եւ

կալաւ զԽարիզմ, զԿաշգար, զԽոտան, զՊարսկաստան եւ այլն :

3. Է բան Թամբարայ, նշանակէ իշխան, արքայ:

4. Երրորդն յօրինակայ Սրբոյն Ղազարու ութսուն ունէր 510. մերն՝ լոկ հնգետասան. մեր եղաք ըստ օրինակի կայսերական գրատանն 515 :

5. Տահ-Մանսուր էր ի Մօղաֆֆերեան ցեղէ (Մօղաֆֆեր), որ տիրեցին ամս իրրեւ 50 Ֆարսխատանի եւ Գուշատանի. յոյժ քաջութեամբ մարտեաւ ընդդէմ բռնաւորին Թամուրայ երկիցս խորտակեալ զբանակ Թամբարայն, եւ ի վերջոյ յաղթեալ ի բազմութենէն՝ անկաւ. եւ բոլոր Պարսկաստան նուաճեցաւ ընդ լծոյ բռնաւորին յամի Տեառն 1393 :

6. Սոյն ամենայն օրինակք « ի ձի երիւարին » :

7. Հանար զօրու Տահ-Մանսուրին, ըստ ասանդելոյ պատմագրաց Պարսից էր 3-4,000 այրուձի ընտիր :

8. Սովորդ կրկնութիւն է վարքն զանկ եւ կաղ բառն. քանզի, որպէս ասացաւն ի վերայ, էնին պարսկերէն է եւ թարգմանի ի մեր լեզու կաղ :

9. Երրորդ եւ չորրորդ օրինակք Սրբոյն Ղազարու ունէին « որ Տօղաօղան անուն կոչէին » :

10. Զորեքին օրինակք Սրբոյն Ղազարու ունէին

«յորում» զոր վրիպակ համարեալ եդաք ըստ մերոյն որ ։

11. Ոմանք յանուանց ուրթն կարծեցեալ ցեղից Վրաց ասոյդ են եւ կան ցարդ եւս. այլք խանգնարեալ են եւ անասոյդ ։ Վրացիք, Մինգրէլք (զոր Մեծոբեցին գրէ Մէգրել) և Իմերելք են տիրապէս համազգի. այլ ոչ Օսք զորս համարեցան ոմանք ճեացորդս հին Սարմատաց, այլք՝ հատուածս Մեդաց և Հայոց, կէսք՝ Սլանս կամ Աս միջին դարու։ Դրալանուամբ, որչափ եւ խոյզ արարի, չէք ցեղ կամ ժողովուրդ ի լերինս Կովկասու, եթէ չիցէ աղաւաղութիւն Դվալի յանուն որոց կոչէր ի հնումն կապանն Դարիէլի ։ Սփիւռքք կամ Սրաքք չեն յայդէ Վրաց, այլ որիշ եւ հինօրեայ բնակիչք Կովկասու ունելով բարբառ եւ բարս սեպհական, եւ ծանօթ Սրրիենի եւ այլ մատենագրաց Հռոմայեցւոց եւ Յունաց յ2,000 ամաց հետէ ։ Սապէս եւ Սանք, զորս նախնի մատենագիրք կոչէին Սաննի, եւ արդիք՝ Սուանս ։ Մնայ Մեսխն որ համարի այլազգութիւն արդեան Մեծ Ղեզի (Մէճղէզ), որ է նոյնպէս առանձին ժողովուրդ Կովկասու կոչեցեալ ի մերոց մատենագրաց Գուռ, ի Վրաց՝ Գիտ, եւ ի Ռուսաց՝ Զեչեն ։

12. Մերն «խիպչեց» նշանակէ զդեցուցանել ուներ պատուոյ հանդերձ ։

13. Օրինակն կայսերական գրատան «ի ժողովատար»։

14. Զարութիւն հայ դիցազնուհւոյն ոչ երկաթագրով. այլ ոսկի տառիւք գրոշմելի էր և ամէն հայ կանանց բաշխելի իբրև օրինակ նմանութեան. որոյ նմանն ոչ առ Յոյնս, ոչ առ Հռոմայեցիս եւ ոչ յայլ ամենայն ազգս գործեցաւ երբէք։ Հայ դիցազնուհին մեռաւ, այո՛, այլ մահ իւր փառք է ազգի մերում. գահավէժ արար զինքն, այո՛, այլ ամբիծ պահեաց զպատիւ իւր, զկրօն եւ զազգայնութիւն։ Որչափ երջանիկ լինէր ապաքէն Հայաստան, եթէ մին ի հարիւր որդւոց իւրոց և երիւք ի հազար դստերց իւրոց զնոյն բերէին յանձինս իւրեանց զառաքինութիւն, որով փայլեցաւ Մշեցի քաջուհին։

15. Թահ-Ռուքն է այլայլութիւն Թահ-Ռօքին՝ որդւոյ Լանկ-Թամուրի, որ առ կենդանութեամբ հօրն եկաց կուսակալ Խորասանի. և յետ մահուն նորա կայսերացեալ ի Սմրղանդ յամի Տեառն 1408՝ հանդիսացաւ աշխարհաշինութեամբ, ուսումնասիրութեամբ եւ բարեխնամ տնտեսութեամբ իւրոյ տէրութեան։ Մեռաւ յամին 1446. որում յաջորդեաց Ուլուկ-Բէգ՝ որդի իւր։

16. Մեծոքեցին անխախտ վարէ «վա՛յ ինձ եւ վա՛յ զիս»։

17. Զորրորդ օրինակն Սրբոյն Ղազարու «գարշութեամբ հոտոյ» :

18. Զանիծիս մեծին Ներսիսի Պարթեւի գրեալ եմք ընդարձակագոյնս ի վարս Խաչատուր վարդապետի՝ միաբանի տուրբ Կարապետի վանքին Իւշքիլիսէի, որ ի սկզբան դարուս երեւելի հանդիսացաւ սրբակրօն վարուք, մանաւանդ՝ գովանի քաջութեամբ ի պատերազմունս ընդդէմ Քրդաց եւ Պարսից. եւ ի վերջոյ դաւանօք կալեալ ի խանէն Երեւանայ՝ տարաւ սմա 7 տսկալի տանջանաց եւ հանգեաւ ի Քրիստոս խոստովանողական մահուամբ:

19. Զորեքին օրինակք Սրբոյն Ղազարու «ի տուրբ ուխտն եւ ի շնորհալից ուխտ եւ յաթոռ Ստեփէի Ստեփանոսի» :

20. Ա, Բ և Գ. օրինակք Սրբոյն Ղազարու «սմանչեցուցանէր» :

21. Ա. օրին. Սրբոյն Ղազարու «առաջի հայրապետին» :

22. Զորեքին օրին. Սրբոյն Ղազարու «վարդապետս եկեղեցւոյ» :

23. Զորեքին օրին. Սրբոյն Ղազարու «անմեղութար» :

24. Մերսին ոչ առաւ յայսմ նուադի ի Լանկթամուրայ : Իսա-Թահեր՝ իշխան բերդին, որ էր ի յեղէն Օրթուկայ, քաջութեամբ դիմադրաւ եղեալ

վանեաց զյարձակմունս Թամբուրայ. և ապա ի հաշտութիւն եկեալ խոստացաւ տալ հարկս Լանկ-Թամուրայ եթէ ի բայ երթիցէ խաղաղութեամբ. որպէս եւ ազատեցան պաշարեալքն ի բերդին Քրիստոնեայք և Մահմետականք :

25. Զորեքին օրին. Սրբոյն Ղազարու «700 և 500»:

26. Զորեքին օրինակք Սրբոյն Ղազարու լոկ «խաբ արար»:

27. Զորեքին օրինակք Սրբոյն Ղազարու «երանութեամբ»:

28. Թուականն 850, որպէս վարի Մեծոբեցին ի ցուցանել զսկիզբն արշաւանաց Լանկ-Թամուրայ յԱսիա, տարեաց երկու ամօք ի ցուցելոյն յայլ պատմագրաց որք դնեն զայն յերս Հոգտեմբերի 1400 ամի Տեառն :

29. Խոնդքեար Իլտրում կոչեցեալն ի Մեծոբեցւոյն է Սուլթան Բայազիտ Իլդրումն (կայծակ) Օսմանցւոց, որոց հաստատեալ զամ՝ առ Իշխանութեան իւրեանց ի Բրուսա՝ ունէին զիւրքր Ասիա : Ճակատն ընդ մէջ Լանկ-Թամուրայ եւ Բայազիտ Իլդրումի եղեւ յամին 1402 ի սահմանս Անկիւրիոյ յորում յաղթող դտեալ առաջնոյն՝ զերի կալաւ զերիվարդն, և կացոյց ի Ռումելի զանդրանիկ որդին նորա զՄիւէյման Սուլթան Օսմանցւոյ. կալաւ զԱսիա փոքր բովանդակ հանդերձ Զմիւռնի քաղաքաւ

առեալ զայն յասպետայն Ռուզի։ Դեռ դարձ արա-
բեալ Լանկ-Թամուր ի Կոնիա՝ լուաւ զմահ Սուլթան
Բայազիտի յԱկ-Շէհիր յամին 1403. եւ զՄուսա՝
զորդի նորին, հանեալ ի բանտէ կայցոյց ի տեղի հօրն
Սուլթան Օսմանցւոց Ասիական կողմանցն։

30. Մեծոքեցին խանդարէ ասասանօր եւ այլուր
զկարգ աշխարհակալութեանց Լանկ-Թամուրայ։
Վանդի աշխարհաւեր դաղանս այս թագաւորակ
ոչ երկիցս ա՛ռ զՀնդկաստան եւ զԴելհի. այլ միան-
գամ եւ եթ. եւ այն ոչ զկնի կործանելոյ զտէրու-
թիւն Սուլթան Բայազիտի, ըստ Մեծոքեցւոյն,
այլ 6 ամօք յառաջագոյն. այսինքն նախ՝ Լանկ-
Թամուր արշաւեաց ի Ռուսիա կամ յերկիր
Թոխթամիշ խանին Ղպչաղայ յամին 1391 ի մուտս
Յուլիսի. որ յետ տիրելոյ Սարայ մայրաքաղաքին
դարձաւ ի Պարս զսպել զապստամբան։ Ի
1394 ամին ա՛ռ զԲաղդատ, ուր կանգնել էտ կոթող
90,000 գլխոց մարդկան, զԲասրա, զՄօսուլ զԴի-
արբէքիր, զՀայս, զՎիրս. եւ միւսանգամ արշա-
ւեալ ընդ կապանն Դարբանդի յերկիր Ղպչաղայ
յամին 1395՝ եհար զԹոխթամիշ եւ թագաւորեցոյց
զԿորիչայ՝ որդի Ռուսս-Խանին եւ անցեալ ընդ
Դոն ասպատակեաց մինչեւ ի սահմանս Մոսկվայի.
ուստի դարձ արար ի գարնան 1396 ամին ի Սմրղանդ։
Եւ ի 1398 խաղաց ի վերայ Հնդկաց, եւ ճակատս

սատիկ Սէյիսց եւ Ասֆրանից, ի սուր սուսերի մաշեաց զանգէն Գերրս եւ զՀնդիկս, հիմն ի վեր տապալեաց զԴելհի, զՄիլթ եւ զայլ հոյակապ քաղաքս աշխարհին. և յետ ապականելոյ զամենայն գաւառս յայս կոյս Գանգէսի դարձաւ յամին 1399 ի Սմրղանդ :

31. Լանկ-Թամուր ոչ մեռաւ յաշխարհի իւրում, որպէս կարծէ Մեծոբեցին, այլ յՕտրար առ եղբեր Սիհուն գեաց ի սահմանս Զինաց յոթժամ երթայր տալ նոցա պատերազմ, յամին 1405 :

32. Առաջին եւ չորրորդ օրինակը Սրբոյն Ղազարու «խառապակ». երկրորդն եւ երրորդն «հրառապակ» :

33. Եթէ չիցէ անուն յատուկ, որպէս կոչէր մին ի գաւառաց այնր նահանգի. ընթեռնի է խիզան որ նշանակէ ընտանիք, գերդաստան :

34. Առաջին յօրինակաց Սրբոյն Ղազարու «67» :

35. Զորեքին օրինակք Սրբոյն Ղազարու «այլ ի Թաւրէզ քաղաք կերեալ էին անդ» որ չընծայէ իմաստ ինչ :

36. Զորեքին օրինակք Սրբոյն Ղազարու «որ այժմ կենդանի հա ազգս նման» :

37. Մեր օրինակն «նեռաձիգ» որ թերեւս ուղղագոյն համարելի էր. այլ վայելուչ վարկաք զհետ երթալ չորից օրինակացն Սրբոյն Ղազարու :

38. Ա. եւ Դ. օրինակը Սրբոյն Ղազարու «Ի քաղաքն Ի քարն Ամիու» :

39. Դ. օրինակն Սրբոյն Ղազարու «Գերիշատ» :

40. Բահրայ ասի Ի Հայաստան տասանորդն արմրուեայց. չարէք՝ չորրորդ մասն բերոյ երկրի :

41. Ա, Բ եւ Դ. օրինակը Սրբոյն Ղազարու «անտերունչս» :

42. Զորեքին օրինակը Սրբոյն Ղազարու «լյուցին». մեր ընթերցուածն ուղղագոյն թուի :

43. Զորեքին օրինակը Սրբոյն Ղազարու «ժողովրդոց զմինչ որ» :

44. Զորեքին օրինակը Սրբոյն Ղազարու «Պեշզինի» :

45. Զորեքին օրինակը Սրբոյն Ղազարու «Սրբելեանց» :

46. Զորեքին օրինակը Սրբոյն Ղազարու «Հաֆինան» :

47. Զորեքին օրինակը Սրբոյն Ղազարու «ամենայն Հայոց» : Թուականս ուխտն հարիւր եմէ Ի Մեծոքեցւոյն Ի վար արիւալ ԻՅէ, եմէ յօրինակողէն հնարեալ յայտնի վրիպակ է, զոր թէ եւ թողաք որպէս եւ էին. այլ պարտ վարկաք ծանուցանել պատուելի հասարակութեան :

Paris. — Imprimé par E. Thunot et Cᵉ, 26, rue Racine.

ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀԱՅ.-ԽՍՀ